


# ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ  
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ



ՀՀ Հակակոռուպցիոն դատարան. գործառական խնդիրներ և հաղթահարման ուղիներ  
*Հետազոտական զեկույց*

Հեղինակային խումբ.

Սիրանուշ Սահակյան

Մերի Բատիկյան

Ավետիք Մեջլումյան

Չեկույցի ձևավորումը.

Աստղիկ Փիրումյան

*Չեկույցը պատրաստվել է «Արդարադատության բարոմետր. գնահատելով դատական արձագանքը կոռուպցիային» (Justice barometer: Measuring judicial response to corruption) ծրագրի շրջանակներում՝ 2024 թ.:*

*Ծրագիրն իրականացրել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավական ռեսուրսների կենտրոնը, «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, «Նուբար և Աննա Աֆեյան հիմնադրամի» աջակցությամբ:*

# Բովանդակություն

<b>Ներածություն</b> .....	3
<b>Ուսումնասիրության նպատակները և արդյունքները</b> .....	6
<b>Ուսումնասիրության մեթոդաբանությունը</b> .....	8
<b>Գլուխ 1. Հետազոտության իրավական շրջանակը</b> .....	11
1.1 ՀՀ պատժողական քաղաքականությունը կոռուպցիոն հանցագործություններով.....	11
1.2 Ապօրինի գույքի բռնագանձման քաղաքականությունն ու հիմնախնդիրները ՀՀ-ում .....	17
1.3 Հակակոռուպցիոն դատարանում քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունները .....	22
1.4 Կոռուպցիոն հանցագործություններով քրեական գործերի քննության առանձնահատկությունները ՀՀ-ում .....	27
1.5 Հակակոռուպցիոն դատարանի վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման հետ կապված խնդիրները .....	31
<b>Գլուխ 2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը</b> .....	35
2.1 Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում. պատմական ակնարկ.....	35
2.2 ՀՀ հակակոռուպցիոն մարմինները.....	37
2.3 Հակակոռուպցիոն դատարանի ձևավորումն ու գործունեության իրավական հիմքերը .....	39
2.4 Հակակոռուպցիոն դատարանների դատավորների բարեվարքությունը .....	47
<b>Գլուխ 3. Հետազոտության արդյունքներ</b> .....	51
3.1 Հակակոռուպցիոն դատարանի գործունեության և դատական ակտերի որակական ուսումնասիրության արդյունքներ.....	51
3.2 Դատական ակտերի քանակական հետազոտության արդյունքներ .....	68
<b>Եզրահանգումներ</b> .....	85
<b>Առաջարկություններ</b> .....	88

## Ներածություն

Դատական համակարգի արդյունավետ կառավարման և դատավորների առաջնորդության զարգացման համար առանցքային է արդարադատության փաստահեն քաղաքականությունը՝ որոշումների այնպիսի ընդունումը, որ հիմնվում է արժանահավատ փաստերի վրա: Այդ փաստերը պետք է լինեն հնարավորինս չափելի և ստուգելի, հավաքված լինեն վստահելի մեթոդներով:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի գործունեության այս ուսումնասիրությանը միտված է լրացնելու արդարադատության փաստահեն քաղաքականության հնարավոր բացերը՝ տրամադրելով խնդիրների վերլուծության նոր դիտանկյուններ և հավելյալ տվյալներ:

### **Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններն ու հանրային մտահոգությունները**

Հայաստանում դատական իշխանությանը վերապահված գործառույթների անարգել իրականացման երաշխավոր է հանդես գալիս Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ): Այն կոչված է երաշխավորելու դատարանների և դատավորների անկախությունը, արդարադատության անարգել իրականացումը:

Թեև ԲԴԽ-ն ունի լայն գործառույթներ, վերջինիս կայացրած տարբեր որոշումներ թե՛ հանրության, թե՛ մասնագիտական հանրույթի մոտ երբեմն առաջ են բերում կասկածներ վերջինիս անկողմնակալության, քաղաքական չեզոքության, որոշումների հիմնավորվածության շուրջ:

Անվստահության պատճառներից հիմնականը կայացված որոշումների ոչ բավարար փաստահեն լինելն է: Հանրության համար ոչ միշտ են տեսանելի ու հասկանալի ոլորտի քաղաքականությունը պայմանավորող հանգամանքները: Օրինակ, հստակ չէ, թե ինչու որոշ դատավորների նկատմամբ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման համար կայացվում են կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ, ընդհուպ մինչև լիազորությունների դադարեցում, մինչդեռ մյուսների նկատմամբ՝ ոչ:

### **Հետազոտական մեթոդների սահմանափակության հիմնախնդիրը**

Դատարանների գործունեության հանրային դիտարկման և անուղղակի վերահսկողության երկու հիմնական եղանակ կա՝ մշտադիտարկում (մոնիտորինգ) և դատական վիճակագրության ու այլ աղբյուրների ուսումնասիրություն:

Առաջին եղանակը լայնորեն կիրառվում է հայաստանյան իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք դրանց հիման վրա զեկույցներ են հրապարակում: Դատական աղբյուրների ու վիճակագրության ուսումնասիրությունը պակաս տարածված է նաև այն պատճառով, որ տվյալները ոչ միշտ են հասանելի կամ՝ ոչ միշտ են ամբողջական:

### **ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի իմպլեմենտացիայի խնդիրները**

2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որն ամբողջությամբ վերանայել է պատժի քաղաքականությունը: Եթե նախկին քրեական օրենսգրքում շեշտադրումը դրված էր ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների վրա, ապա նոր քրեական օրենսգիրքը «փորձում է» անձանց հնարավորինս զերծ պահել քրեակատարողական հիմնարկներից: Նախատեսվել են ազատագրվման այլընտրանք հանդիսացող միջոցներ՝ նոր պատժատեսակներ: Եթե անձն առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցանք, ապա ազատագրվում պատժատեսակ կիրառելի չի:

Տեղի է ունեցել արարքների քրեականացում և ապաքրեականացում: Եթե նախկինում քրեական օրենսգրքի հիմքում դրվում էր միայն արարքի վրա հիմնված պատասխանատվության գործոնը,

այսինքն՝ «արարքի հայեցակարգը», ապա նոր օրենսգրքով նաև շատ կարևորվում է սուբյեկտի հարցը, այսինքն՝ ով է կատարել, ինչ առանձնահատկություններ ունի: Հանցավոր արարքները գնահատելիս շեշտադրումը դրվում է առավել չափելի, կոնկրետ, ոչ թե վերացական չափանիշների վրա:

2021 թ. հունիսին ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որում առկա են բազմաթիվ նորամուծություններ և համալիր կարգավորումներ: Դրանք կոչված են լուծելու քրեական արդարադատության բնագավառում կուտակված վարութային խնդիրները, բարձրացնելու ենթադրյալ հանցանքների քննության ընթացակարգի որակը, ապահովելու քրեական վարույթի իրականացման առավել արդյունավետ կարգի կիրառումը՝ այն զուգորդելով անձի իրավունքների և ազատությունների ուժեղացված պաշտպանության հետ:

Այս հետազոտության տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում օրենսգրքի հետևյալ նորամուծությունները.

- Դատարանին վերապահվել է ավելի մեծ վարութային ինքնուրույնություն, որի պարագայում նա կաշկանդված չէ կողմերի դիրքորոշմամբ և կարող է միջամտել ապացուցման գործընթացին կամ ուղղորդել այն, երբ դա է պահանջում արդարադատության շահը:
- Սահմանվել են դատական ակտերի վերանայման նոր կառուցակարգեր, կատարելագործվել են վերաքննության, վճռաբեկության, հատուկ և բացառիկ վերանայման արդյունավետությունը երաշխավորող իրավական կարգավորումները:

### **ՀՀ հակակոռուպցիոն դատարանի գործունեության շուրջ առկա մտահոգությունները**

2021 թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովն (ԱԺ) ընդունեց հակակոռուպցիոն դատարան ստեղծելու մասին օրենսդրական փաթեթը, որով փոփոխություններ արվեցին «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և այլ օրենքներում: Մասնագիտացված այս դատարանում քննվում են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների (քրեական գործեր) և ապօրինի գույքի բռնագանձման (քաղաքացիական) վերաբերյալ գործեր: Դատարանի ստեղծման օրինագծի հիմնավորման մեջ նշված էր, որ ակնկալվում է ապահովել կոռուպցիոն գործերի մասնագիտացված քննությունը՝ բարձրացնելով կոռուպցիոն գործերի դատաքննության արդյունավետությունը:

Սակայն այս դատարանի ստեղծումն ու գործունեությունը միանշանակորեն դրական չի ընկալվում: Որոշ իրավաբան-փորձագետներ կասկածի տակ են դնում առանձին մասնագիտացված դատարան ունենալու անհրաժեշտությունը՝ նշելով, որ կոռուպցիոն բնույթի գործերը, որոնք ընդհատյա են հակակոռուպցիոն դատարանին, մինչև այս դատարանի ստեղծվելն էլ դատավորների կողմից պատշաճ քննվել են և որևէ առանձնահատկություն չունեն: Պարզ չէ, թե ինչու պետք է կոռուպցիոն հանցագործություններին հատուկ վերաբերմունք ցուցաբերվի, իսկ սպանության, գողության և այլ գործերին՝ ոչ:

2022 թ. հուլիս-օգոստոս ամիսներին նշանակվեցին կոռուպցիոն գործեր քննող դատավորները, և դատարանի աշխատանքը սկսվեց: 2024 թ. նոյեմբերի դրությամբ մասնագիտացված դատարանի առաջին ատյանում աշխատում է 16 դատավոր, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում՝ 12 դատավոր, ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում՝ 10 դատավոր:

Թեև դատարանի ստեղծման հիմնավորման մեջ նշված էր որ դրա կազմում ներգրավվելու են փորձառու մասնագետներ, այն է՝ գործող դատավորներ, նախկին դատավորներ և իրավաբան գիտնականներ, սակայն հակակոռուպցիոն դատարանի առաջին ատյանի 16 դատավորներից միայն մեկն է իր մասնագիտական գործունեությունը՝ որպես դատավոր, սկսել համեմատաբար վաղ՝ 2020 թ.-ից: Մյուս 15 դատավորները մեկ կամ երկու տարվա մասնագիտական փորձ ունեն, այսինքն՝ իրենց գործունեությունը՝ որպես դատավոր, մեկնարկել են հենց Հակակոռուպցիոն դատարանից:

Այս ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է վերը նկարագրված խնդիրներով ու մտահոգություններով.

- Կարիք կա ՀՀ արդարադատության ոլորտի կառավարումն ուղղորդել վստահելի, արժանահավատ տվյալներով: Դրանք, մի կողմից, կարող են հիմք դառնան ԲԴԽ-ի հիմնավորված որոշումների կայացման համար: Մյուս կողմից, այդ տվյալները, հասանելի լինելով հասարակությանը և մասնագիտական հանրույթին, հասկանալի ու կանխատեսելի կդարձնեն ԲԴԽ-ի քաղաքականությունը: Հետազոտությամբ ստացված և շարունակաբար համալրվող բաց տվյալները կապահովեն թափանցիկության բավարար միջավայր բոլոր կողմերի համար՝ թե որոշում կայացնողների, թե դատարանների ու դատավորների, թե փաստաբանների ու փորձագիտական հանրույթի, թե լայն հասարակության: Բոլորին հավասարապես հասանելի տվյալները զսպող ու անկողմնակալություն ապահովող ազդեցություն կունենան ԲԴԽ-ի և կառավարում իրականացնող այլ մարմինների վրա: Տվյալները կօգտագործվեն նաև դատավորների առաջնորդության՝ նրանց խրախուսման և կարիերայի առաջխաղացման մասին որոշումներ կայացնելիս:

- Կարիք կա մշակելու տվյալների հավաքման, մշակման, վերլուծության ու հրապարակման նոր գործիքներ: Ներկայումս տվյալների ստացման հիմնական աղբյուրը «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգն է (Դատալեքս): Այն թույլ է տալիս կատարել դատական գործերի ու նշանակված նիստերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների որոնում, դատական ակտերի դիտում: Համակարգը նաև դատական գործերի քանակներն է ներկայացնում ըստ քրեական օրենսգրքի հոդվածների, մարզերի և ժամանակահատվածների: Բացի այս սակավ վիճակագրական ցուցանիշները, Դատալեքսից այլ չափանիշներով վիճակագրության ստացումն անհնար է: Ուստի անհրաժեշտ է զարգացնել տեղեկատվության հավաքման ու մշակման այնպիսի նորարար համակարգ, որ թույլ կտա տվյալներ գեներացնել բազմաթիվ ու բազմատեսակ ցուցանիշներով:

- Կարիք կա դիտարկելու վերջերս ուժի մեջ մտած ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ազդեցությունը՝ քրեական արդարադատության որակի և պատժի քաղաքականության վրա: Օրենսգրքերի հայեցակարգային փոփոխություններն էական են. թե՛ վարույթների իրականացման, թե՛ պատժի նշանակման նոր մոտեցումներ ու սկզբունքներ են առաջարկում, ներմուծվում են նոր պատժատեսակներ: Ուստի կարևոր է հասկանալ, թե ինչպես են նոր օրենսգրքերը կիրառվում, ինչ բացեր կան այդ գործընթացում:

- Վերջապես, ՀՀ դատական արդարադատության համակարգում մի նոր մարմին է ստեղծվել՝ Հակակոռուպցիոն դատարանը, որի նախադեպը չի եղել ՀՀ պատմության մեջ: Հաշվի առնելով առանձին մասնագիտացված դատարան ունենալու անհրաժեշտության և արդյունավետության շուրջ փորձագետների մտահոգությունները՝ կարիք կա դիտարկելու դրա գործունեությունը: Դատարանի գործունեության վաղ շրջանում (մոտ երկու տարվա գործունեություն) հնարավոր ռիսկերի վերհանումը թույլ կտա կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել:

## **Ուսումնասիրության նպատակները և արդյունքները**

Ուսումնասիրության գլխավոր **նպատակներն էին.**

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քրեական և քաղաքացիական գործերով դատական ակտերի վերլուծության միջոցով գնահատել դատական համակարգի՝ կոռուպցիայի հաղթահարման կատարողականը:
2. Հայտնաբերված խնդիրները հաղթահարելու համար առաջարկել միջոցառումներ՝ միտված արդարադատության ոլորտում փաստահեն քաղաքականության իրականացմանը:

Ուսումնասիրության **խնդիրներն էին.**

1. Վերհանել դատական ակտերի որակի տարածված բացերը:
2. Պարզել պատժի քաղաքականության և վնասի վերականգնման օրինաչափություններն ու հիմնախնդիրները՝ շեշտադրելով պատժի միասնականության խնդիրները:
3. Վերհանել քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառությանն առնչվող հիմնախնդիրները:
4. Նկարագրել գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պրակտիկան և հնարավոր խնդիրները:
5. Բացահայտել դատարանի կողմից նախադեպերի (թե՛ ՄԻԵԴ, թե՛ ՀՀ դատական ատյանների) կիրառության և մեկնաբանության հիմնախնդիրներն ու օրինաչափությունները:
6. Մշակել առաջարկություններ՝ ուղղված.
  - Դատական ակտերի որակի բարելավմանը,
  - Դատական նախադեպերի որակյալ և հիմնավորված կիրառության խթանմանը,
  - Դատարանների / դատավորների գործունեության արդյունավետության և որակի ապահովմանը,
  - Պատժողական քաղաքականության բարելավմանը և պատժի միասնականության ապահովմանը,
  - Քրեական դատավարության նոր օրենսգրքի արդյունավետ կիրառության ապահովմանը:

Ուսումնասիրության **արդյունքում.**

1. Հավաքվել են հարուստ տվյալներ (տվյալների բազաներ)՝ 97 քրեական և 87 քաղաքացիական գործերի վերաբերյալ:
2. Իրականացվել է 12 հարցազրույց ոլորտի փորձագետների՝ փաստաբանների, դատավորների, դատախազների, լրագրողների հետ:
3. Կատարվել է հակակոռուպցիոն դատարանի վերաբերյալ մեդիա հրապարակումների քարտեզագրում և ուսումնասիրություն:
4. Տեսական գրականության և դատական ակտերի վերլուծության, փորձագիտական հարցազրույցների և այլ աղբյուրների համադրության արդյունքում պատրաստվել է սույն հետազոտական զեկույցը, որտեղ.
  - Ներկայացված է հետազոտության յուրահատուկ մեթոդաբանությունը (դատական ակտերի որակական բովանդակության վերածումը՝ քանակական տվյալների), որը կարող է

կիրառվել թե՛ Հայաստանի, թե՛ այլ երկրների դատական ակտերի լայնածավալ ուսումնասիրության համար:

- Կատարված է կոռուպցիոն հանցագործություններով ՀՀ պատժողական քաղաքականության, ապօրինի գույքի բռնագանձման քաղաքականության, քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունների վերլուծությունը:
- Կատարված է ՀՀ հակակոռուպցիոն մարմինների և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի գործառույթների վերլուծությունը, Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման և գործունեության իրավական հիմքերի վերլուծությունը:
- Ներկայացված և վերլուծված են քաղաքացիական և քրեական գործերի վերաբերյալ հարուստ քանակական տվյալներ:
- Ներկայացված են դատական ակտերի որակական ուսումնասիրության արդյունքները:
- Մշակված են ոլորտային քաղաքականության որոշում կայացնողներին ուղղված առաջարկներ:

5. Գործում է Justice Barometer կայքը, որտեղ.

- Ներկայացված են քաղաքացիական և քրեական գործերի վերաբերյալ հարուստ քանակական տվյալներ՝ գծապատկերներ, վիզուալ նյութեր:
- Յուրաքանչյուր օգտվող կարող է առցանց գործիքների օգնությամբ գեներացնել իրեն հետաքրքրող քանակական տվյալները:
- Յուրաքանչյուր օգտվող կարող է արհեստական բանականության առցանց գործիքների օգնությամբ գեներացնել դատական գործերին վերաբերող օրինաչափություններ, միտումներ և տվյալներ:
- Ներկայացված են Հակակոռուպցիոն դատարանի գործունեությանն առնչվող օգտակար նյութեր՝ հետազոտական զեկույցներ, հրապարակումներ, տվյալներ:
- Հավաքված են Հակակոռուպցիոն դատարանի գործունեությանն առնչվող մեդիա հրապարակումներ:
- Տեղադրված է հետազոտական զեկույցը:



## Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Դատական արդարադատությանն առնչվող տեսական գրականությունը, հետազոտություններն ու ակադեմիական հոդվածները բազմաթիվ են: Դրանք քննարկում են արդարադատությունը հնարավոր բոլոր տեսանկյուններից՝ վեր հանելով դրա օրինականության ու անաչառության, արդյունավետության ու թափանցիկության, վերականգնողական գործառույթների և հանցավորության կանխարգելման ու այլ հարցեր: Չնայած խնդիրները դիտարկելու մոտեցումների ու չափանիշների բազմազանությանը, առավել տարածված մեթոդները հիմնականում սրանք են.

- Երկրորդային աղբյուրների (հիմնականում՝ տեսական, ակադեմիական աշխատանքների) վերլուծություն (Desk research),
- Դատարանների գործունեության մշտադիտարկում,
- Հետազոտություններ միջդիսցիպլինար մեթոդներով՝ հանրային կարծիքի հարցումներ, փորձագիտական հարցազրույցներ, ֆոկլոր խմբեր, այլ:

Նշված մեթոդների սահմանափակությունն այն է, որ դրանք գնահատում են արդարադատության որակը՝ հիմնականում ընթացակարգերի պահպանմանը հետևելու միջոցով: Օրինակ, դիտարկվում են այն հարցերը, թե արդյոք դատարանը երաշխավորել է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, արդյոք ներկայացրել ու պարզաբանել է վերջինիս իրավունքները, արդյոք պահպանել է նիստի վարման կանոնները: Սակայն արդարադատության այնպիսի կարևոր վերջնարդյունքը, ինչպիսին դատական ակտն է, զարմանալիորեն վրիպում է հետազոտությունների մեծ մասի ուշադրությունից: Հենց դատական ակտերի բովանդակությանը և որակին վերաբերող ուսումնասիրություններն էականորեն քիչ են:

Դատական ակտերի՝ որպես տեքստերի ֆոկլորացված ուսումնասիրությունը միջազգային պրակտիկայում հազվադեպ հանդիպող մեթոդ է: Այս ուսումնասիրությունն իրականացրած թիմին ևս ծանոթ չէ դատական ակտերի այնպիսի հետազոտություն, որ փորձել է ստանդարտացնել դրանց բովանդակությունը՝ այն մատչելի դարձնելով քանակական վերլուծության համար:

Այդ առումով, այս ուսումնասիրության մեթոդաբանությունը եզակի և յուրահատուկ է ոչ միայն Հայաստանի, այլև՝ միջազգային փորձի տեսանկյունից: Դատական ակտերի ստանդարտացման գործիքներն ու վերլուծության մեթոդաբանությունը կարող են ադապտացվել՝ կիրառվելու այլ երկրներում ևս:

Ուսումնասիրության գլխավոր մեթոդներից մեկը **դատական ակտերի բովանդակության (տեքստերի) կողավորումը / ստանդարտացումն էր**, ինչը թույլ է տվել դրանց **քանակական վերլուծությունն անել**՝ դուրս բերելով հաճախականություններ և միտումներ:

Դատական ակտերի բովանդակությունը կողավորվել և մուտքագրվել է տվյալների բազայում՝ նախապես որոշված կատեգորիաներին ու հարցերին համապատասխան: Տվյալների բազան մի աղյուսակ է, որի տողերը ներկայացնում են առանձին դատական գործեր, իսկ սյունակները՝ մշակված կատեգորիաներն ու հարցերը:

Քաղաքացիական գործերի ակտերի պարագայում սյունակների (հարցերի) քանակը մոտ 70 էր, քրեական գործերի ակտերի պարագայում՝ շուրջ 150: Հարցերի նմուշներ են, օրինակ, հետևյալները. գործի քննության տևողությունը՝ արտահայտված օրերով, նշանակված դատական նիստերի թիվը, դատական ակտում ՄԻԵԴ նախադեպի հիշատակությունը, մեղադրյալի նկատմամբ նշանակված պատժատեսակը, պատճառված վնասի չափը, և այլն:

Տվյալները մուտքագրվել են նախապես մշակված կողերի (թվանշանների) միջոցով: Կային հարցեր, որոնց պատասխանները լիովին չէին տրվում ստանդարտացման: Այդ հարցերի ներքո

ներմուծվել են ավելի ընդարձակ, տեքստային պատասխաններ: Այս ոչ ստանդարտացված պատասխանները բովանդակային, որակական վերլուծության են ենթարկվել:

Տվյալների մուտքագրման և կոդավորման ավարտից հետո իրականացվել է դրանց քանակական վերլուծությունը՝ SPSS ծրագրի և արհեստական բանականության գործիքների միջոցով:

### **Ուսումնասիրության մյուս գլխավոր մեթոդը դատական ակտերի բովանդակային վերլուծությունն ու գնահատումն էր:**

Դատական ակտերը երկու հիմնական չափորոշիչներով են վերլուծվել.

1. **Դատական ակտի որակ:** Սա իր հերթին բաղկացած էր հետևյալ ենթաչափորոշիչներից. Որոշման.

- Արդար և օրինական (օրենքին համապատասխանող) լինելը:
- Հիմքում ընկած պատճառների՝ համոզիչ լինելը:
- Թափանցիկությունը:
- Պատճառների՝ մանրամասն և համակարգված լինելը:
- Պատճառների՝ հասկանալի / ընկալելի լինելը:
- Հստակ կառուցվածքը, քերականական ու կետադրական առումով անսխալ լինելը:

2. **Դատական նախադեպերի կիրառությունն ու մեկնաբանությունը՝** հետևյալ ենթաչափորոշիչներով.

Դատական ակտում հիշատակված.

- ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:
- ՄԻԵԴ նախադեպային որոշումները:
- Նախադեպերի առավել տարածված մեկնաբանությունները:

Վերոնշյալ չափորոշիչների ու ենթաչափորոշիչների գնահատման համար բազմաթիվ կոնկրետ ցուցանիշներ ու հարցեր են կիրառվել: Օրինակ, դատական ակտի որակի 4-րդ ենթաչափորոշիչի (որոշման պատճառների՝ մանրամասն և համակարգված լինելը) վերլուծության համար կիրառվել են հետևյալ ենթահարցերը (ոչ ամբողջական ցանկն է).

- Որոշման պատճառներում անդրադարձ կատարվե՞լ է բողոքում բարձրացված բոլոր հարցերին:
- Եթե ոչ, նշել՝ դրանց ո՞ր մասին է անդրադարձ եղել:
- Արդյո՞ք դատարանի անդրադարձն ըստ էության և համոզիչ պատասխան է պարունակել բողոքում բերված հարցերին:
- Գործի նյութերում բողոքին պատասխան առկա եղե՞լ է:

Ուսումնասիրության օժանդակ մեթոդներն էին.

- **Փորձագիտական հարցազրույցները՝** փաստաբանների, դատավորների, դատախազների և լրագրողների հետ: Իրականացվել է 12 հարցազրույց, որոնց սղագրությունները համադրվել և վերլուծվել են վերոնշյալ մեթոդների օգնությամբ ստացված տվյալների հետ:
- Հակակոռուպցիոն դատարանի վերաբերյալ **առցանց հասանելի մեդիա հրապարակումների բովանդակության ուսումնասիրությունը:** Կատարվել է դատարանի գործունեությանն առնչվող, առցանց հասանելի բոլոր տեքստային հրապարակումների քարտեզագրումը: Այնուհետև այդ տեքստերը բովանդակային

վերլուծության են ենթարկվել, առավել արժեքավոր բացահայտումները համադրվել և վերլուծվել են այլ մեթոդների միջոցով ստացված տվյալների հետ:

Ուսումնասիրության շրջանակում դիտարկվել են միայն տվյալ պահին Դատալեքս համակարգում առկա, հասանելի դատական ակտերը: Կային դատական ակտեր, որոնք հասանելի էին միայն Court.am կայքում և դեռ տեղադրված չէին Դատալեքսում: Քանի որ Court.am կայքում դատական գործի վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը բավական սահմանափակ էր և տեղեկատվությունն էլ հաճախ ներկայացված էր ոչ պատշաճ ձևաչափով<sup>1</sup>, հետազոտական թիմը հիմնվել է միայն Դատալեքսում հասանելի տվյալների վրա: Բացի այդ, մեկ հարթակում զետեղված տվյալների կիրառումը հնարավորություն է տալիս վերահսկել գործընթացը, խուսափել տվյալների կրկնություններից և հնարավոր հակասություններից:

---

<sup>1</sup> Օրինակ, դատական ակտերի բովանդակությունը հիմնականում ներկայացված էր առանձին սկանավորված պատկերների (jpeg) ձևաչափով, ինչը դժվարացնում է տեղեկատվության ընթերցումն ու կրկնօրինակումը:

# Գլուխ 1. Հետազոտության իրավական շրջանակը

## 1.1 ՀՀ պատժողական քաղաքականությունը կոռուպցիոն հանցագործություններով

### Պատժի համակարգը և տեսակները

Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և որն արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքում (այսուհետև՝ նաև՝ քրեական օրենսգիրք, նոր քրեական օրենսգիրք) պատժողական քաղաքականությունը վերանայվել է՝ նպատակ ունենալով նվազեցնել քրեակատարողական հիմնարկներում ազատագրվածների թիվը և ավելի լայնորեն կիրառել այլընտրանքային պատժամիջոցներ:

Չնայած քրեական օրենսգրքի ընդունմամբ որոշակի փոփոխություններ են կատարվել պատիժների տեսակների մեջ, կոռուպցիոն հանցագործությունների համար հատուկ պատժատեսակներ չեն առանձնացվել: Այս գործերով կարող են վերաբերելի լինել միայն պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, որոնք, սակայն, չեն սահմանափակվում միայն կոռուպցիոն գործերով:

Քրեական օրենսգրքով որպես նոր պատժատեսակներ ավելացվել են ազատության սահմանափակումը և օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը, պատժի տեսակներից հանվել է գույքի բռնագրավումը, կալանք պատժատեսակի փոխարեն կիրառվում է կարճաժամկետ ազատագրվում հասկացությունը, փոփոխվել է տուգանքի հաշվարկային կարգը: Մասնավորապես, 2003 թ. նախկին քրեական օրենսգրքի (այսուհետև՝ նախկին քրեական օրենսգիրք) 51-րդ հոդվածով տուգանքի հաշվարկման համար հիմք էր վերցվում նվազագույն աշխատավարձը, իսկ 2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով հաշվի է առնվում անձի ամսական եկամուտը: Տուգանքը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի հնգապատիկից հիսնապատիկի չափով: Տուգանքը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել ծանր և առանձնապես ծանր՝ գույքային վնաս պատճառելու հետ կապված կամ շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի կրկնապատիկից քսանապատիկի չափով: Հանցանք կատարած անձի եկամտի բացակայության կամ դրա չափը պարզելու անհնարինության դեպքում, կամ երբ անձի ամսական եկամտի հաշվարկի արդյունքով դրա չափը պակաս է ստացվում նվազագույն աշխատավարձի չափից, տուգանքի չափը հաշվարկվում է հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված պատժի տեսակներն են՝

1) պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը,

2) տուգանքը,

3) հանրային աշխատանքները,

- 4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
- 5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը,
- 6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
- 7) ազատության սահմանափակումը,
- 8) կարճաժամկետ ազատազրկումը,
- 9) կարգապահական գումարտակում պահելը,
- 10) ազատազրկումը,
- 11) ցմահ ազատազրկումը:

Յուրաքանչյուր հաջորդող պատիժ կարող է նշանակվել այն դեպքում, եթե նախորդողը չի կարող ապահովել պատժի նպատակներին հասնելը:

Քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ հանրային աշխատանքները, ազատության սահմանափակումը, կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը կիրառվում են միայն որպես հիմնական պատիժներ: Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը և օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կիրառվում են միայն որպես լրացուցիչ պատիժներ: Տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կիրառվում են և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժներ: Մեկ հանցագործության համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական պատիժ: Հիմնական պատիժն կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ:

Քրեական նոր օրենսգրքով գույքի բռնագրավումը հանվել է պատժի տեսակներից և ներառված է քրեաիրավական ներգործության միջոցներում:

Ըստ նախկին քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի՝ գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն էր՝ ի սեփականություն պետության: Ներկայիս օրենսգրքում գույքի բռնագրավման ինստիտուտը սահմանվել է քրեաիրավական ներգործության այլ միջոցների մեջ՝ անվտանգության միջոցների հետ միասին: Իսկ 2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

## **Պատժի նշանակումը և նպատակները, պատժողական քաղաքականության առանձնահատկությունները կոռուպցիոն գործերով**

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ պատժի նշանակումը նպատակ ունի վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները: Կոռուպցիայի համար սահմանված պատժի խստությունը կախված է իրականացված հանցանքի լրջությունից և դրա հետևանքներից: Ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կարող է նշանակվել, եթե դատարանը հիմնավորի, որ առավել մեղմ պատժատեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Քրեական օրենսգրքը ընդլայնել է այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն պատիժ նշանակելիս: Մասնավորապես, նախկին քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը նշում էր հանցանքի վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցագործի անձնային հատկանիշները, ինչպես նաև մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: 2022 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը այս ամենին ավելացրել է նաև հանցագործի վերասոցիալականացման հնարավորությունները, նրա իրավահպատակ վարքագծի ձևավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև պատժի ազդեցությունը նրա ընտանիքի կենսապայմանների վրա:

Առհասարակ կոռուպցիոն հանցագործություններով պատժողական քաղաքականությունը նպատակ ունի ամրապնդել պետական կառույցների հանդեպ հանրային վստահության աստիճանը, և այն երկրի դատական և իրավական համակարգի արդյունավետության բարձրացման գործընթացում կարևոր բացառիչ է: ՀՀ պատժողական քաղաքականությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վերջին տարիներին զգալիորեն կենտրոնացել է կոռուպցիայի արմատական կանխարգելման, բացահայտման, պատասխանատվության ու պատժի իրականացման մեխանիզմների վրա: ՀՀ-ի պատժողական քաղաքականությունը կոռուպցիոն հանցագործությունների ոլորտում ուղղված է ինչպես անհատական պատասխանատվության, այնպես էլ համակարգային փոփոխությունների ապահովմանը: Որպես հիմնական ռազմավարական միջոց կիրառվում է պատիժների խստացումը, որն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարին: Զանի որ կոռուպցիան երկար տարիներ եղել է հասարակական կյանքում տարածված խնդիրներից մեկը, պատժողական մեխանիզմների խստացումը միտված է կանխարգելել կոռուպցիոն երևույթների տարածումը և միևնույն ժամանակ ապահովել դրանց դեմ պայքարը: ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումները նպատակ ունեն բարձրացնել պատժողական քաղաքականության արդյունավետությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարը իրավական համակարգի առաջնահերթություններից մեկն է, և խիստ պատժողական մոտեցումը կարելի է դիտարկել որպես զսպող մեխանիզմ: Նման քաղաքականություն վարելիս կարևոր է չվնասել համագործակցության գործոնը, որը կարող է նպաստել կոռուպցիոն սխեմաների բացահայտմանը:

Գործունե զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատումը հիմնականում կիրառվում է այն դեպքում, երբ անձը առաջին անգամ է հանցանք կատարել, համագործակցել է իրավապահ մարմինների հետ և հատուցել է պետությանը կամ համայնքին պատճառված վնասը:

ՀՀ դատախազության 106-ամյակի կապակցությամբ Դատախազության կոլեգիայի հանդիսավոր նիստի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ դատախազությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով որդեգրել է պատժողական խիստ քաղաքականություն: Նա նշել է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ գործունե զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու մասին միջնորդությունը, որպես կանոն, մերժվում է, եթե հանցանք կատարած անձը զբաղեցրել է զինվորական պաշտոն կամ երբևէ կատարել է

կոռուպցիոն հանցանք կամ բարձր լատենտայնություն ունեցող այնպիսի հանցանք, ինչպիսիք են՝ կաշառք-ընտրակաշառք ստանալը, փողերի լվացումը և այլն<sup>2</sup>:

## **Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտը**

Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը մեծապես կախված է հանցագործության սուբյեկտի հստակ սահմանումից:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում առանձին բաժնով սահմանվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, որն ընդգրկում է նաև կոռուպցիոն հանցագործություններով իրավաբանական անձանց պատասխանատվությունը:

Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտների շրջանակը նոր օրենսգրքով էականորեն ընդլայնվել է՝ նպատակ ունենալով արդյունավետ դարձնել կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը: Նոր օրենսգրքը սահմանում է պատասխանատվություն այնպիսի արարքների համար, որոնք նախկինում չկային, ինչպես նաև հստակեցնում է «պաշտոնատար անձ» հասկացությունը:

Քրեական նախկին օրենսգրքը տարբերակում էր պաշտոնատար անձ և հանրային ծառայող հասկացությունները, իսկ նոր օրենսգրքը որպես պաշտոնատար անձ դիտում է նաև հանրային ծառայողին: Քրեական նոր օրենսգրքի շրջանակում պարզաբանվել է նաև մասնավոր ոլորտի այն աշխատակիցների կարգավիճակը, ովքեր ունեն պետական գործառույթներ, օրինակ՝ պետական կառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձինք, որոնց հնարավոր է դիտել որպես պաշտոնատար անձ:

Ըստ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ պաշտոնատար անձ է համարվում այն անձը, ով հանդիսանում է.

ա. հանրային ծառայող, հանրային պաշտոն զբաղեցնող անձ, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

բ. այլ պետության հանրային իշխանության ոլորտում, օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող կամ այդ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ կամ իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

գ. միջազգային կամ վերապետական հանրային կազմակերպությունում կամ կառույցում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող կամ նշված կազմակերպության կամ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձ կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

դ. միջազգային կամ վերապետական միջազգային կազմակերպության ներկայացուցչական մարմնի կամ նման գործառույթ իրականացնող կառույցի ներկայացուցիչ,

ե. միջազգային դատարանում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող կամ դատարանի անունից հանդես գալու

<sup>2</sup> Դատախազությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով որդեգրել է պատժողական խիստ քաղաքականություն. Աննա Վարդապետյան, <https://cutt.ly/XeXZPXmN>

լիազորություն ունեցող անձ կամ դրա անուկից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձ,

զ. այլ պետության կամ միջազգային դատարանի երդվյալ ատենակալ:

Միևնույն ժամանակ, նախկինում հաճախ խնդիրներ էին ծագում մասնավոր ոլորտի այն աշխատակիցներին կոռուպցիոն հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու հարցում, ինչպիսիք են բժիշկները, դասախոսները և ուսուցիչները: Նոր օրենսգրքով այս հարցը հստակեցվել է. պատասխանատվություն է սահմանվում ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալու կամ պահանջելու համար: Մասնավորապես, ներկայիս օրենսգրքով պատժելի է Կրթության, առողջապահության, կենցաղային կամ բնակչության սպասարկման այլ ոլորտի հանրային ծառայող չհանդիսացող աշխատակցի կողմից իր ծառայողական կամ մասնագիտական պարտականությունը կատարելու կամ ծառայություն մատուցելու համար անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ապօրինաբար ստանալը կամ պահանջելը:

### **Խրախուսական նորմի վերացումը կոռուպցիոն գործերով**

ՀՀ քրեական օրենսգրքում վերջերս կատարված փոփոխություններից մեկը կոռուպցիոն հանցագործությունների պատժի խստացումն է՝ խրախուսական նորմերի վերացմամբ: Նախկինում օրենսդիրը հնարավորություն էր տալիս կոռուպցիոն հանցագործություն կատարած անձանց ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրանք համագործակցում էին իրավապահ մարմինների հետ: Օրինակ, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում էր քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Նույնպիսի խրախուսական նորմեր սահմանված էին նաև առևտրային կաշառք տվողի (հոդված 200), ապօրինի վարձատրություն տվող անձի (հոդված 312.1), ընտրակաշառք ստացող անձի նկատմամբ (154.2-րդ հոդված): Վերջիններս կրկին ազատվում էին քրեական պատասխանատվությունից, եթե ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հանցագործության մասին կամովին հայտնում էին քրեական հետապնդման մարմիններին և աջակցում հանցագործությունը բացահայտելուն:

Նոր քրեական օրենսգրքն այլևս նման խրախուսական մեխանիզմներ չի նախատեսում:

Խրախուսական նորմի նպատակն էր կաշառքի հանցակազմի մասնակիցներին խրախուսել հանցագործության բացահայտմանը: Այնուամենայնիվ, խրախուսական նորմը ուներ մի շարք խնդիրներ: Նախկինում գործող եռօրյա ժամկետը հարցականի տակ էր դնում այս ինստիտուտի արդյունավետությունը, քանի որ սահմանված ժամկետը չափազանց սեղմ էր, բավարար չէր, որպեսզի անձը այդքան սեղմ ժամկետում վերագնահատեր իր արարքը, և կամովին հայտներ իրավապահ մարմիններին: Արդյունքում, երբ դեռ հանցագործությունը բացահայտված չէր, սակայն անձը ցանկանում էր նպաստել հանցագործության բացահայտմանը, քրեական պատասխանատվության սպառնալիքի ներքո հրաժարվում էր հայտնել իրավապահ մարմիններին,



քանի որ եռօրյա ժամկետն անցած էր: Փաստացի, այս ինստիտուտը թեև կար, բայց գործնականում անարդյունավետ էր, չնայած այն կարող էր նպաստել հանցագործությունների բացահայտմանը:

2019 թ. ՀՀ արդարադատության նախարարությունը հանրային քննարկման էր ներկայացրել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» նախագիծը<sup>3</sup>, որը նախատեսում էր վերացնել եռօրյա ժամկետը և կաշառք տվողին ազատել քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում կամ անձը կաշառք տալու մասին կամփին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին (բացառությամբ՝ եթե անձը իմացել է հանցագործության վերաբերյալ քրեական հետապնդման մարմիններին հայտնի լինելու մասին):

Նախագծում նշվում էր, որ որ մի շարք պետություններ, այդ թվում՝ Ռուսաստանը, Մոլդովան, Վրաստանը, Խորվաթիան, Բոսնիա և Հերցեգովինան, Լիտվան, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուկրաինան, Մոնտենեգրոն, Մոնղոլիան, Սլովենիան, Ռումինիան, Տաջիկստանը, Ուզբեկստանը, Սերբիան, Մակեդոնիան նախատեսել են կաշառք տվողներին քրեական պատասխանատվությունից ազատելու նորմեր՝ առանց ժամկետային սահմանափակումների: Այս պետությունների օրենսդրություններում պատասխանատվությունից ազատվելու համար բավարար է մեկ պայման՝ հանցագործության բացահայտմանը ակտիվ աջակցությունը կամ կաշառքի շորթման փաստը:

Այնուամենայնիվ, այս նախագիծը չի ընդունվել, իսկ նոր քրեական օրենսգիրքն առհասարակ չի սահմանում խրախուսական նորմեր այս գործերով:

Այժմ կաշառքի գործերով քրեական պատասխանատվությունից կարելի է ազատվել միայն քրեական օրենսգրքի ընդհանուր մասում ամրագրված ինստիտուտների կիրառմամբ:

Ըստ էության, օրենսդիրը նոր փոփոխություններով ավելի է խստացրել կոռուպցիոն հանցագործությունների համար իր պատժողական քաղաքականությունը: Խրախուսական նորմերի ամբողջական վերացումը անարդյունավետ է, քանի որ զրկում է պետությանը կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման կարևոր գործիքներից, որոնք կարող են նպաստել հանցավոր ցանցերի բացահայտմանը և պատասխանատվության ենթարկելու գործընթացին:

Հարկ է նշել, որ ներկայումս խրախուսական նորմի փոխարեն կիրառվում է գործուն գոջալու ինստիտուտը: Այնուամենայնիվ կարծում ենք, որ գործուն գոջալու ինստիտուտը կաշառքի դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու խրախուսական նորմին փոխարինող ինստիտուտ չէ:

---

<sup>3</sup> ՀՀ օրենքը ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին՝ հրապարակված 09.10.2019 թ., <https://cutt.ly/SeXXofRT>

## 1.2 Ապօրինի գույքի բռնագանձման քաղաքականությունն ու հիմնախնդիրները ՀՀ-ում<sup>4</sup>

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թ. մայիսի 23-ին: Այդ օրենքով նախատեսվում է, որ գույքը կամ գույքի բաժինը, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները), որի ձեռքբերումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, համարվում է ապօրինի գույք՝ անկախ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից:

Ապօրինի գույքի բռնագանձման քաղաքականության հիմքում ընկած է այն մոտեցումը, որ յուրաքանչյուր պաշտոնյա և նրա հետ փոխկապակցված անձինք պետք է հաշվետու լինեն իրենց ունեցվածքի ծագման վերաբերյալ: Քաղաքականությունն ուղղված է կոռուպցիոն աղբյուրներից ստացված գույքի բացահայտմանը և դատարանների միջոցով դրա պետականացմանը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի սահմանադրականությունը ներկայումս Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի 2021 թ. նոյեմբերի դիմումի հիման վրա վիճարկվում է ՀՀ Սահմանադրական դատարանում<sup>5</sup>:

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանը կասեցրել էր գործի քննության ընթացքը և 2022 թ. հուլիսի 8-ին աշխատակարգային որոշում էր կայացրել՝ դիմել Վենետիկի հանձնաժողով (Եվրոպայի խորհրդի խորհրդատվական մարմին, որը կազմված է սահմանադրական իրավունքի ոլորտում անկախ փորձագետներից)՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հետևյալ չորս հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք (amicus curiae) ստանալու նպատակով<sup>6</sup>:

1) Արդյո՞ք «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը համատեղելի է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտին առաջադրվող՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական կիրառելի ստանդարտներին,

2) Արդար դատաքննության իրավունքի և իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության նպատակով ո՞րն է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթում կողմերի միջև ապացուցման բեռի արդարացի բաշխման և ապացուցման ստանդարտների հարցում համեմատական սահմանադրական իրավունքի դիտանկյունից «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովին» անդամակցող պետություններում լավագույն փորձը,

3) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2020 թ. մայիսի 23-ին, արդյո՞ք մինչև այդ ձեռքբերված գույքի ծագման օրինականությունն ապացուցելու դատավարական պարտականությունը համատեղելի է օրենքի հետադարձ կիրառության արգելքի վերաբերյալ եվրոպական հնարավոր ստանդարտների հետ,

4) Արդյո՞ք մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ընթացակարգերի հարուցման և իրականացման համար «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով ամրագրված առավելագույն ժամկետի սահմանված չլինելը համատեղելի է իր գույքից օգտվելու իրավունքի պաշտպանության եվրոպական ստանդարտի հետ:

<sup>4</sup> «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի այլ խնդիրներ ներկայացված են նաև երրորդ գլխում:

<sup>5</sup> Դեռևս նոյեմբերին ընդդիմադիր խմբակցությունների ներկայացրած դիմումը ՍԴ-ն առայժմ վարույթ չի ընդունել, <https://cutt.ly/NeXXpEK6>

<sup>6</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թ. հուլիսի 8-ի աշխատակարգային որոշումը Վենետիկի հանձնաժողով դիմելու մասին, <https://cutt.ly/6eXXp5pB>

2022 թ. դեկտեմբերի 19-ին Վենետիկի հանձնաժողովը ներկայացրեց իր կարծիքը<sup>7</sup> միջազգային և եվրոպական համապատասխան չափանիշների և լավագույն փորձի ամփոփմամբ: Իր խորհրդատվական կարծիքի մեջ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ այն ամփոփում է առկա լավագույն փորձը, սակայն Սահմանադրական դատարանը պետք է որոշի, թե արդյոք օրենքը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, թե՛ ոչ: Հանձնաժողովի կողմից նշվել է, որ միջազգային և եվրոպական չափանիշները թույլ են տալիս ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը դիտարկել որպես պետական կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործիք և կանխարգելիչ միջոց՝ ապօրինի գույքի ձեռքբերման դեմ:

Առաջին և երկրորդ հարցերի մասով Վենետիկի հանձնաժողովը նշել է հանրային շահի պաշտպանության կարևորության մասին, ինչը կարող է արդարացնել ապօրինի ծագում ունեցող գույքի նախնական կանխավարկածի կիրառումը: Իրավասու մարմինը պետք է ապացուցի, որ անձի օրինական եկամուտները համարժեք չեն նրա գույքին: Միայն դրանից հետո ապացուցման բեռը կարող է ընկնել սեփականատիրոջ վրա: Միևնույն ժամանակ հանձնաժողովն ընդգծել է, որ այս գործիքը պետք է կիրառվի ողջամտության սահմաններում և ուղեկցվի արդյունավետ ընթացակարգային երաշխիքներով: Մասնավորապես, գույքի սեփականատիրոջը պետք է տրվի իրական հնարավորություն՝ հերքելու գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը:

Երրորդ և չորրորդ հարցերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ օրենքի հետադարձ կիրառումը ընդհանուր առմամբ կարելի է համարել համաչափ և համատեղելի ՀՀ Սահմանադրությանը, որն ապահովում է սեփականության պաշտպանությունը այն դեպքում, երբ ձեռքբերումը օրինական է: Այդուհանդերձ գույքի ծագման մասին բացատրություն տալու պարտականություննը պետք է լինի ողջամիտ: Գույքի բռնագանձման ժամկետը պետք է լինի ողջամիտ, հավասարապես կիրառելի բոլոր դեպքերի ժամանակ՝ բացառելով հայեցողական լիազորությունները: համընդհանուր ընդունված է, որ կոռուպցիայի դեմ պայքարն անհրաժեշտ է ոչ միայն ի շահ ապագայի, այլև նախկինում ապօրինի սեփականություն ձեռք բերելու դեմ: Այս համատեքստում կարող է նպատակահարմար լինել սահմանել որոշակի ժամկետներ: Հանձնաժողովը նշել է, որ 1991 թ.-ից սկսած հետադարձ ուժի կիրառումը կարող է լինել խնդրահարույց, քանի որ օրենքը թույլ է տալիս հետադարձ ուժի կիրառությունը՝ իբրև բացառություն, սակայն, ըստ էության, հնարավոր է կիրառել այն, երբ իրավասու մարմինը ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ ունենա և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված լինեն: Հանձնաժողովն ընդգծել է նաև, որ այս ժամանակահատվածը չափազանց երկար է թվում, ինչը դժվարություններ է ստեղծում ոչ միայն գործնական կիրառման, այլև իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո ՀՀ Սահմանադրական դատարանը 2023 թ. հուլիսի 7-ին մեկ այլ աշխատակարգային որոշմամբ<sup>8</sup> գործի վարույթը կասեցրել է և այդ անգամ դիմել Գլխավոր դատախազությանը՝ 21 հարց ուղղելով: Մասնավորապես, հարցադրումներ են արվել այն մասին, օրինակ, թե ինչ մեթոդաբանություն է կիրառվում անձի այնպիսի եկամուտները գնահատելիս, որոնք ենթակա չեն եղել հարկման, ինչ մեթոդաբանությամբ է գնահատվում անձի՝ ուսումնասիրությանը նախորդող ժամանակահատվածում ունեցած գույքի, այդ թվում՝ կանխիկ գումարի ծավալի օրինականությունը, ինչպես են մեկնաբանվում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի որոշ

<sup>7</sup> Վենետիկի հանձնաժողովի 2022 թ. դեկտեմբերի 19-ի խորհրդատվական կարծիքը, <https://cutt.ly/NeXXaP1g>

<sup>8</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2023 թ. հուլիսի 7-ին աշխատակարգային որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունն դիմելու մասին, <https://cutt.ly/aeXXsmyX>

հողվածներ, և այլն: Ըստ Գլխավոր դատախազության տվյալների՝ նշված հարցադրումների պատասխանների պատասխանները տրվել է 2023 թ. սեպտեմբերին<sup>9</sup>:

## **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով**

Հարկ է նկատել, որ ՀՀ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքին համանման՝ Բուլղարիայի 2005 թ. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման մասին» օրենքի իրավական հիմնավորումներն ու կիրառման ստանդարտները քննվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից: Այս օրենքն ընդունվել էր Պառլամենտի կողմից 2005 թ. փետրվարին և ուժի մեջ է մտել նույն տարվա մարտին, սակայն 2012 թ. փոխարինվել է նոր՝ «Անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագանձման մասին» օրենքով, իսկ արդեն քննվող շարունակական գործերի վրա տարածվելու էր 2005 թ. օրենքը:

Օրենքի հիմնական նպատակն էր նվազեցնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների հնարավորությունները և կանխարգելել նոր հանցագործությունները: Բացատրական հուշագրում նշվում էր, որ օրենքը նախատեսված էր որպես կանխարգելիչ միջոց՝ կանխելու փողերի լվացումը և նմանատիպ այլ հանցանքները, երբ ակտիվները ենթադրաբար հանցավոր ծագում ունեն, բայց հնարավոր չէ դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն բռնագանձել քրեական օրենսգրքի միջոցով: Օրենքի համաձայն, եթե անձը չի կարող հիմնավորել իր ակտիվների օրինական ծագումը, ապա ողջամտորեն կարելի է ենթադրել, որ դրանք հանցավոր եկամուտներ են, ինչը թույլ է տալիս պետությանը բռնագանձել նման ակտիվները: Բռնագանձման վարույթը կարող էր հարուցվել նաև այն ակտիվների մասով, որոնք ձեռք էին բերվել մինչև 2005 թ. օրենքի ուժի մեջ մտնելը, իսկ ակտիվը բռնագանձելու պետության իրավունքի գործողության ժամկետը լրանում էր ակտիվը ձեռք բերելուց քսանհինգ տարի անց:

2011 թ. սկսած այս օրենքի մասով սկսել են դիմումներ ներկայացվել ՄԻԵԴ: Եվրոպական դատարանն այս օրենքի վերաբերյալ 7 դիմումները 14 դիմումատուների մասով<sup>10</sup> քննել է միասին և անդրադարձել օրենքի համաչափության հարցին և առաջին վճիռը՝ Տոդորովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի, հրապարակվել է 2021 թ.: Այս գործն առաջինն էր, որտեղ ՄԻԵԴ-ը մանրամասն կերպով քննարկում է ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի վերաբերյալ օրենքի համաչափությունը և համապատասխանությունը մարդու իրավունքների ստանդարտներին: Դրանից հետո՝ 2023 թ. ՄԻԵԴ-ը հրապարակեց այս օրենքի վերաբերյալ մեկ այլ՝ Յորդանովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը<sup>11</sup>, որտեղ անընդհատ հղում էր տրվում Տոդորովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի գործին: Հաշվի առնելով այն, որ Տոդորովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի գործն առաջին ՄԻԵԴ վճիռն էր այս օրենքի համատեքստում և հետագայում հղում է տրվում այս գործին, ստորև հակիրճ ներկայացվում են գործի հանգամանքներն ու ՄԻԵԴ ստանդարտների կիրառումն այս գործով: ՄԻԵԴ կողմից անդրադարձ է կատարվել նաև քրեական, քաղաքացիական և վարչական գործընթացներում գույքի բռնագրավմանը<sup>12</sup>:

<sup>9</sup> Սահմանադրական դատարանը չի շտապում քննել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի աահմանադրականության հարցը, <https://cutt.ly/3eXXdrAS>

<sup>10</sup> Տոդորովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի, 50705/11, Գայիչն ընդդեմ Բուլղարիայի, 11340/12, Բարովն ընդդեմ Բուլղարիայի, 26221/12, Ժեկովին ընդդեմ Բուլղարիայի, 71694/12, Ռուսեն ընդդեմ Բուլղարիայի, 44845/15, Կացարովն ընդդեմ Բուլղարիայի, 17238/16, Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի, 63214/16

<sup>11</sup> Յորդանովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի, *Applications nos. 265/17 and 26473/18*

<sup>12</sup> Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը գույքի բռնագրավման մասով, <https://cutt.ly/weVlv8Hp>

## Տոդորովը և ուրիշներն ընդդեմ Բուլղարիայի<sup>13</sup>

ՄԻԵԴ քննարկման առարկա դարձած այս գործում Տոդորովի և այլ դիմումատուների զգալի ակտիվներ (անշարժ գույք, ընկերություններ, տրանսպորտային միջոցներ, կանխիկ դրամ և այլն) ենթարկվել են բռնագանձման՝ 2005 թ. օրենքի հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձման դրույթների համաձայն: Բուլղարական դատարաններն իրենց որոշումները հիմնավորել են նրանով, որ դիմումատուների ծախսերը համապատասխան ժամանակաշրջանում էականորեն գերազանցել են նրանց օրինական եկամուտները, և, հետևաբար, ողջամտորեն կարելի էր ենթադրել, որ նրանց ակտիվների մի մասը ֆինանսավորվել է հանցավոր միջոցներից: Դիմումատուների փաստարկները՝ այն մասին, որ իրենց գույքի և հանցավոր գործունեության միջև բավարար կապ չկա, հիմնականում մերժվել են բուլղարական դատարանների կողմից, իսկ վերադաս դատարանները հաստատել են այդ որոշումները:

Բուլղարական դատարանները նաև նշել են, որ 2005 թ. օրենքի դրույթներով պատճառահետևանքային կապի առկայությունը ապացուցելը պարտադիր չէ, քանի որ օրենքում սահմանվում է կանխավարկած այն մասին, որ բոլոր ակտիվները, որոնց օրինական աղբյուրը անհայտ է, համարվում են հանցավոր ճանապարհով ստացված:

ՄԻԵԴ-ն օրենքի դրույթները քննել է համաչափության ստանդարտների տեսանկյունից:

### Համաչափության ստանդարտի սկզբունքներ

Համաչափության ստանդարտը ՄԻԵԴ իրավունքում հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.



#### Օրինական նպատակ

Միջամտությունը պետք է ծառայի որոշակի օրինական նպատակին, որն անհրաժեշտ է հասարակական կարգի, բարոյականության, իրավունքի գերակայության պահպանման համար:



#### Համաչափ միջոցներ

Միջամտության միջոցները պետք է համարժեք լինեն այն նպատակին, որին հետամուտ է օրենքը: Այս սկզբունքն ընդգրկում է այն դրույթը, որ միջամտությունը չպետք է լինի ավելորդ և պետք է լինի «ամենաքիչ միջամտող» միջոցը՝ նպատակին հասնելու համար:



#### Հանրային և մասնավոր շահերի բալանս

Միջամտության ընթացքում պետք է հաշվի առնվեն ինչպես հանրային, այնպես էլ անձնական շահերը՝ ստեղծելով հավասարակշռություն այդ երկու շահերի միջև: Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ պետության միջամտությունը չպետք է անհարկի ծանրաբեռնի անձի իրավունքները:

### Օրենքով կարգավորվող հանցագործությունների բնույթը

2005 թ. օրենքը կիրառվում էր այնպիսի հանցագործություններով, որոնք միշտ չէ, որ հանգեցնում էին եկամուտների ստացման ու կապված էին առանձնապես լուրջ հանցագործությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, հանցավոր կազմավորման հետ կապերը, թմրամիջոցների շրջանառությունը, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիան կամ փողերի լվացումը: Օրենքը

<sup>13</sup> Ավելի մանրամասն հասանելի է այստեղ՝ «Համառոտ ակնարկ Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ 13.07.2021 թ. վճռի վերաբերյալ», <https://cutt.ly/deXXgrKS>

հնարավորություն էր տալիս քննություն սկսել նաև ավելի փոքր ու մանր հանցագործությունների մասով:

Դատարանը գտել է, որ 2005 թ. օրենքում թվարկված ոչ բոլոր հանցագործությունների պարագայում կարելի է ողջամտորեն ենթադրել, որ դրանք անպայմանորեն հանգեցնում են եկամտի գոյացմանը:

### **Օրենքի հետադարձ ուժը**

Դատարանը քննադատել է օրենքի՝ երկարաժամկետ հետադարձ ուժով կիրառումը, որը թույլ է տալիս բռնազանձման գործընթաց սկսել նույնիսկ այն դեպքերում, երբ ենթադրաբար հանցավոր արարքը տեղի է ունեցել օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ: Այսպիսով, 2005 թ. օրենքի լայն շրջանակներն ու հետադարձ ուժով երկարաժամկետ կիրառությունը էապես բարդացրել են դիմումատուների՝ իրենց եկամուտների օրինական ծագման ապացուցման հնարավորությունները: Ավելին, դատարանը քննադատել է այն, որ պետությունն իրավասու է եղել բռնազանձելու բռնազանձման վարույթը հարուցելուց քսանհինգ տարի առաջ ձեռք բերված ակտիվները:

### **Ապացուցման բեռը**

Դատարանը նշում է, որ դիմումատուների համար իրենց ակտիվների ծագումը հիմնավորելու ակնհայտ դժվարությունների պայմաններում, ներպետական օրենսդրությունը այդ ակտիվների օրինական ծագումն ապացուցելու պարտավորությունը դրել է դիմումատուների վրա: Դատարանը ընդունել է, որ յուրաքանչյուր իրավական համակարգում ենթադրությունները ճանաչվում են օրենքի կամ փաստի ուժով և որ Կոնվենցիայով սկզբունքորեն չի արգելվում նման ենթադրությունների կիրառումը, եթե դրանք ուղեկցվում են արդյունավետ դատական երաշխիքներով: Սակայն դատարանը նաև նշում է, որ դիմումատուների կողմից իրենց ապացուցման պարտավորությունը կատարելիս կարող են առաջանալ դժվարություններ, որոնք պայմանավորված են բռնազանձման վարույթով նախատեսված երկարատև ժամանակահատվածներով և այլ նկարագրված գործոններով:

### **Պատճառահետևանքային կապ**

Դատարանը նշում է, որ բռնազանձման ենթակա ակտիվների և հանցավոր գործունեության միջև պետք է հաստատվի պատճառահետևանքային կապ: ՄԻԵԴ-ը նշում է, որ որոշիչ է այն հանգամանքը, թե արդյո՞ք ազգային մարմիններն ապահովել են առնվազն որոշակի այնպիսի մանրամասներ, որոնցով հիմնավորվում է հանցագործության հաստատված փաստի ուժով բռնազանձման ենթակա ակտիվների ծագումը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործի համատեքստում:

### **1.3 Հակակոռուպցիոն դատարանում քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունները**

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանում քննության են ենթակա, ի թիվս այլնի, դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը:

#### **Դատախազության՝ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը**

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

ՀՀ «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցում է այն բացառիկ դեպքերում, երբ իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական (համայնքային) շահերի խախտման փաստի մասին, դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել, կամ պետական (համայնքային) շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքներով առկա են գույքի բռնագանձման հայց հարուցելու գործեր:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դատախազության լիազորությունները, սահմանված լինելով ՀՀ Սահմանադրությամբ, ներառում են նաև պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասությունը, որը կարող է իրականացվել միայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ վերը շարադրված բացառիկ դեպքերում:

Այս նույն լիազորությունը նախատեսված էր նաև Սահմանադրության 1995 թ. խմբագրությամբ, ինչպես նաև 2005թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ, այն տարբերությամբ, որ դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց կարող էր ներկայացնել «օրենքով նախատեսված դեպքերում և կարգով», իսկ 2015 թ. փոփոխություններով՝ «օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով»:

Այս փոփոխությունները ցույց են տալիս օրենսդրի նպատակը՝ սահմանափակել և հստակեցնել դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը՝ այն կիրառելի դարձնելով միայն բացառիկ իրավիճակներում: Այսպիսով, Սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների միջոցով շեշտադրվել է դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության բացառիկ բնույթը:

Այստեղ հարկ է նկատել նաև, որ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման սահմանումը միայն բացառիկ դեպքերում որպես դրական փոփոխություն մատնանշվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ 2015 թ. խմբագրությամբ

Սահմանադրության վերաբերյալ կարծիքում<sup>14</sup>: «Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ պետական շահերի խախտման դեպքում դատախազությունն իրավասու է հայց հարուցելու ինչպես այն դեպքում, երբ նման լիազորություն վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ այն իրավիճակներում, երբ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, նման հայց ողջամիտ ժամկետում չի հարուցել: Նշված կարգավորման վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առաջին դեպքում, դատախազը, համարելով, որ վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերը, իսկ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, պետք է անմիջապես ձեռնամուխ լինի պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցմանը: Այսինքն՝ այն դեպքերում, երբ պետական (համայնքային) շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը ձեռք է բերում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային իրավասություն: Սակայն մի շարք դեպքերում օրենսդիրը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու առաջնային լիազորությունը վերապահել է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում պետությանը (համայնքին) պատճառվել է գույքային վնաս: Ուստի այն դեպքում, երբ պետական (համայնքային) շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցով հայց ներկայացնելը վերապահված է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դատախազը, նախ պետք է պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց ներկայացնելու առաջարկություն կատարի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին: Այնուհետև դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո համապատասխան մարմնի կողմից ողջամիտ ժամկետում հայց չներկայացնելու, այլ կերպ ասած՝ անգործություն դրսևորելու պարագայում միայն դատախազը ձեռք կբերի պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասություն:

«Դատախազության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նախատեսված է, որ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց կարող է ներկայացնել, երբ լիազորված մարմինը կամ անձը դատախազի առաջարկությունը ստանալուց հետո «ողջամիտ ժամկետում» հայց չի ներկայացրել: Ժամկետի որոշման հստակ չափորոշիչների բացակայության պարագայում իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տևական ժամանակ դատախազության՝ հայց հարուցելու առաջարկության վերաբերյալ դիրքորոշում չներկայացնելը գործնականում կարող է հանգեցնել հայցային վաղեմության ժամկետների

<sup>14</sup> Վենետիկի հանձնաժողովի երկրորդ կարծիքը 33 Սահմանադրության 2015 թ. խմբագրության փոփոխությունների վերաբերյալ, 28 հոկտեմբերի, 2015, կետ 55, <https://cutt.ly/AeXXhsk6>



բացթողման: Նշված իրավիճակները բացառելու նպատակով ՀՀ դատախազությունը իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին հայց հարուցելու առաջարկություն ներկայացնելիս իրավասու մարմնին առաջարկում է սեղմ ժամկետում (օրինակ՝ մեկամսյա ժամկետում) հայտնել արդյոք վերջինս համապատասխան հայց է ներկայացնելու դատարան և իրավասու մարմնի կողմից նշված ժամկետում պատասխան չներկայացնելու դեպքում ՀՀ դատախազության՝ հայց հարուցելու բացառիկ լիազորությունը համարվում է ծագած, քանի որ հիմնավորվում է վերջինիս անգործությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2024 թվականի մայիսի 10-ի թիվ ՎԴ2/0250/05/23 որոշմամբ, անդրադառնալով «ողջամիտ ժամկետի» մեկնաբանմանը, արձանագրել է, որ դատախազի ներկայացրած առաջարկությունը ստանալուց հետո պետական շահերի պաշտպանությանն առնչվող համապատասխան հայցով դատարան դիմելու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը սահմանափակված է ողջամիտ ժամկետով, որը տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է հաշվարկվի **համապատասխան հայցատեսակի դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետներով**: Ընդ որում, տվյալ ժամկետի հաշվարկման ելակետը պետք է պայմանավորել դատախազի կողմից ներկայացված առաջարկությունը ստանալու պահով: Այսինքն՝ դատախազի առաջարկությունը ստանալու պահից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի ժամկետները լրանալուց հետո պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունը դադարում է և ծագում է դատախազության՝ հայց հարուցելու իրավունքն ու համապատասխան ժամկետների հոսքը:

Համեմատության համար, ՀԿԴ/0138/02/23 գործով Շիրակի մարզպետարանի կողմից հայց հարուցելու իրավական հիմքը առաջացել է 2019 թ. հոկտեմբերի 31-ին կայացրած «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշմամբ: Շիրակի մարզպետարանի կողմից համապատասխան հայց չներկայացվելու պատճառով Դատախազության կողմից 2020 թ. մարտի 13-ին հայց է ներկայացվել Հակակոռուպցիոն դատարան: Այսինքն՝ հայցը ներկայացվել է 4.5 ամիս անց:

ՀԿԴ/0133/02/23 և ՀԿԴ/0040/02/23 գործերով հայց հարուցելու հիմքերը առաջացել են 2020 թ. նոյեմբերին, սակայն դատախազությունը Հակակոռուպցիոն դատարան է դիմել 2023 թ. հուլիսին ՀԿԴ/0133/02/23 գործով, 2023 թ. փետրվարին ՀԿԴ/0040/02/23, այսինքն՝ մոտ 2.5 տարի անց:

Մինչև 2023 թ. մարտի 1-ին ընդունված և ապրիլի 6-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-104-Ն օրենքով կատարված փոփոխությունները, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, դատախազությունը բացառիկ դեպքերում պետական շահերի պաշտպանության հայց էր հարուցում դատարան: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում «պետական շահ» հասկացությունը ամբողջ օրենքում փոխարինվել է «պետական (համայնքային) շահ» արտահայտությամբ՝ ընդլայնելով դատախազության լիազորությունները՝ ընդգրկելով համայնքի գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությունը:

Այլ կերպ ասած՝ օրենքում կատարված փոփոխություններով հստակեցվել է բացառիկ դեպքերում դատախազի կողմից համայնքի գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասությունը՝ այն է՝ ոչ միայն պետական, այլև համայնքային շահերով հայց հարուցելու լիազորությունը:

**Պետական (համայնքային) շահի պաշտպանության հայցերի առարկայական ընդդատությունը հակակոռուպցիոն դատարանին**

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա, ի թիվս այլնի, դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով գործերը:

Օրինակ, ՀԿԴ/0133/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունը դիմել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ պետությանը պատճառված վնասը բռնագանձելու պահանջով: Հայցը վերաբերում է այն դեպքերին, երբ Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելուց հետո՝ 2020 թ. նոյեմբերի 10-ին պատասխանողները ՀՀ Կառավարության թիվ 1 վարչական շենքի կարմիր դահլիճում մասնակցել են զանգվածային անկարգությունների և իրենց գործողությունների արդյունքում վնասել և ոչնչացրել են 7 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ մեծ հեռուստացույցը:

Կամ, ՀԿԴ/0040/02/23 գործով, որտեղ Լոռու կայազորի զինվորական դատախազությունը դիմել է Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան՝ ՀՀ ՊՆ 51036 զորամասի պարետային դասակի ավտոմոբիլային ջոկի վարորդ, պայմանագրային շարքային զինծառայողի դեմ, քանի որ վերջինս, ըստ հայցի, իրեն ամրակցված «Ուրալ-325507-0013» մակնիշի ՊՆ 26-06 S զինհամարանիշի ավտոմեքենան վարելու ընթացքում չի պահպանել ՀՀ Կառավարության հաստատած ճանապարհային երթևեկության կանոնները ու իր գործողություններով ստեղծել է վթարային իրադրություն, չի ընտրել այնպիսի արագություն, որը հնարավորություն կտար նրան կանոնների պահանջներին համապատասխան ապահովելու տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարում, որի արդյունքում կորցրել է ավտոմեքենայի կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և գլորվել ճանապարհի ձախ կողմում գտնվող ձորը, որի հետևանքով «Ուրալ-325507-0013» մակնիշի ՊՆ 26-06 S զինհամարանիշի ավտոմեքենան վնասվել է՝ առաջացնելով գույքային վնաս:

Բերված առաջին օրինակում գործը վերաբերում է մասնավոր անձի ապօրինի գործողությունների արդյունքում գույքային վնասի փոխհատուցման պահանջին, որը դասական քաղաքացիաիրավական վեճ է, և բացակայում է վստահված հանրային իշխանության օգտագործման կամ չարաշահման միջոցով պետությանը գույքային վնաս պատճառելու տարրը: Երկրորդ գործում ևս գործը չի ներառում կոռուպցիոն վարքի որևէ դրսևորում, այլ վերաբերում է վթարային իրադրության հետևանքով առաջացած գույքային վնասի փոխհատուցմանը: Քանի որ նշված գործերը դատախազության կողմից հարուցվել են պետական շահերի պաշտպանության հիմքով, դրանք ընդդատյա են դարձել Հակակոռուպցիոն դատարանին:

Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետության գույքային շահերի պաշտպանության հայցերով գործերը վերաբերում են հարկային պարտականությունների քիչ վճարմանը, դրանց չվճարմանը, կենսաթոշակի՝ առանց վավեր լիազորագրի վճարմանը երրորդ անձի, ապօրինի ծառահատումների արդյունքում պետությանը պատճառված վնասի հատուցմանը, և այլ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում պետությանը պատճառված վնասի հատուցմանը, որոնք իրենց բնույթով, ըստ էության, քաղաքացիաիրավական վնասին առնչվող վեճեր են:

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծման վերաբերյալ իրավական ակտի նախագծի ընդունման հիմնավորումները ցույց են տալիս, որ Հակակոռուպցիոն դատարանի ընդդատությունը որոշելիս հաշվի է առնվել «պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերի առավել բարդ բնույթը, ինստիտուտի համեմատաբար նոր և կտրուկ զարգացող լինելը մեր

իրականությունում, ինչպես նաև՝ քաղաքացիական գործերով դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունը»:

Սա վկայում է, որ կարևորություն տրված չէ վեճի բնույթին ու կոռուպցիոն տարրերի առկայությանը, այլ՝ պետության շահերի պաշտպանության հայցերով դատախազության՝ հայցվոր լինելու հանգամանքին: Արդյունքում, եթե պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակով այլ պետական մարմինների կողմից ներկայացված հայցերը քննվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից, ապա նույնական գործով պետության շահերի պաշտպանության համար դատախազության կողմից հայցի ներկայացումը փոփոխում է ընդդատությունը:

Նման հայտանիշի ընտրությունը չի ապահովում գործի բնույթով պայմանավորված ընդդատության սահմանումը: Մյուս կողմից ապահովված չէ քաղաքականության միասնականությունը, քանի որ պետական շահերի պաշտպանության նպատակով դատախազությունը հայցեր է ներկայացնում նաև վարչական դատավարության կարգով, սակայն դատախազության հայցվոր լինելու հանգամանքով պայմանավորված՝ այդ գործերը չեն հանձնվել հակակոռուպցիոն դատարանին: Բացի այդ, անտեսված է դատական վեճերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասնակցության հանգամանքը:

## 1.4 Կոռուպցիոն հանցագործություններով քրեական գործերի քննության առանձնահատկությունները ՀՀ-ում

ՀՀ որևէ իրավական ակտ չի սահմանում «կոռուպցիոն հանցագործություն» և «կոռուպցիա» հասկացությունները: Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թ. մարտի 25-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 6-րդ հավելվածով սահմանվել է «Կոռուպցիոն հանցանքների ցանկ<sup>15</sup>»-ը՝ առանձնացված կոռուպցիոն հանցագործության տեսակներով:

Ըստ այդմ, որպես կոռուպցիոն հանցագործություններ են սահմանվել այն արարքները, որոնք կատարվել են հանցավոր արարքը կատարող հատուկ սուբյեկտի, պաշտոնատար անձի կամ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ այլ պաշտոնատար անձի կողմից՝ ծառայողական դիրքի հնարավորությունները օգտագործելով, ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով: Այստեղ հարկ է նկատել, որ առանձնացված 40 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով սուբյեկտը միշտ չէ, որ պաշտոնատար անձ է: Օրինակ՝ ընտրակաշառք տալու, ստանալու կամ միջնորդության դեպքում հատուկ սուբյեկտի առկայությունը պարտադիր չէ:

Միևնույն ժամանակ նոր քրեական օրենսգրքով հստակեցվել է կաշառքի առարկայի հասկացությունը: Մասնավորապես, նախկին քրեական օրենսգրքով որպես առարկա նշվում էր դրամը, գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, արժեթղթերը կամ որևէ այլ առավելությունը, իսկ նոր քրեական օրենսգրքով՝ գույքը, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթը, վճարային այլ գործիքը, գույքի նկատմամբ իրավունքը, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ ապօրինի վարձատրություն տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Որպես կոռուպցիոն հանցագործություններ են սահմանվել.

- Ընտրակաշառք ստանալը, տալը, միջնորդությունը,
- Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը,
- Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը,
- Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը,
- Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը,
- Խարդախությունը, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Վստահված գույքը հափշտակելը, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

<sup>15</sup> ՀՀ քրեական օրենսգրք:

- Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը, տալը,
- Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը կամ նրան կաշառք տալը,
- Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը,
- Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը,
- Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Փողերի վլացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կաշառք ստանալը, տալը, միջնորդությունը,
- Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը,
- Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը,
- Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը,
- Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը,
- Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը, ապօրինի հարստանալը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը,
- Պաշտոնական կեղծիքը,
- Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան,
- Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը,
- Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը,
- Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը,

- Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
- Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը,
- Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը,
- Իշխանագանգությունը կամ իշխանությունը չարաշահելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ գենք կամ հատուկ միջոց օգտագործելով):

Հակակոռուպցիոն գործերով, որպես կանոն, բացի հանցագործության տարրերից, պետք է պարզաբանման ենթակա լինեն հանցագործության կատարման հանգամանքները (տեղը, ժամանակը, մեթոդը, հանցագործության առարկան, նպատակները, և այլն), հանցագործությունը կատարած անձանց շրջանակը, վերջիններիս՝ պաշտոնատար անձ հանդիսանալու հանգամանքը, արարքի սուբյեկտիվ կողմը, անձի գործողությունների ու պաշտոնեական դիրքի միջև կապը, շահի առկայությունը, անօրինական գործողությունների ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը և այլ հանգամանքներ:

**Համաձայնեցման, համագործակցության և արագացված վարույթների կիրառումը հակակոռուպցիոն քրեական դատարանում**

Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն քրեական գործերով լայնորեն կիրառվում են համաձայնեցման, համագործակցության և արագացված վարույթները, ինչը, ըստ էության, բավական չափով նվազեցնում է դատարանների ծանրաբեռնվածությունը:

Օրենսգիրքը սահմանում է, որ համաձայնեցման, համագործակցության կամ արագացված վարույթ կիրառելն արգելք չէ լրացուցիչ պատիժ կամ անվտանգության միջոց նշանակելու համար: Դատարանը համաձայնեցման վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատախոսման ընթացքում մեղադրյալի միջնորդության հիման վրա: Համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելուց հետո հանրային մեղադրողը համաձայնության գալու նպատակով բանակցություններ է սկսում մեղադրյալի և նրա պաշտպանի հետ: Համաձայնեցման վարույթ չի կարող կիրառվել, եթե մեղադրյալը մեղադրվում է առանձնապես ծանր հանցանք կատարելու համար, վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալից առնվազն մեկն առարկում է համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ, մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու, համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ իրավական կամ փաստական հիմնավորմամբ առարկում է հանրային մեղադրողը, առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, և համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը:

Դատարանը արագացված վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատախոսման ընթացքում մեղադրյալի միջնորդության հիման վրա: Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննարկում է նախնական դատախոսների ընթացքում մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի պարտադիր մասնակցությամբ: Դատարանը միջոցներ է ձեռնարկում արագացված վարույթ կիրառելու միջնորդության վերաբերյալ տուժողի կարծիքը պարզելու համար: Արագացված վարույթ չի կարող կիրառվել, եթե մեղադրյալը

մեղադրվում է առանձնապես ծանր հանցանք կատարելու համար, վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալից առնվազն մեկն առարկում է արագացված վարույթ կիրառելու դեմ, մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու, արագացված վարույթ կիրառելու դեմ փաստարկված առարկում է հանրային մեղադրողը կամ տուժողը:

Համագործակցության վարույթը կիրառվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու նպատակով: Համագործակցության վարույթը կարող է նախաձեռնվել միայն մեղադրյալի կողմից՝ մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն ներկայացնելու դեպքում: Համագործակցության միջնորդությունը հասցեագրվում է հսկող դատախազին և ստորագրվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից: Համագործակցության միջնորդությունը կարող է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը: Համագործակցության միջնորդության մեջ նշվում են, թե ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել՝ հանցագործության բացահայտումը կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելուն աջակցելու նպատակով:

## 1.5 Հակակոռուպցիոն դատարանի վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման հետ կապված խնդիրները

### Վարույթի առարկայական ընդդատության հարցի լուծումը հակակոռուպցիոն քրեական դատարաններում

Հակակոռուպցիոն դատարանը երբեմն նախնական դատախոսների ընթացքում որոշումներ է կայացնում քրեական վարույթներն ըստ ընդդատության առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, վարույթը ստանալով, որոշում է կայացնում քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու նպատակով, իսկ Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով, լուծում է վարույթի առարկայական ընդդատության հարցը:

Քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Զվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում»:

Վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու նմանօրինակ մեխանիզմ նախատեսված է նաև Զաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով, համաձայն որի՝

*«(...) 6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:*

*7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք (...):»:*

Վերոհիշյալ նորմերի կիրառմամբ առկա է ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, որով դատարանը լուծել է Վարչական և Հակակոռուպցիոն դատարանների միջև առաջացած վարույթի առարկայական ընդդատության հարցը:

Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մեխանիզմները էականորեն տարբերվում են միմյանցից:

Զաղաքացիական գործի ընդդատության հարցը որոշում են Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները, իսկ քրեական գործի ընդդատության հարցը՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները:

Մինևսույն ժամանակ, Զաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված է, որ որոշումը կայացվում է նիստ հրավիրելու ձևով, սակայն Քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի բովանդակությունից հստակ չի երևում, թե ինչ ձևով է լուծվում հարցը:



Այստեղ հարկ է արձանագրել, որ Զաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով և Զրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված են մարմիններ, որոնք նախատեսված չեն «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը վերանայում է Վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով: Մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու նպատակով Վճռաբեկ դատարանը վերանայում է այն դատական ակտերը, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

Մինևույն ժամանակ, Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորություններում բացակայում է որևէ նշում այն մասին, որ Վճռաբեկ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահները ունեն վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու լիազորություններ:

Այսպես՝ համաձայն «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ի լրումն Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի լիազորությունների՝ Վճռաբեկ դատարանի նախագահը.

- 1) *Ապահովում է Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը:*
- 2) *Վճռաբեկ դատարանի դատավորներին տրամադրում է արձակուրդ:*
- 3) *Ներկայացնում է Վճռաբեկ դատարանը այլ մարմինների հետ հարաբերություններում:*
- 4) *Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ:*
- 5) *Վճռաբեկ դատարանի դատավորի, այդ թվում՝ պալատի նախագահի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով:*
- 6) *Իրականացնում է այլ լիազորություններ:*

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահը կազմակերպում է պալատի աշխատանքները, վարում է պալատի նիստերը, իսկ հակակոռուպցիոն պալատի դեպքում՝ այն դատական կազմի նիստերը, որում ընդգրկված է պալատի նախագահը: Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով:

Ինչպես կարելի է նկատել, Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները սպառնիչ կերպով ներկայացված չեն և 6-րդ կետով սահմանված է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը իրականացնում է «այլ լիազորություններ»:

ՍԴՈ-782 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով **Վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով և, մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին**<sup>16</sup>:

Հարկ է ընդգծել նաև, որ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության համառոտ պարզաբանումներում նշված է՝ «դատարանների նախագահների վերաբերյալ իրավական կարգավորումներ նախատեսելիս 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը որդեգրել է այն ելակետային մոտեցումը, որ դատարանների նախագահներն առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, միայն այն տարբերությամբ, որ նրանց, ի հավելումս դատավորի բուն գործառնությունների, վերապահված են կազմակերպչական գործառնություններ<sup>17</sup>»:

Վերոգրյալից պետք է եզրակացնենք, որ Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները ունեն բացառապես կազմակերպչական և ներկայացուցչական բնույթ, որոնք իրենցից չեն ենթադրում վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու իրավասություն<sup>18</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով Վճռաբեկ դատարանի նախագահին և Վճռաբեկ դատարանի պալատի նախագահին վերապահված չեն վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու լիազորությունները:

Եվրոպական դատարանը Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործով ևս նշել է, որ արտակարգ պաշտպանության միջոցները դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ չեն: Ավելին, իրավական պաշտպանության միջոցները, որոնց օգտագործումը կախված է պետական պաշտոնյաների հայեցողական լիազորություններից, չեն կարող համարվել որպես արդյունավետ պաշտպանության միջոցներ<sup>19</sup>:

Հատկանշական է, որ նշված հարցի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը 2021 թ. մայիսի 3-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան<sup>20</sup>: Վերջինս ՍԴՈ-123 աշխատակարգային որոշմամբ դիմումը վարույթ ընդունելը մերժել է՝ այն ձևական պատճառաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի նախագահը ՀՀ Սահմանադրական դատարանի դիմելու պատշաճ սուբյեկտ չէ<sup>21</sup>: Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը նշել է, որ Վճռաբեկ դատարանի նախագահի այս լիազորության իրականացումը ենթադրում է գործի տարածքային ընդդատության և ենթակայության կապակցությամբ դատարանների միջև առաջացած տարածայնության հարցի լուծում՝ ըստ էության՝ դատական վարչարարության իրականացում:

Բացի այդ, իրավական ակտերի կիրառությունը և արդյունավետությունը ապահովելու նպատակով Սահմանադրությամբ սահմանվել է որոշակի աստիճանակարգություն և այդ աստիճանակարգության մեջ սահմանադրական օրենքներն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, և օրենքները չեն կարող հակասել սահմանադրական օրենքներին (Սահմանադրության 5-րդ հոդված): Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի

<sup>16</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թ. դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-782 որոշումը, կետեր 6, 11:

<sup>17</sup> Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 134, <https://cutt.ly/2eXXj6ca>

<sup>18</sup> Լիլիթ Թադևոսյան, Առնոլդ Վարդանյան, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործերի ենթակայության և ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման լիազորության իրացման հիմնախնդիրները:

<sup>19</sup> Գալստյանն ընդդեմ Հայաստանի վճիռը (№ 26986/03, 15.02.2008թ, §§ 39-42), <https://cutt.ly/UeXXli6D>

<sup>20</sup> Լիլիթ Թադևոսյան, Առնոլդ Վարդանյան, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործերի ենթակայության և ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման լիազորության իրացման հիմնախնդիրները:

<sup>21</sup> Սահմանադրական դատարանի 2021 թ. հունիսի 25-ի թիվ ՍԴՈ-123 որոշումը:

մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից: Սահմանադրական օրենքների համար նախատեսված է լեգիտիմության ավելի մեծ աստիճան: Ի տարբերություն դատավարական օրենսգրքերի, որոնք, համաձայն նույն հոդված 1-ին մասի, ընդունվում են «քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին», սահմանադրական օրենքների համար նախատեսված է ձայների ավելի բարձր շեմ:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ դատական օրենսգիրքը կարգավորում է դատական իշխանության կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները, բացառությամբ Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարցերի:

Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերն իրենց կարգավորման տիրույթում ներառել են հարցեր, որոնք պետք է կարգավորվեն բացառապես Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով:

Այս առումով, խախտված է դատական կազմերին առնչվող հարցերի կարգավորման մակարդակը, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և Քրեական դատավարության օրենսգիրք 263-րդ հոդվածով նախատեսված մարմինները նախատեսված չեն ՀՀ Սահմանադրությամբ և «ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, ինչն ինքնին կարգավորումը դարձնում է հակասահմանադրական:

Հատկանշական է, որ վարույթի առարկայական ընդդատության հարցի լուծման արդյունքում կայացված որոշումը բողոքարկելու մեխանիզմներ չկան: ՀՀ վճռաբեկ դատարանը իր՝ ԵԱՆԴ/0563/02/16 որոշման մեջ գտել է, որ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով սահմանափակվել է անձի դատական պաշտպանության իրավունքը<sup>22</sup>: Դրանից բացի, 25.11.2008 թ. թիվ ՍԴՈ-780 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է<sup>23</sup>: Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.07.2013 թ. թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, արդար դատաքննության դատավարական երաշխիքների պահպանումը:

Միաժամանակ, եթե ակտի «անմիջական բողոքարկումը» լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման տեսանկյունից, կարելի է նախատեսել<sup>24</sup> «հետաձգված բողոքարկման» հնարավորություն՝ գործով վարույթն եզրափակող դատական ակտի բողոքարկման շրջանակներում<sup>25</sup>:

<sup>22</sup> Վճռաբեկ դատարանի 07.12.2018 թ. ԵԱՆԴ/0563/02/16 որոշում:

<sup>23</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թ. նոյեմբերի 25-ի թիվ ՍԴՈ-780 որոշում:

<sup>24</sup> Վճռաբեկ դատարանի 2021 թ. փետրվարի 10-ի ՇԴ/0109/06/19 որոշում:

<sup>25</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. սեպտեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-918 որոշում:

## Գլուխ 2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանը

### 2.1 Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում. պատմական ակնարկ


Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ սկսել է աշխատանքներ տանել անկախության տարիներից ի վեր: Առաջին ներպետական փաստաթուղթը ՀՀ Կառավարության կողմից 2003 թ. մշակված և ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն էր<sup>26</sup>: Դրանից հետո ընդունվեցին տարաբնույթ օրենսդրական փաստաթղթեր, և երկիրը սկսեց անդամակցել կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կազմակերպություններին:

Մասնավորապես, դեռ 2003 թ. մայիսին ՀՀ-ն ստորագրել և 2004 թ. հունիսին վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև 2004 թ. փետրվարին ստորագրել և դեկտեմբերին վավերացրել է «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: 2004 թ. փետրվարի 17-ին ստորագրվել և 2004 թ. դեկտեմբերի 8-ին վավերացվել է ԵՄ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան:

ՀՀ-ն 2003 թ.-ից ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: 2004 թ. հունվարից ՀՀ-ն անդամակցում է Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին:

2005 թ.-ին ՀՀ-ն ստորագրեց ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան, որի նպատակը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը, կոռուպցիայի կանխարգելումն ու բացահայտման մեխանիզմների ուժեղացումն է: Կոնվենցիան Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006 թ.-ին և ուժի մեջ է մտել 2007 թ.-ին:

Այս միջազգային փաստաթղթերը ոչ միայն ամրապնդեցին կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմքերը, այլև մեծացրին Հայաստանի պարտավորությունները՝ հստակ քայլեր ձեռնարկելու կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ:



<sup>26</sup> ՀՀ Կառավարության 2003 թ. դեկտեմբերի 1-ի N 1522-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://cutt.ly/ReXXxZ6g>

2016 թ.-ից ՀՀ-ն դեռևս 2013 թ. ստեղծված ԱՊՀ մասնակից պետությունների կազմակերպության շրջանակներում գործող «Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի» անդամ է: 2019 թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ կողմից վավերացվել է կոռուպցիայի հակազդմանն ուղղված ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիրը, որի նպատակն է բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարում մասնակից պետությունների համագործակցության արդյունավետությունը:

2018 թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացավ «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՌ-006-Ն որոշումը: Այս որոշմամբ<sup>27</sup> որպես առանցքային նշանակություն ունեցող առաջնահերթություն սահմանվեց կոռուպցիայի դեմ պայքարը և կոռուպցիայի հանրային մերժումը՝ ընդգծելով, որ այս պայքարում Կառավարությունը լինելու է վճռական, հաստատակամ, անզիջում և անհանդուրժող: Սրան հասնելու համար սահմանվեց, որ անհրաժեշտ է գործարկել գործող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ներդնել նոր, առավել գործուն գործիքակազմ: Որպես օրինակ նշվում էր մասնագիտացված, անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, որը ոչ միայն հնարավորություն կունենա իրականացնելու մշտադիտարկում, վերահսկողություն և ուսումնասիրություններ, այլև օժտված կլինի օպերատիվ-հետախուզական, հետաքննական և նախաքննական գործառնություններ իրականացնելու իրավասությամբ: Այնուհետև ընդունվեց նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը:

ՀՀ Կառավարությունը 2019 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշմամբ<sup>28</sup> հաստատեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը, որով նախատեսվեցին մի շարք ինստիտուցիոնալ բարեփոխումներ այս ոլորտում: Այս բարեփոխումների արդյունքում ձևավորվեցին մի շարք մասնագիտացված հակակոռուպցիոն մարմիններ:

Արդեն 2021 թ. օգոստոսի 26-ին Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած՝ «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՌ-002-Ն որոշման մեջ նշվում էր, որ ակնկալվում է հնարավորինս սեղմ ժամկետում ամբողջ ծավալով գործարկել Հակակոռուպցիոն կոմիտեն և Հակակոռուպցիոն դատարանը, ինչի շնորհիվ կբարձրանա կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և գործերի քննության արդյունավետությունը, քանի որ Կառավարությունը հակակոռուպցիոն գործընթացներում հաջողելու համար ունի բավարար քաղաքական կամք և այդ կամքն իրական արդյունքի վերածելու նպատակով շարունակելու է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ստեղծմանը և զարգացմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքների իրականացումը<sup>29</sup>:

<sup>27</sup> «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՌ-006-Ն որոշումը, <https://cutt.ly/2eXXcO6D>

<sup>28</sup> ՀՀ Կառավարությունը 2019 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշումը, <https://cutt.ly/3eXXvzIb>

<sup>29</sup> ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր:

## 2.2 ՀՀ հակակոռուպցիոն մարմինները

Որպես կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի առաջին քայլ՝ 2017 թ. հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն՝ 2019 թ. նոյեմբերին ձևավորվել է **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը**: Այն անկախության երաշխիքներով օժտված կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված ինքնավար մարմին է, որն, ի թիվս այլնի, ուսումնասիրում ու վերլուծում է պետական պաշտոնյաների կողմից ներկայացված հայտարարագրերը, ապահովում է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականությունը, մասնակցում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը և այլն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է բարեվարքության ուսումնասիրություն, կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության ստուգում և վերլուծություն, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուսումնասիրության շրջանակներում հայտարարագրի վերլուծություն: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն օրենսդրական հիմքով հասանելիություն ունի պետական տվյալների շտեմարաններին, ինչպես նաև ֆինանսական, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններին, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններին, վարկային տեղեկատվությանը<sup>30</sup>:

Դրանից երկու տարի անց՝ 2021 թ. հոկտեմբերին ձևավորվել է **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն**՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ մարմին: Այս մարմնի ստեղծմանը նախորդել էր Հատուկ քննչական ծառայության լուծարումը: Կոռուպցիոն հանցագործությունների քննության գործառույթը Հատուկ քննչական ծառայությունից փոխանցվեց Հակակոռուպցիոն կոմիտեին: Վերջինս կոռուպցիոն հանցագործությունների վարույթներով մասնագիտացված և անկախության երաշխիքներ ունեցող քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթ, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և եկթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին: Հակակոռուպցիոն կոմիտեն ունի իր առանձին տարածքը, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորումը և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ գործիքակազմեր<sup>31</sup>:

Կոռուպցիայի դեմ պայքարում ստեղծված թերևս նշանակալի մարմիններից մեկը Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունն է, որը ձևավորվել է 2020 թ.-ին: Այն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ հայց հարուցելու հիմքերի վերաբերյալ ուսումնասիրություն, իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով հանձնարարում է իրականացնել օպերատիվ-հետախուզական գործողություններ, կնքում է հաշտության համաձայնություններ և այլն: Սրան զուգահեռ 2021 թ. նոյեմբերին ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի

<sup>30</sup> ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», հոդված 23, ուժի մեջ է մտել 20.11.2019 թ.:

<sup>31</sup> ՀՀ օրենքը «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին», ուժի մեջ է մտել 23.10.2021 թ.:

օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը<sup>32</sup>: Այս վարչությունը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում:

Կոռուպցիայի դեմ պայքարում այլ դերակատարներից է Պետական վերահսկողական ծառայությունը, որի գործունեության նպատակն է՝ ապահովել վարչապետին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը, ներառյալ՝ Կառավարության որոշումների, վարչապետի որոշումների և հանձնարարականների, Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերի, այդ թվում՝ հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Մեկ այլ կարևոր մարմին է Հակակոռուպցիոն պայքարի խորհուրդը, որը խորհրդակցական մարմին է, որի նպատակը Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախանշվող առաջնահերթությունների և առաջարկվող լուծումների քննարկումն է, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող քաղաքականությունների, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելն է: Այն ստեղծվել է ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 24 -ի N 808 - Ն որոշմամբ<sup>33</sup>: Խորհրդի նախագահը և անդամները Խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով: Խորհրդի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումն ապահովում է ՀՀ վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը:

Որպես այս բարեփոխումների տրամաբանական շարունակություն՝ 2022 թ. հուլիսին ձևավորվեց Հակակոռուպցիոն դատարանը: Այն ՀՀ դատական համակարգում առանձին մասնագիտացված դատարան է, որն արդարադատություն է իրականացնում կոռուպցիոն բնույթի դատական գործերով:



<sup>32</sup> ՀՀ գլխավոր դատախազի 2021 թ. նոյեմբերի 16-ի հրաման:

<sup>33</sup> ՀՀ վարչապետի 2019 թ. հունիսի 24-ի N 808-Ն որոշումը «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թ. ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», <https://cutt.ly/ueXXnmi9>



## 2.3 Հակակոռուպցիոն դատարանի ձևավորումն ու գործունեության իրավական հիմքերը

ՀՀ Սահմանադրության 163-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության և վարչական դատարանները: Նույն հոդվածը սահմանում է, որ օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ, իսկ արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

2021 թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը և հակակոռուպցիոն դատարանը ներդրվեց որպես մասնագիտացված դատարան: Այս փոփոխությունը միտված էր պայքարելու կոռուպցիայի դեմ՝ ավելի արդյունավետ և կենտրոնացված համակարգի ստեղծման միջոցով:

2019 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշմամբ<sup>34</sup> նախատեսվեց հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծումը՝ որպես հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի էական փոփոխություն:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2020 թ. հուլիսի 31-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ<sup>35</sup>, որով կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության շրջանակներում առաջարկվեց ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան: Նախագծերի փաթեթի մեջ նշվում էր, որ կոռուպցիոն բնույթի գործերով արդարադատություն իրականացնող մարմինն՝ դատարանին բավարար չափով ուշադրություն չի դարձվել և հատուկ պահանջներ չեն նախատեսվել՝ չնայած կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների բարդությանը և հանրային բարձր վտանգավորությանը: Մինչդեռ անհամաչափ մեծ է եղել ուշադրությունը կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների քննության և այդ քննության նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման նկատմամբ (կոռուպցիոն հանցագործություններ քննող մասնագիտացված քննչական մարմիններ և քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող և դատարաններում մեղադրանք պաշտպանող հատուկ դատախազներ նախատեսելու միջոցով):

Որպես ուսումնասիրված միջազգային փորձ (որտեղ գործում են հակակոռուպցիոն դատարաններ) և որպես մոդելային օրինակներ նշվում էին հետևյալ երկրները՝ Աֆղանստան, Բանգլադեշ, Բոտսվանա, Բուլղարիա, Բուրունդի, Կամերուն, Խորվաթիա, Ինդոնեզիա, Զենիա, Մալայզիա, Մադագասկար, Մեքսիկա, Շրի Լանկա, Նեպալ, Պակիստան, Պաղեստին, Ֆիլիպիններ, Սենեգալ, Սլովակիա, Ուկրաինա, Ուգանդա, Տանզանիա, Թաիլանդ:

<sup>34</sup> ՀՀ Կառավարության 2019 թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշում, <https://cutt.ly/jeXXmiuW>

<sup>35</sup> «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծեր՝ հրապարակված՝ 2020 թ. հուլիսի 31-ին, <https://cutt.ly/6eXXQt76>



Հակակոռուպցիոն դատարանները պաշտոնապես սկսեցին գործել 2022 թ.-ին: Նորաստեղծ դատարանի նպատակն էր ապահովել կոռուպցիոն գործերի արդար ու անաչառ դատավարություն՝ այդպիսով խթանելով իրավական համակարգի հանդեպ վստահությունը:

2022 թ. փետրվարի 9-ին ընդունված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթի արդյունքում ստեղծվել է Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը, իսկ 2022 թ. դեկտեմբերի 23-ին ընդունվել է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի հիման վրա ստեղծվեց Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը, որն իրականացնում է նշյալ գործերով վերաքննության կարգով քննությունը:

Ըստ օրենսդրական հիմնավորումների՝ կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված դատարանները նպաստում են արդարադատության արդյունավետությանը, ամբողջականությանը և մասնագիտացվածությանը: Մասնավորապես, նշվում էր, որ արդյունավետության տեսանկյունից հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու անհրաժեշտության առաջնային գործոնը հանդիսանում է նմանատիպ դատարանների միջոցով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների գործերով արդարադատության բարձրացումը՝ հաշվի առնելով այն, որ զարգացող կամ անցումային փուլերում գտնվող պետությունների արդարադատության համակարգերում շատ հաճախ գործերի քննությունը ձգձգվում է տարբեր պատճառներով: Ամբողջականության մասով հիմնավորումը կոռուպցիայից և քաղաքական գործիչների ու ազդեցիկ շրջանակների անիրավաչափ ազդեցությունից զերծ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից կոռուպցիոն գործերով արդարադատություն իրականացնելու ձգտումն էր: Վերջին՝ մասնագիտացվածության հիմնավորումն այն էր, որ բազմաթիվ կոռուպցիոն գործեր, մասնավորապես այնպիսիները, որոնք ներառում են բազմաթիվ ֆինանսական գործարքներ և տարաբնույթ սխեմաներ, շատ ավելի բարդ են դատավորների համար, քան սովորական քրեական գործերը, և սրա համար անհրաժեշտ էր ոլորտային մասնագիտացվածություն ունեցող դատական կազմ ունեցող դատարան ստեղծել:

Ըստ արդարադատության նախարարության կողմից 2020 թ. հուլիսի 31-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի հիմնավորումների՝ «կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը նոր հարթակի վրա կարող է բարձրացնել կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը՝ խթանելով դրա զարգացումը»: Այս մասին նշել էր նաև ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչը 2020 թ.՝ «...այս դատարանի ստեղծումն ավելի արդյունավետ կդարձնի կոռուպցիայի դեմ մղվող պայքարը»<sup>36</sup>:

## **Հակակոռուպցիոն դատարանների ստեղծման առնչությամբ ընկալումները**

Մինչև հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը եղել են քննադատություններ այն մասին, որ այս դատարանները դառնալու են քաղաքական ազդեցության գործիք: Կար մտավախություն, որ հակակոռուպցիոն դատարաններում քաղաքական ազդեցությունն ավելի մեծ կլինի՝ հաշվի առնելով դրանցում քննվող գործերի զգայուն բնույթը, որոնք հաճախ առնչվում են նախկին պաշտոնյաներին կամ ազդեցիկ անձանց:

<sup>36</sup> ՀՀ-ում կստեղծվի հակակոռուպցիոն դատարան, դատավորներին կընտրեն «խիստ» չափորոշիչներով, <https://cutt.ly/YeXXQPpu>

Հարցազրույցները ցույց են տալիս, որ հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը և գործունեությունը հիմնականում փաստաբանների կողմից դիտվում է որպես քաղաքական ազդեցության գործիք:

*«Դատարանների ստեղծումն ինքնին եղել է քաղաքական գործընթացի արդյունք, և դրանց գործունեության սկզբունքները որոշ դեպքերում պայմանավորված են քաղաքական շահերով, ինչը խաթարում է արդարադատության անկախությունը և անաչառությունը: Դատավորների ընտրությունը երբեմն քաղաքական ազդեցության արդյունք է: Որոշ դատավորներ նախկինում ունեցել են հստակ քաղաքական դիրքորոշումներ, ինչը կարող է ազդել նրանց անկողմնակալության վրա:*

*Եթե դու ստեղծում ես հատուկ դատարան՝ մարդկանց բռնելու համար, էդ դատարանի դատավորներն էլ mindset-ով հակված են լինում բռնելու: Պետությունը շեղվել է արդարադատության իրականացման իր առաքելությունից<sup>37</sup>» :*

*«Որոշ դատավորների դեպքում խախտվում է անկողմնակալության սկզբունքը: Նորմալ չի, երբ դատավորը տարիներ շարունակ հարցազրույցներ է տալիս այն մասին, որ թալանչիները պետք է պատժվեն, հետո նշանակվում է հակակոռուպցիոն դատարանի դատավոր՝ դրանից առաջ ջնջելով իր բոլոր հարցազրույցները բոլոր տեղերից ու հիմա քննում է, այսպես ասած, թալանչիների գործերը, ում վերաբերյալ մի քանի տարի առաջ հրապարակային կարծիք էր արտահայտել<sup>38</sup>»:*

*«Կարծում եմ շատ ճիշտ է, որ ստուգում են մարդկանց սոցիալական էջերը, տեսնում են մարդկանց գրառումները, տրամադրվածությունը: Որովհետև դու չես կարող ընդդիմադիր կամ իշխանական լինես ու հաջորդ օրը ասես՝ ես լրիվ անկողմնակալ եմ, ում ուզում եք՝ բերեք, ես արդար գնահատում եմ բոլորին<sup>39</sup>»:*

Միևնույն ժամանակ, ՀՀ-ում հակակոռուպցիոն դատարանի ստեղծման նախաձեռնությունից ի վեր մի շարք քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, որ հակակոռուպցիոն դատարանները կդառնան արտակարգ դատարաններ:

*« ...արտակարգ դատարան է, որովհետև իրեն ձևավորել են կոնկրետ մարդկանց պատժելու և կոնկրետ մարդկանց ունեզրկելու համար<sup>40</sup>»:*

Այս հետազոտության շրջանակներում իրականացված հարցազրույցներում ներգրավված փաստաբանների հիմնական մասը պնդում է, որ նման դատարանների ստեղծումն անտեղի է, քանի որ նույն գործերը կարող էին արդյունավետորեն քննվել և արդեն իսկ քննվում էին առաջին աստիճանի դատարանների կողմից:

Փաստաբան փորձագետները գտնում են, որ հակակոռուպցիոն դատարանների ստեղծման ու պահպանման համար տրամադրված ֆինանսական ռեսուրսները կարող էին օգտագործվել արդարադատության համակարգի զարգացման և բարելավման համար՝ առանց նոր դատարանների ստեղծման, օրինակ՝ համապատասխան դատավորների թվի/կազմի ավելացմամբ:

<sup>37</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>38</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>39</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>40</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

Նրանք նշում են, որ այս դատարանները որևէ կերպ չեն նպաստում կոռուպցիայի կանխմանը և իրենք չեն դիտարկում դրական փոփոխություններ (հատկապես համադրելով ներդրված ռեսուրսներն ու ստացված արդյունքները)։

*«...մեծ ֆինանսական բեռ է դրվել պետության վրա: Առանց այն էլ ապօրինի ծագում ունեցող գույքի գործերով ուսումնասիրության փուլում իրավասու մարմինը, նույն ինքը՝ դատախազությունը, շատ ռեսուրս է ծախսում՝ սկսած համապատասխան վարչության ստեղծումով, վարչությանն օժանդակող տնտեսագետներ, փորձագետներ և այլն: Այո՛, ռեսուրսները հսկայական են և շատ մեծ տարբերություն չեմ տեսնում, թե այս գործերը որ դատարանի կողմից կքննվեն<sup>41</sup>»:*

Կա նաև հակառակ տեսակետն այն մասին, որ այդ ներդրումներն արդարացված են, քանի որ հակակոռուպցիոն դատարաններն օգտագործվելու են որպես «գումար վերադարձնելու» գործիք։

*«Այսինքն սա, ըստ էության, ինչ-որ երկարաժամկետ ներդրում է: Դու այսօր անում ես այդ ներդրումը, այդ ծախսը, ու պետք է ակնկալես, որ դրանից օգուտը գալու է չորս-հինգ տարի հետո: Ու նույնիսկ այդ դեպքում դա իրավաչափ չի, որ պետությունը ստեղծում է դատարան՝ ակնկալելով, որ պետք է պետական բյուջեն դրանով լցվի: Որովհետև դատարանը արդարադատություն իրականացնելու համար է, ոչ թե հայց բավարարելու կամ մերժելու, կամ պետության օգտին վճիռ կայացնելու, կամ պետական բյուջեն լցնելու, կամ իր ծախսերը ծածկելու<sup>42</sup>»:*

## **Դատարանի ձևավորման ընթացքում դատավորների նշանակման և վարձատրության հետ կապված հարցեր**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվում էր ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան՝ առնվազն 25 դատավորի թվակազմով<sup>43</sup>, որոնցից 20-ը պետք է զբաղվեին ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների, իսկ 5-ը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացված դիմումներից և հայցապահանջներից բխող գործերի քննությամբ: Նախագծով առաջարկվում էր նաև ստեղծել մասնագիտացված վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ առնվազն 10 դատավորի թվակազմով: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանում ավելացվելու էր քրեական պալատի թվակազմը, որը գործելու էր 8 դատավորի կազմով, իսկ քաղաքացիական և վարչական պալատը՝ 13 դատավորի թվակազմով: Նախագծի հրապարակումից հետո այն լայն քննադատության արժանացավ, քանի որ որևէ կերպ չէր հիմնավորվում դատավորների թվակազմը: Մասնավորապես, թվակազմը որոշելիս հաշվի չի առնվել և չի գնահատվել գործերի ծավալն ու բարդությունը, դրանց առանձնահատկությունները, դատարանի ծանրաբեռնվածությունը և այլն<sup>44</sup>:

<sup>41</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>42</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>43</sup> «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծեր՝ հրապարակված՝ 2020 թ. հունիսի 31-ին, <https://cutt.ly/reCagQaD>

<sup>44</sup> Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, 2023 թ. հունիսի 20, <https://cutt.ly/zeCawljY>

Լրամշակված և արդեն ընդունված «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ Ներկայումս Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից 10-ը մասնագիտացված են ՀՀ քրեական օրենսգրքի կոռուպցիոն հանցագործությունների, իսկ 5-ը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացված գործերով: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի համար ամրագրվել է առնվազն 12 դատավորի թվակազմը, որից առնվազն 6-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների, առնվազն 6-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացմամբ դատավորներ: Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը գործում է 10 դատավորի թվակազմով:



Միևնույն ժամանակ, հակակոռուպցիոն դատարանների ստեղծման պահին մտահոգություն էր առաջացնում դատավորների նշանակման և առաջխաղացման հարցը՝ հաշվի առնելով այն, որ այստեղ երբեմն քննվելու էին բարձր քաղաքական հնչեղություն ունեցող գործեր:

Ըստ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածի՝ դատավորների որակավորման ստուգումը բաղկացած է հայտի ներկայացման և ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերից: Գրավոր քննության հարցեր մշակելու համար ԲԴԽ-ն ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն: Նման մասնագիտացված կազմակերպության ընտրության նպատակը գրավոր քննության հարցերի գաղտնիությունը ապահովելն է: Այնուամենայնիվ որևէ ընթացակարգ չկա, թե ինչպես է որոշվում այն մասնագիտացված կազմակերպությունը, որը պետք է կազմի

գրավոր քննության հարցերը: Մինևույն ժամանակ, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 103-րդ հոդվածի՝ որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական, վարչական կամ հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը: Սրան հակառակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական գործերի քննության դատավարական իրավունքի թեստի 30 հարցերից որևէ մեկը չի վերաբերվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կամ պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության գործերով գույքի բռնագանձման գործերին առնչվող դատավարական հիմնահարցերին<sup>45</sup>:

Ավելին, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Մինևույն ժամանակ, ԲԴԽ-5-Ո-16 որոշմամբ սահմանվել է գրավոր քննության բողոքարկման ավելի կարճ՝ հնգօրյա ժամկետ<sup>46</sup>: Արդյունքում դատավորների թեկնածուներից մեկը չի կարողացել բողոքարկել քննության արդյունքները<sup>47</sup>: Որպես հիմնավորում նշվել է, որ որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թ. թիվ ՀՕ-331- Ն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ նախադասությունն է լիազորել ԲԴԽ-ին նոր ժամկետ սահմանելու, որը եզրափակիչ և անցումային դրույթ է: Ըստ նշված օրենքի՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է նաև թեկնածուների ցուցակի համալրման, այդ թվում՝ որակավորման ստուգման առանձին փուլերի և դրանց շրջանակներում իրականացվող գործողությունների հատուկ ժամկետներ՝ այն հաշվառմամբ, որ դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգումը, ուսուցումը և դատավորների թեկնածուների ցուցակի հաստատումն իրականացվեն դատավորների թվակազմն ավելացնելուց հետո՝ առավելագույնը հնգամսյա ժամկետում: Այսինքն՝ փաստացի ԲԴԽ որոշմամբ սահմանվել է գրավոր քննության արդյունքների բողոքարկման՝ ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված ժամկետից ավելի կրճատ ժամկետ: Այս պատճառով դատավորի մեկ թեկնածու չի կարողացել բողոքարկել գրավոր քննության արդյունքները<sup>48</sup>:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում 2023 թվականի հունվարի 7-ին կատարված փոփոխությունների արդյունքում հանվել է դատավորների հոգեբանական թեստավորման փուլը:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 111-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածությունը, անհրաժեշտության դեպքում նախկին դատավորին հրավիրում գրույցի: Ընդ որում, գրույցը պարտադիր պայման չէ, այլ յուրաքանչյուր դատավորի մասով ԲԴԽ-ն ինքն է որոշում՝ հրավիրել թեկնածուին, թե՛ ոչ:

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի հիմնավորման մեջ նշվում էր, որ պետությունների մեծամասնությունում հակակոռուպցիոն դատարանի դատավորներն ունեն այն

<sup>45</sup> «ԲԴԽ-ն ոչ իրավաչափ որոշում է ընդունել». թեկնածուն գրկվել է բողոքարկման հնարավորությունից, <https://cutt.ly/ZeCaekDx>

<sup>46</sup> ԲԴԽ-5-Ո-16, կետ 21, <https://cutt.ly/DeCae5rT>

<sup>47</sup> «ԲԴԽ-ն ոչ իրավաչափ որոշում է ընդունել». թեկնածուն գրկվել է բողոքարկման հնարավորությունից, <https://cutt.ly/ZeCaekDx>

<sup>48</sup> «ԲԴԽ-ն ոչ իրավաչափ որոշում է ընդունել». թեկնածուն գրկվել է բողոքարկման հնարավորությունից, <https://cutt.ly/ZeCaekDx>

նույն կարգավիճակը, ինչ ունեն ընդհանուր իրավասության դատարանների դատավորները, հետևաբար, վերջիններիս ընտրության կամ նշանակման համար առանձին պահանջներ չեն նախատեսվում: Այս դատավորներն իրենց կարգավիճակով որևէ կերպ չպետք է տարբերվեն մյուս դատավորներից:


Այդուհանդերձ, դատարանների ստեղծումից հետո հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար նախատեսվեցին անհամեմատ բարձր աշխատավարձեր: Որպես դատարանի գործունեության լրացուցիչ երաշխիք՝ հակակոռուպցիոն դատարանի և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորների համար նախագծերի փաթեթով առաջարկվում էր նախատեսել այլ դատավորների համեմատությամբ ավելի բարձր աշխատավարձ, ինչը լուրջ քննարկումների առիթ դարձավ հասարակության և մասնագետների շրջանում: Մինևույն ժամանակ, 2020 թ. արդարադատության փոխնախարարը նշել էր, թե միջազգային փորձի տեսանկյունից նման մասնագիտացված դատարանների համար սոցիալական երաշխիքների ավելի բարձր աստիճանն ընդունելի սխեմա է: Ըստ նրա՝ «խտրականության վերաբերյալ մտահոգություններ, իհարկե, կբարձրացվեն և կարծում եմ դրանք շատ կլինեն, բայց մենք ունենք միջազգային փորձ, որով հիմնավորվում է հենց կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում աշխատող մարմինների աշխատակիցների բարձր սոցիալական երաշխիքները, այսինքն՝ մասնագիտացված համապատասխան մասնագիտացում ունեցող դատարանների դատավորների համար ավելի բարձր սոցիալական երաշխիքների սահմանումը ընդունելի մոդել է»<sup>49</sup>:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով հակակոռուպցիոն դատարանի նախագահի համար սահմանվում էր 18, դատավորի համար՝ 17, իսկ դատավորի օգնականի համար՝ 6 գործակիցները, այն պարագայում, երբ առաջին ատյանի դատարանի նախագահի, դատավորի և դատավորի օգնականի հաստիքների գործակիցները համապատասխանաբար 11, 10 և 3,88 էին:


Այնուամենայնիվ, գործակիցների փոփոխությունն չէղավ, սակայն 29.10.2021 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով սահմանվեց, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով, իսկ վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով: 01.01.2023 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով հավելավճարի դրույքաչափն իջեցվեց՝ համապատասխանաբար դառնալով 60 և 55 տոկոսի չափով:

Արդեն 2024 թ. բարձրացվեցին նաև այլ դատարանների դատավորների աշխատավարձերը ևս. դրանք հավասարեցվեցին հակակոռուպցիոն դատարանների դատավորների աշխատավարձերին: Մասնավորապես, 01.01.2024 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով սահմանվեց, որ.


<sup>49</sup> Հակակոռուպցիոն դատարանի դատավորի աշխատավարձը կկազմի մոտ մեկ միլիոն դրամ, <https://cutt.ly/2eCatEkx>




Հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:



Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորներին օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:



Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորներին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:



Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:



## 2.4 Հակակոռուպցիոն դատարանների դատավորների բարեվարքությունը

### Բարեվարքության ինստիտուտի ներդրումը Հայաստանում

Հայաստանում բարեվարքության ստուգման ինստիտուտը ներդրվել է 2020 թ. մարտի 25-ի օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Դրանք ներառում էին փոփոխություններ «Դատական օրենսգիրք», «Սահմանադրական դատարանի մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներում, որի արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ) վերապահվեց բարեվարքության ուսումնասիրությունը: Այս փոփոխությունների շրջանակներում բարեվարքության ուսումնասիրությունն անցնում են դատավորների, սահմանադրական դատարանի, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջադրվող թեկնածուները:

ՀՀ 2019 թ. հակակոռուպցիոն ռազմավարության համաձայն՝ կարևոր խնդիրներից է հանրային ծառայողների օրինավոր ու բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման հիմնավորման<sup>50</sup> մեջ նշվում էր, որ բարեվարքությունը ներքին բնութագիր է, ինչը նշանակում է, որ մարդը գործում է որոշակի սկզբունքների և արժեքների համաձայն՝ առանց փոխզիջումների հնարավորության ո՛չ աշխատանքում, ո՛չ էլ անձնական կյանքում: Սա նշանակում է աշխատանքային պարտականությունների ազնիվ, բարեխիղճ, ճիշտ և ջանասիրաբար կատարում: Նշվում էր, որ բարեվարքությունը դրսևորվում է դատական ակտերի կատարման մեջ օբյեկտիվորեն, լիակատար հավասարության մեջ, օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ, և այս ամենը ապահովում է արարքի լիակատար օրինականությունը:

Բարեվարքությունը վերլուծվում է երկու տարբեր տեսանկյուններից՝ օրենքի գերակայության, որտեղ բարեվարքությունը վերաբերում է պետական ծառայողի պրոֆեսիոնալիզմին (ներքին բարեվարքություն), և ժողովրդավարության, որտեղ բարեվարքությունը վերաբերում է այն պատասխանատվությանը, որն արդարադատության համակարգը և նրա ինստիտուտները կրում են հասարակության առջև՝ հասարակության վստահությունը շահելու համար (բարեվարքությունը՝ արտաքին տեսանկյունից):

### Հակակոռուպցիոն դատարանների դատավորների բարեվարքությունը

<sup>50</sup> «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում, <https://cutt.ly/UeXXWvO8>



Ներկայումս ՀՀ դատավորների բարեվարքության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները հրապարակային չեն:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հայաստանի վերաբերյալ 5-րդ փուլի գնահատման զեկույցում ՏՀԶԿ-ի գնահատող թիմը շեշտել է, որ բարեվարքության եզրակացությունները պետք է առավել նշանակալի ազդեցություն ունենան դատավորների ընտրության հարցում<sup>51</sup>: ՏՀԶԿ-ն անդրադարձել է նաև դատավորների առաջիադացման և դատարանների նախագահների ընտրության գործընթացներին՝ կարևորելով, որ պաշտոնյաների նշանակման գործընթացները լինեն թափանցիկ՝ ապահովելով հանրային վստահություն: Բացի այդ, կազմակերպությունը նշել է, որ անհրաժեշտ է հիմնավորել այն դեպքերը, երբ բացասական բարեվարքության եզրակացություն ունեցող թեկնածուները նշանակվում են դատավորի պաշտոնում:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» կազմակերպության կողմից իրականացված մշտադիտարկման<sup>52</sup> համաձայն՝ հակակոռուպցիոն դատարանների 15 դատավորներից 9-ը ստացել են դրական եզրակացություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից, 5-ը՝ վերապահումով դրական, իսկ 1-ի դեպքում եզրակացությունը եղել է բացասական:

Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի բոլոր 12 դատավորների բարեվարքության գնահատումը եղել է դրական:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում 9 դատավորներից 3-ը ստացել են դրական գնահատական, 3-ը՝ վերապահումով դրական, և 2-ը՝ բացասական եզրակացություն: Մեկ դատավորի դեպքում վերջնական գնահատական ԿԿՀ-ն չի կարողացել տալ:



2024 թ. նոյեմբերի 2-ին ՀՀ արդարադատության նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և

<sup>51</sup> ՏՀԶԿ Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույց, <https://cutt.ly/yeXXRYe4>  
<sup>52</sup> Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների, Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, 2023 թ. հունիսի 20, <https://cutt.ly/heXXT2Wl>

լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը<sup>53</sup>: Ըստ առաջարկվող փոփոխությունների՝ Եթե դատավորի պաշտոնում նշանակման համար առաջարկվում է թեկնածու, որի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներկայացրել է բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն, ապա դատավորի թեկնածուին հանրապետության նախագահին առաջարկելու, ինչպես նաև Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման, հաստատման և առաջարկության ներկայացման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումը պետք է ունենա նաև պատճառաբանական մաս, որում նշվում են տվյալ թեկնածուին դատավորի պաշտոնում նշանակելու համար առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ հիմնավոր պատճառները:

Նախագծով առաջարկվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ եզրակացության (թե՛ դրական, թե՛ բացասական եզրակացության) միայն եզրափակիչ մասը դարձնել հրապարակային՝ թեկնածուին պաշտոնի նշանակելուց, այդ թվում՝ առաջխաղացման կարգով նշանակելուց հետո, իսկ չնշանակված թեկնածուներինը՝ չհրապարակել:

Կարծում ենք՝ այս նախաձեռնությունը դրական քայլ է դատական համակարգի բարեփոխման ուղղությամբ:

## **Տվյալներ՝ հակակոռուպցիոն դատարանների դատավորների նախկին աշխատանքային փորձի և այլ բնութագրիչների վերաբերյալ<sup>54</sup>**

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թթ. ռազմավարությամբ կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում մասնագիտական ուղղվածությունն ապահովելու նպատակով նախատեսվել է ձևավորել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ինստիտուտը: Ռազմավարության ուղղություններն ու նպատակները սահմանող 1-ին բաժնում ամրագրված է, որ հակակոռուպցիոն դատարանը պետք է վայելի հանրային բարձր վստահություն, իսկ դատավորները պետք է ունենան մասնագիտական բարձր պատրաստվածություն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշվում էր, որ միտում ունենալով հակակոռուպցիոն դատարանների կազմում ներգրավվելու նաև փորձառու մասնագետների, այն է՝ գործող դատավորների, նախկին դատավորների, իրավաբան գիտնականների, վերջիններիս համար սահմանվել է հավակնորդների ցուցակում ընդգրկվելու պարզեցված կարգ<sup>55</sup>: Մասնավորապես, դիմում ներկայացնելու դեպքում նրանք կարող են ընդգրկվել դատավորի թեկնածուների ցուցակում՝ բարեվարքության ստուգում անցնելու և օրենքով սահմանված հարցազրույցը հաջողությամբ հանձնելուց հետո: Ցուցակում ընդգրկված թեկնածուները ուսումնառություն պետք է անցնեին ՀՀ արդարադատության ակադեմիայում:

<sup>53</sup> «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծեր, հրապարակված 02.11.2024 թ., <https://cutt.ly/2eXXYSdw>

<sup>54</sup> Տվյալները վերցված են court.am-ում առկա կենսագրական տվյալներից:

<sup>55</sup> «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծերի հիմնավորում՝ հրապարակված՝ 2020 թ. հուլիսի 31-ին, <https://cutt.ly/aeXXIye2>

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորների մեծ մասը՝ 22-ը, նախքան դատավոր դառնալը, երբևէ աշխատել են դատական համակարգում: Դատավորների գրեթե կեսը (18-ը) երբևէ աշխատել են որպես դատավորի օգնական:

Դատավորներից 10-ը աշխատել են որպես քննիչ, 11-ը՝ դատախազ են եղել: Ընդ որում, 7 դատավոր միաժամանակ և՛ քննիչ, և՛ դատախազ լինելու փորձ ունի:

### Հակակոռուպցիոն դատարանի այս պահին գործող 38 դատավորներից



8 դատավոր մասնավոր իրավաբանական գրասենյակներում աշխատելու փորձ ունի: Դատավորներից 13-ն ունի փաստաբանական գործունեության արտոնագիր:

Հակակոռուպցիոն վճռաբեկ դատարանի 10 դատավորներից 6-ը, իսկ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 12 դատավորներից 10-ը նախկինում եղել են դատավորներ:

Մինևույն ժամանակ, առաջին ատյանի հակակոռուպցիոն դատարանի 16 դատավորներից միայն մեկը՝ Կարապետ Բադայանն է նախկինում դատավոր եղել:



### **Գլուխ 3. Հետազոտության արդյունքներ**

#### **3.1 Հակակոռուպցիոն դատարանի գործունեության և դատական ակտերի որակական ուսումնասիրության արդյունքներ**

Ստորև ներկայացված են հակակոռուպցիոն դատարանի գործունեությանն առնչվող մի շարք ակտուալ խնդիրներ, որոնք դուրս են բերվել ոլորտի փորձագետների հետ հարցազրույցների և դատական ակտերի որակական ուսումնասիրության արդյունքում: Որտեղ հնարավոր է եղել, ուսումնասիրության արդյունքները համալրվել են իրավական վերլուծությամբ և զեկույցի հեղինակային խմբի դիտարկումներով:

#### **Խնդիր 1. Դատական ակտերի հրապարակայնությունը և անձնական տվյալների պաշտպանությունը**

##### **Դատալեքս համակարգի հետ կապված խնդիրները**

Մեր կողմից կատարված ուսումնասիրության շրջանակներում առաջին խնդիրը, որին բախվել ենք, այն էր, որ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից հետո տևական ժամանակ դատական ակտերը չէին հրապարակվում Դատալեքս հարթակում: Ակտերի մի մասը սկանավորված տարբերակով կարելի էր գտնել միայն court.am կայքում, իսկ մյուս մասն ընդհանրապես հասանելի չէր: Ընդ որում, court.am կայքում հասանելի էին միայն դատարանների կողմից կայացված վերջնական վճիռները, որտեղ հաճախ չեն արտացոլվում մի շարք կարևոր որոշումների բովանդակությունները: Հարկ է նկատել, որ ֆայլերը հասանելի էին միայն jpeg տարբերակով, վճռի էջերը թերթել հնարավոր չէր և միաժամանակ մեկ էջից ավելի բացել ևս հնարավոր չէր, ինչը բավական դժվարացնում էր վճռին ծանոթանալու գործընթացը:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ դատական ատյանում վարույթը եզրափակող դատական ակտերը (այսուհետ՝ եզրափակիչ դատական ակտ), իսկ օրենքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը ենթակա են պարտադիր հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում: Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են գործի և դրա ընթացքի վերաբերյալ տեղեկությունները, որոնց ցանկը և հրապարակման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

2021 թ. փետրվարի 25-ին ԲԴԽ նախագահի՝ ԲԴԽ-9-Ո-13 որոշմամբ սահմանվել է նաև, որ դատական ավտոմատացված համակարգում լրացված հիշյալ տեղեկությունները յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին համապատասխան ծրագրի միջոցով ավտոմատացված եղանակով տեղափոխվում են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ՝ datalex.am:

Հակակոռուպցիոն դատարանի գործերը, սակայն, տևական ժամանակ համակարգում հասանելի չէին, ուստի հանրությունը, հասարակական կազմակերպություններն ու զանգվածային լրատվության միջոցները հնարավորություն չունեին հետևել այդ դատարանի վարույթում գտնվող գործերի ընթացքին, ծանոթանալ դրանց վերաբերյալ իրենց անհրաժեշտ տեղեկությանը կամ կայացված դատական ակտերին:

Հակակոռուպցիոն դատարանի քրեական և քաղաքացիական գործերի պատուհանները Դատալեքսում հասանելի դարձան միայն 2023 թ. հոկտեմբերին՝ դատարանի գործունեության մեկնարկից մեկ տարուց անց: Մինչ այդ court.am-ում հրապարակվում էին միայն նիստերի ժամանակացույցերը, դռնբաց կամ դռնփակ լինելը և եզրափակիչ դատական ակտերը: Սա

ամբողջությամբ չէր ապահովում հրապարակայնության սկզբունքը: Ավելին, Դատալեքսում հակակոռուպցիոն գործերի բաժինների ստեղծումից հետո էլ համակարգը լիարժեք չէր գործում:

Դրանից հետո՝ 2024 թ. հուլիսի 24-ին դատական իշխանության ֆեյսբուքյան էջում հայտարարություն տարածվեց, որ ապրիլից Դատալեքսում և փաստաթղթաշրջանառության համակարգում ի հայտ էին եկել տեխնիկական խնդիրներ, ինչի պատճառով դատական ակտերի հրապարակումը և տվյալների թարմացումը պարբերաբար չէր իրականացվում: Ըստ հայտարարության՝ հունիսի 28-ին Դատական դեպարտամենտի շենքում տեղի ունեցած վթարի հետևանքով տեղի ունեցավ ջրի արտահոսք, որի արդյունքում վնասվել էին համակարգերը սպասարկող սերվերները:

Ըստ այդ օրվա հայտարարության՝ Դատական դեպարտամենտը միջոցներ էր ձեռնարկել և սերվերային հանգույցի սենյակն ապահովել էր անհրաժեշտ անվտանգային կահավորմամբ և մասնակի վերականգնվել էր դատական գործերի բաշխման էլեկտրոնային ավտոմատացված համակարգը, սակայն.

 <p>Չեն վերականգնվել 3 դատարանների՝ Սնանկության դատարանի, Արագածոտնի դատարանի, Վերաբնիշ վարչական դատարանի տվյալների բազան:</p>	 <p>Առկա է դատական գործերի էլեկտրոնային քարտերում տեղեկությունների մուտքագրման անհնարինություն:</p>
 <p>Խափանված է դատարանների միջև դատական գործերի էլեկտրոնային քարտերի տեղեկատվության փոխանցման և ստացման ծրագիրը:</p>	 <p>Խափանված է բոլոր դատարանների ծրագրերի սերվերներից ինֆորմացիայի՝ դեպի Դատական դեպարտամենտի տվյալների կենտրոն տեղափոխման տրանսպորտային համակարգը, ինչի արդյունքում չի թարմացվում նաև Դատալեքսը:</p>

Ըստ հայտարարության՝ երկու ամսվա ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների և անվտանգային բարձր երաշխիքների կիրառմամբ հնարավոր կլինի ամբողջությամբ լուծել առկա խնդիրները, ինչպես նաև՝ դատական համակարգը գերծ պահել հետագա նմանատիպ իրավիճակների առաջացումից:

Ըստ Էուլթյան, մինչ օրս կայքն աշխատում է խափանումներով և ոչ մի երաշխիք չկա, որ դատական ակտերը պատշաճ կերպով կներմուծվեն համակարգ:

*«Դատալեքսի աշխատանքը շատ վատն է: Միայն հակառուպցիոնի չէ, այլ ընդհանուր մակարդակով, Երևանի դատարանների մակարդակով: Նույնիսկ Նիստը չի նշանակվում:*

*Ինձ թվում է՝ կապված է դատական կազմերի աշխատանքի հետ, որովհետև մենք գիտենք՝ ինչքան ծանրաբեռնված են աշխատում իրենք:*

*Դատալեքսը չլրացնելը լուրջ խնդիր պետք է դիտարկվի հենց ԲԴԽ-ի կողմից, դատարանների կողմից, դատարանների նախագահների կողմից: Ընդհանրապես լավ չի լրացվում Դատալեքսը: Ինչքան գիտեմ՝ Դատալեքսի տեխնիկական ապահովումը համակարգված չի արվում<sup>56</sup>»:*

## **Անձնական տվյալների պաշտպանության հետ կապված խնդիրները**

Մինևույն ժամանակ, դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդեն իսկ հրապարակված դատական ակտերում հաճախ պատշաճ կերպով փակված չեն դատավարության կողմերի անձնական տվյալները: Շատ դեպքերում նրանց անձնագրային տվյալները ևս բաց ու հասանելի են: Երբեմն, երբ կնքվում է հաշտության համաձայնություն, անձնական տվյալները փակվում են վճռի վերևի հատվածում, սակայն անձնագրային տվյալները բաց և հասանելի են լինում հաշտության համաձայնության տեքստում:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են ապաստանավորված կարգով:

*«Ինքնին այդ որոշումները կլինեն, թե չեն լինի, այլ հարց է: Բայց այստեղ անհատական տվյալների, անուններ փակելու խնդիր կա: Որովհետև մեզ կարևոր է՝ դատական ակտը լինի, կարողանանք միատեսակություն ապահովել, բայց պարտադիր չի՝ բոլորը իմանան՝ ով է, օրինակ, մարդ սպանել 30 թվին, որովհետև այդ դատվածությունը հետո կարող է հանվել: Անուն ազգանունները պետք է ինիցիալներով գրվի<sup>57</sup>»:*

## **Խնդիր 2. Գործերի քննության ժամկետները**

ՀՀ դատական համակարգի հիմնական խնդիրներից է գործերի քննության ձգձգումը: Երբեմն դատական նիստերը կարող են նշանակվել չորս-հինգ ամիս միջակայքերով, ինչը հաճախ խաթարում է գործերի՝ ժամանակին և արդյունավետ քննությունը: Այս իրավիճակը պայմանավորված է դատարաններում գործերի մեծ ծավալով, անձնակազմի պակասով, ծանրաբեռնվածությամբ և այլ պատճառներով:

Հակակոռուպցիոն դատարանում, սակայն, այս խնդիրը քիչ է հանդիպում: Այս համատեքստում հակակոռուպցիոն դատարանի գործունեությունը բավական բացառիկ է, քանի որ այստեղ նիստերի՝ երկար ընդմիջումներով նշանակման պրակտիկա գրեթե չկա: Հակակոռուպցիոն դատարանում նիստերը հիմնականում անց են կացվում ամիսը մեկ, երբեմն՝ ամիսը մի քանի անգամ: Դատավորների, դատախազների, փաստաբանների հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ Հակակոռուպցիոն դատարանում նիստերը գրեթե միշտ հետաձգվում են օբյեկտիվ պատճառներով, օրինակ՝ պատասխանողների մեծաթիվ լինելու, պաշտպանի՝ այլ դատական նիստով ծանրաբեռնված լինելու, դատավորի՝ արձակուրդում գտնվելու և այլ պատճառներով:

Այլ դատարանների համեմատ գործերի քննության առավել արագ ընթացքը երկակի մոտեցման տեղիք է տվել փաստաբանական համայնքում: Որոշ փաստաբաններ դրական են գնահատում այս պրակտիկան՝ նշելով, որ գործերի արագ քննությունը կանխում է դատավորների կողմից գործերի և ապացույցների, այսպես ասած, «մոռացումը» և ապահովում է արդար ու ժամանակին

<sup>56</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>57</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

արդարադատություն: Միևնույն ժամանակ, փաստաբանական համայնքի մյուս մասը մտահոգություն է հայտնում, որ այս արագությունն անհարկի շտապողականության արդյունք է, որը կարող է ազդել գործերի մանրակրկիտ քննության և արդար որոշումների վրա:

*«Եթե, օրինակ, Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում նիստերը նշանակվում են երկու կամ երեք ամիսը մեկ, ապա Հակակոռուպցիոն դատարանում մեկ գործով կարող է մեկ ամսվա ընթացքում երկու-երեք կամ ավել նիստեր նշանակվել: Համեմատության մեջ որ նայում ենք, Հակակոռուպցիոն դատարանում արագ են նիստերը նշանակվում և գործերը քննվում<sup>58</sup>»:*

Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լինում են ձգձգումներ՝ պայմանավորված վարույթի առարկայական ընդհատության լուծման հետ կապված հարցերով և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով, որոնց կանդիդատները ներքևում:

### **Խնդիր 3. Գործի քննության ժամկետների ձգձգումները՝ կապված վարույթի առարկայական ընդհատության հարցի լուծման հետ**

Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված վարույթի առարկայական ընդհատության հարցը լուծելու մեխանիզմները կարող են գործի քննության անհարկի ձգձման պատճառ հանդիսանալ, որի պայմաններում կարող է տուժել անձի՝ արդար դատաքննության իրավունքը: ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով: ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝ գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները:

Վճռաբեկ դատարանը [ԵԱԲԴ/0016/01/14](#) քրեական գործով նշել է՝ «Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն այն մասին, որ ողջամիտ ժամկետում դատաքննության սկզբունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից է և միտված է հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն ու անձի իրավունքների, շահերի առնչությամբ իրավական վեճը հանգուցալուծելուն և վերջնական դատական ակտ կայացնելուն: Ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի երաշխավորումն ապահովում է նաև սոցիալական արդարության վերականգնումը, նպաստում հանցագործությունների կանխմանը և խափանմանը, հանցավոր ոտնձգություններին արդյունավետորեն հակազդելու պետության կարողությունների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը: Վերջինիս հիմքում ընկած է նաև միջազգային իրավական փաստաթղթերում օգտագործվող «ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է» (*“Justice delayed is justice denied”*) գաղափարը<sup>59</sup>, որի համաձայն՝ դատավարության չհիմնավորված ձգձգումը կարող է հանգեցնել «արդարադատության մերժմանը»՝ դատավարության

<sup>58</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>59</sup> ԵԱԲԴ/0016/01/14 քրեական գործով Վճռաբեկ դատարանի որոշումը:

կողմերի համար»: Հետևաբար, նախնական քննություն և դատական քննություն իրականացնող իրավասու մարմինները պետք է անհրաժեշտ ջանասիրություն դրսևորեն՝ ողջամիտ ժամկետում անձի դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ»:

Քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու խնդրի հետ կապված ուսումնասիրվել է Վճռաբեկ դատարանի կողմից վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ կայացված 35 դատական գործ, որոնցից 23-ը դատարանի որոշմամբ հանձնվել են Հակակոռուպցիոն դատարանին, իսկ 12-ը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ստորև ներկայացվում է երկու դատական գործ, որոնցում առարկայական ընդդատության հարցի լուծումը գործի քննության անհարկի ձգձման պատճառ է դարձել:

**Գործ 1. ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23)**

Հակակոռուպցիոն դատարանը **2023 թ. հոկտեմբերի 26-ին** որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0239/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թ. նոյեմբերի 6-ին նախնական դատախոսներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը **2023 թ. դեկտեմբերի 11-ին**՝ նախնական դատախոսների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

Դատարանը իր որոշմամբ փաստել է, որ մեղադրյալները մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման պահին չեն հանդիսացել պաշտոնատար անձինք, հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունները չէին կարող կատարել պաշտոնական դիրքն օգտագործելով:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է նաև, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների փաստական նկարագրի մեջ առկա չէ որևէ նշում առ այն, որ մեղադրյալները ենթադրյալ հանցանքները կատարել են պաշտոնական դիրքն օգտագործելու եղանակով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, ուսումնասիրելով գործը, փաստել է, որ Ա. Միլիտոսյանին և Թ. Գրիգորյանին ներկայացված մեղադրանքներում նշված է, որ նրանք ենթադրյալ հանցավոր արարքները կատարել են՝ օգտվելով իրենց ծառայողական լիազորություններից և նշել է, որ վերջիններիս մեղսագրված է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցավոր արարքի կատարում:

Միաժամանակ նշել է, որ թեև ՀՀ նախկին քրեական օրենսգրքը չի նախատեսել խարդախության՝ «ծառայողական լիազորություններն օգտագործելու» հատկանիշը, այնուամենայնիվ դա չի նշանակում, որ մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ հանցանքները չունեն կոռուպցիոն բնույթ:

Դատարանը նաև նշել է, որ մեղադրական եզրակացությունից և մեղադրյալներ Աիդա Միլիտոսյանի և Թերեզա Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներից ակնհայտ է, որ իրենց մեղսագրվող արարքների փաստակազմը կոռուպցիոն բնույթի է, իսկ մնացած հարցերի պատասխանները կարող են տրվել արդեն դատաքննության արդյունքում:

Արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը **2023 թ. դեկտեմբերի 27-ին** որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

**Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թ. հունվարի 3-ին:**

Վճռաբեկ դատարանը, ուսումնասիրելով գործը, արձանագրել է, որ ներկայացված մեղադրանքների ձևակերպումներից պարզ է դառնում, որ մեղադրյալները ենթադրաբար օժանդակել են խարդախությամբ ուրիշի գույքի հափշտակությանը բժշկական կենտրոնի



ղեկավարի կարգավիճակն ու հեղինակությունն օգտագործելու եղանակով, ինչը համաձայն 2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» N 6 հավելվածի, հանդիսանում է կառուպցիոն հանցագործություն:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթն ընդդատյա է ՀՀ Հակակոռուպցիոն դատարանին և գործն ուղարկել է ըստ ընդդատության:

Գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում ստացվել է **2024 թ. հունվարի 16-ին:**

**Գործ 2. ՀԿԴ/0188/01/23 (ԵԴ1/1299/01/23)**

Հակակոռուպցիոն դատարանը **2023 թ. օգոստոսի 30-ին** որոշում է կայացրել թիվ **ՀԿԴ/0188/01/23** քրեական վարույթը ստանձնելու և 2023 թ. սեպտեմբերի 5-ին նախնական դատախոսներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը **2023 թ. սեպտեմբերի 5-ին`** նախնական դատախոսների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին: Ինչպես **ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23)** գործով, այնպես էլ **ՀԿԴ/0188/01/23** քրեական գործով դատարանը գտել է, որ մեղադրյալները մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման պահին չեն հանդիսացել պաշտոնատար անձինք: Հակակոռուպցիոն դատարանը նշել է, որ մեղադրյալները չեն օգտագործել պաշտոնից բխող լիազորություններ կամ պաշտոնեական դիրք, հակառակ դեպքում մեղադրանքի ձևակերպումներում առկա կլիներ պաշտոնեական դիրքն օգտագործելու վերաբերյալ նշում, իսկ դրա բացակայությունը վկայում է, որ ներկայացված մեղադրանքն իր մեջ չի պարունակում կոռուպցիոն հանցանք:

Քրեական գործը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է 2023 թ. սեպտեմբերի 11-ին և գործին շնորհվել է թիվ ԵԴ1/1299/01/23 հերթական համարը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, ուսումնասիրելով գործը, փաստել է, որ մեղադրյալները իրենց մեղսագրված հանցագործությունները կատարելիս գործել են բժշկական կենտրոնի ղեկավարի (համահիսնադիր, տնօրեն) կարգավիճակն ու հեղինակությունն օգտագործելու եղանակով, կատարել են խարդախությամբ ուրիշի գույքի հափշտակության, և հետևաբար քրեական վարույթով մեղադրյալներին մեղսագրված հանցանքները ունեն կոռուպցիոն բնույթ:

Դատարանը 2024 թվականի հունիսի 12-ի որոշմամբ գտել է, որ թիվ ԵԴ1/2194/01/23 քրեական վարույթը ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և ըստ ընդդատության ուղարկել է հակակոռուպցիոն դատարան՝ Վճռաբեկ դատարան ուղարկելու փոխարեն՝ ինչի արդյունքում ավելի է ձգվել քննությունը:

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունիսի 26-ին որոշում է կայացրել ընդդատության մասին վեճը լուծելու համար գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Վճռաբեկ դատարանը իր՝ 2024 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ գործն ըստ ընդդատության ուղարկել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան, որտեղ գործը մուտքագրվել է 2024 թվականի հուլիսի 9-ին:

Նման պայմաններում **ՀԿԴ/0188/01/23 (ԵԴ1/1299/01/23)** քրեական գործով **գրեթե մեկ տարի** դատարանները չեն կարողացել լուծել վարույթի առարկայական ընդդատության հարցը:

#### **Խնդիր 4. Վնասի չափի պարզմանն առնչվող խնդիրներ**

Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանում քննվող գործերն առնչվում են ֆինանսատնտեսական հաշվարկների կատարման հետ:

Հակակոռուպցիոն դատարանների կողմից քննվող քաղաքացիական գործերը վերաբերվում են պետությանը կամ համայնքին պատճառված վնասի հատուցմանը և առնչվում են ֆինանսական միջոցների անօրինական տեղաշարժերին, դրանց փոխարկմանն ու օրինականացմանը: Այս համատեքստում ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերը քննող մասնագիտացված ստորաբաժանման շրջանակներում ներգրավված են տնտեսագիտական ոլորտի մասնագետներ՝ ֆինանսական հաշվարկների վերլուծության և գնահատման հարցում աջակցելու համար:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում հակակոռուպցիոն առաջին աստիճանի դատարանի կազմը պետք է համալրվեր գլխավոր մասնագետ-տնտեսագետի 2 նոր հաստիքով, իսկ հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանը՝ առաջատար մասնագետ-տնտեսագետի 1 նոր հաստիքով<sup>60</sup>: Վերջիններս պետք է օգնեն բոլոր դատավորներին հաշվարկների մեջ: Հաստիքները նախատեսվել են Դատական դեպարտամենտի կողմից իրականացված կարիքների գնահատման հիման վրա: Համապատասխան աշխատավարձերը սահմանվել են 160,484 դրամ՝ գլխավոր մասնագետ-տնտեսագետի համար, և 139,272 դրամ՝ առաջատար մասնագետ-տնտեսագետի համար՝ առանց հարկերի: Առաջարկվող վարձատրությունը չի համապատասխանում բարձր որակավորում ունեցող մասնագետի կարգավիճակին և պատասխանատվությանը:

Թեև այս հաստիքները ավելացվել են 2024 թ. օգոստոսին, երկու հաստիքներն էլ զեկույցի հրապարակման պահին թափուր են, ինչը ևս վկայում է, որ աշխատավարձերի ցածր լինելը խոչընդոտում է հաստիքների համալրմանը:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորներից մեկը մեր կողմից իրականացված հարցազրույցների շրջանակում նշել է.

*«Հաշվարկների կատարման հետ կապված դժվարություններն էլի ծավալով են պայմանավորված: Բավական ծավալուն են այդ հաշվարկները, և դրանք վերանայելու, վերծանելու և նորից ուսումնասիրելու անհրաժեշտություն կա: Մենք բարձրագույն դատական խորհրդին այդ մասին հայտնել ենք և, դրանով պայմանավորված, հակակոռուպցիոն դատարանին տնտեսագետ մասնագետի երկու հաստիք է տրամադրվել, որպեսզի դատավորների աշխատակազմերին փորձեն օժանդակել այս հարցով: Այսինքն՝ դժվարությունը պայմանավորված է գործերի և հաշվարկների ծավալներով, դրանց՝ նորից վերծանելու և ուսումնասիրելու անհրաժեշտությամբ<sup>61</sup>»:*

Պահանջվող հաշվարկների աշխատանքի ծավալով, վճիռների հրապարակումները կարող են ձգձգվել: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճիռներից մեկով դատավորը չի հասցրել վճիռը հրապարակել օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում, քանի որ հաշվարկները ծավալուն են եղել և 7 օրով հետաձգել է վճռի հրապարակումը<sup>62</sup>:

Փաստաբանները պնդում են, որ հաշվարկները շատ ավելի բարդ են և պահանջում են փորձաքննությունների նշանակում: Նրանք հաճախ միջնորդում են ֆինանսատնտեսագիտական

<sup>60</sup> Դատավորին աջակցող տնտեսագետի հաստիք Հակակոռուպցիոն դատարանում. ինչ խնդիրներ են տեսնում կողմերը, <https://cutt.ly/peXXOv2C>

<sup>61</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>62</sup> Դատավորին աջակցող տնտեսագետի հաստիք՝ Հակակոռուպցիոն դատարանում. ինչ խնդիրներ են տեսնում կողմերը, <https://cutt.ly/OeXXPj0c>

կամ դատահաշվապահական փորձաքննությունների նշանակում, սակայն այդպիսի միջնորդությունները հաճախ մերժվում են:

*«Մենք ներկայացնում ենք, օրինակ, ֆինանսատնտեսագիտական փորձաքննություններ նշանակելու միջնորդություններ, որպեսզի դատախազության հաշվարկը ստուգվի, ու դրանք մերժվում են: Իմ մոտ հարց է՝ ինչպե՞ս է դատավորը, չլինելով տնտեսագետ, առևիտոր, ֆինանսիստ, լինելով իրավաբան, պատրաստվում այդ հաշվարկները ստուգել<sup>63</sup>»:*

Խնդիրը մասամբ է ընդունվում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից, այն հիմնավորմամբ, որ հաշվարկները մեծ բարդություն չեն ներկայացնում, բայց դրանց ծավալն է մեծ և առանց որոշակի գործիքների դժվար է կատարել:<sup>64</sup> Դատախազները նշում են, որ դատարանին հաշվարկները ներկայացնում են հնարավորինս պարզ, մատչելի ձևաչափով և դատաքննության ընթացքում պարզաբանում են դատավորի մոտ առաջացած հարցերը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշվարկների խնդիրը երբեմն դառնում է դատական ակտերի բեկանման հիմք:

Օրինակ, ՅԿԴ/0004/02/22 գործը վերաբերվում է ՄՊԸ տնօրենի կողմից 2016 թ.-ին ծավալած ձեռնարկատիրական գործունեության ընթացքում պետության հանդեպ շահութահարկի և ավելացված արժեքի հարկի մասերով գոյացած հարկերը չվճարելու դիտավորությամբ հաշվառման վայրի հարկային տեսչությանը օրենքով սահմանված կարգով ներկայացված հաշվարկներում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելուն, որի արդյունքում պետությանը պատճառվել է վնաս: Նշված գործով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է ներկայացրել պետությանը պատճառված 10.343.000 ՀՀ դրամի չափով վնասը բռնագանձելու պահանջի վերաբերյալ հայցադիմում:

Հակակոռուպցիոն դատարանը պետությանը պատճառված վնասի չափը հաստատել է և հայցը բավարարել: Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանն այս գործով գտել է, որ հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, թե կազմակերպության կողմից կատարված հարկային վճարումները, որոնք կազմում են 21.885.000 ՀՀ դրամ գումար, ինչին են ուղղված եղել:

Պատճառաբանության ներքո Վերաքննիչ դատարանը սահմանել է գործի նոր քննության ծավալը հետևյալ կերպ. «...Ամփոփելով շարադրվածը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից գործի նոր քննության ընթացքում բացահայտման է ենթակա այն հանգամանքը, թե արդյո՞ք հայցագին կազմող 10.343.000 ՀՀ դրամ գումարը ներառված է վճարված 21.885.000 ՀՀ դրամի մեջ և 2016 թ.-ին ծավալած ձեռնարկատիրական գործունեության ընթացքում պետության հանդեպ շահութահարկի և ավելացված արժեքի մասերով գոյացված հարկերը արդյո՞ք հատուցվել են պատասխանողի կողմից, թե՞ ոչ»:

Նույն գործը կրկին ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան, որտեղ հայցը բավարարել է մասնակի՝ վճռելով պատասխանողից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 9.343.000 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս:

<sup>63</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>64</sup> Դատավորին աջակցող տնտեսագետի հաստիք՝ Հակակոռուպցիոն դատարանում. ինչ խնդիրներ են տեսնում կողմերը, <https://cutt.ly/PeXXP1N8>

## **Խնդիր 5. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կիրառման հիմնախնդիրները**

### **Ուսումնասիրության երկար ժամանակահատվածը**

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը սահմանում է, որ գույքի ծագման ուսումնասիրության ժամանակահատվածը բացառիկ դեպքերում կարող է ներառել 1991 թ. սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը: Մասնավորապես, օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս օրենքով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թ. սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը:

Սահմանադրական դատարանը 2022 թ. հուլիսի 8-ին աշխատակարգային որոշում էր կայացրել՝ դիմել Վենետիկի հանձնաժողով՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի չորս հարցերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Վենետիկի հանձնաժողովը նույնպես անդրադարձել է այս խնդրին՝ քննադատելով օրենքով սահմանված երկար ժամանակահատվածը և այն որակելով անհստակ ու հիմնավորվածության պակաս ունեցող: Ըստ հանձնաժողովի՝ մինչև 1991 թվականը հետ զնալու հնարավորությունը խնդրահարույց է, քանի որ օրենքը գործնականում թույլ է տալիս հետադարձ ուժի լայն կիրառություն՝ իբրև բացառություն, սակայն դա ըստ էության հնարավոր է կիրառել, երբ իրավասու մարմինը ցանկացած ապացույց ձեռք բերի: Հանձնաժողովն ընդգծել է, որ այս ժամանակահատվածը չափազանց երկար է թվում, ինչը դժվարություններ է ստեղծում ոչ միայն գործնական կիրառման, այլև իրավական երաշխիքների ապահովման տեսանկյունից: Բացի այդ, այս երկար ժամանակահատվածը շարունակաբար աճելու միտում ունի, ինչը նշանակում է, որ ապագայում այն էլ ավելի կհեռանա իրավաչափ և հստակ սահմաններից:

Հարցազրույցների ընթացքում փաստաբանները նույնպես նշել են այս խնդիրը՝ շեշտելով, որ 1991 թ. սկսվող ուսումնասիրությունների համար ապացույցների պահպանումը օբյեկտիվորեն անհնար է, քանի որ այդ ժամանակաշրջանի արխիվները բավարար չեն, իսկ սովետային եկամուտների մասին տվյալները երբեք պատշաճ կերպով չեն փաստաթղթավորվել: Արդյունքում ուսումնասիրության ընթացքում հենվում են ոչ ամբողջական և չափազանց տեղեկատվական բազաների վրա՝ պարտադրելով, որ անձը ապացուցի, թե 1990-ական թվականներին ունեցել է օրինական եկամուտներ, ինչը հաճախ անհնար է դարձնում արդար դատաքննությունը: Այս առումով բացակայում են պատասխանողների՝ արդար դատաքննությունն ապահովելու իրավական երաշխիքները:

*«Ես 10-ից ավելի գործերով պաշտպանություն եմ անում, որևէ գործով չի եղել, որ ուսումնասիրությունը 10 տարի տևած լինի: Միշտ իջել են 90-ական թվականներ, ընդ որում այդ իջնելու գործընթացը որևէ կերպ չի հիմնավորվել<sup>65</sup>»:*

*«Ուսումնասիրության ժամանակահատվածները կամայական են սահմանված: Մինչև 91 թվական ձգվում են, կասկածի տակ է դրվում ինստուևականների գույքը, երբ պետությունը չի պահպանել հարկային տեղեկատվությունը, որպեսզի կողմը հնարավորություն ունենա գոնե դրանով ցույց տա: Ինստուևականներին չկար թղթաբանության մեծ մասը: Ընդ որում,*

<sup>65</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

պրակտիկայում հիմնականում գույքի մեծ մասի կուտակումը եղել է պաշտոնատար անձ դառնալուց առաջ և գույքը կա ֆիզիկապես, ոչ թե թղթի վրա գրել է՝ ունեմ հարյուր միլիոն դոլար<sup>66</sup>»:

«Այդ հարստությունը գալիս է ինստուևականներից, խորհրդային ժամանակներից, ծնողներից ստացված կապիտալ և այլն: Դատարանը պետք է գնահատական տա, որ երբ ես ասում եմ՝ ունեի մի միլիոն ռուբլի, որը դատախազությունը ևս տեսնում է, այդ մի միլիոն ռուբլու առնվազն կեսը ժամանակին վերածվել է դոլարի: Դատարանը պետք է որոշի՝ դա վերածվել է դոլարի, թե չէ, որովհետև ես չեմ կարող բերել ապացույց, դա որևէ տեղ չֆիքսված գործարք է ու չեմ էլ կարող գտնել այն մարդուն, ումից վստահորդս ինստուևականներին դոլար է առել: Այդ մարդիկ կամ մահացած են, կամ էլ իրենց հնարավոր չի գտնել:

Յիմա, երբ ստիպում են հիմնավորել, թե 2000 թ. ձեռք բերված գույքը որտեղից է, մարդը ասում է՝ ծնողներիցս ստացված ժառանգությունն է: Մենք բոլորս էլ գիտենք, որ կանխիկ փողը ժառանգության վկայագրում չի գրվում, մենք բոլորս էլ գիտենք, որ կանխիկ փողի ստացման ճանապարհը սովետական շրջանում եղել է միզուցե անլեգալ կամ կիսալեգալ, որովհետև Սովետական միությունը ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը չէր ճանաչում:

Խնդիրը այդ տիպի դրվագներում է, երբ մենք շատ հեռու ենք գնում, պետք է հաշվի առնենք՝ ինչ էր այն ժամանակ ԶԶ-ն. չկար բանկային համակարգ, կային բանկեր, որ ընդհանրապես լուծարվել են, փաստաթղթերը հայտնի չի՝ որտեղ են, կանխիկի շրջանառությունը կարգավորված չէր: Մաքսիմում հնարավոր է ինչ-որ վկաներ բերել՝ ցույց տալու համար, որ այս բաներն են տեղի ունեցել: Այդ վկաների ցուցմունքն էլ բավարար կհամարվի որպես ապացույց, թե չի համարվի՝ շատ հարցականի տակ է<sup>67</sup>»:

«Եթե նույնիսկ ձևակերպումներ եղել են, ուղղակի չեն պահպանվել այդ թղթերը: Օրինակ, երբ հարցում ես անում ՊԵԿ-ին, ասում ես՝ քո բազան ո՞ր թվականից սկսած է, ասում է՝ 2000-ական թվականներից է բազան ձևավորված: Այսինքն, մինչ այդ բազա էլ չկար<sup>68</sup>»:

## **Գույքի՝ ապօրինի լինելու կանխավարկածը և անհամաչափ ապացուցման բեռը**

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում գործում է գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ գույքը ապօրինի է, եթե նրա օրինականությունը չի ապացուցվել: Այս մեխանիզմի շրջանակներում դատարանը կարող է կայացնել վճիռ՝ հիմք ընդունելով այս կանխավարկածը, երբ գործի քննության ընթացքում հայցվորը, այս դեպքում՝ դատախազությունը, ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը (մեկ կամ մի քանի միավոր գույք, ինչպես նաև գույքի բաժինը) չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով: Այսինքն՝ դատարանը միայն այն դեպքում կարող է կիրառել գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը, եթե հայցվորը բավարար ապացույցներ է ներկայացնում գույքի օրինական աղբյուրների բացակայության մասին:

Յարգազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ ապացուցման բեռի բաշխման կանոնների մասով չկա բավարար կանխատեսելիությունը, որի արդյունքում ձևավորվում է ընկալում, որ գույքի

<sup>66</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>67</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>68</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

օրինականության ապացուցման բեռը ևս կրում է պատասխանողը, հատկապես այն դեպքերում երբ գույքի ձեռքբերման ապացույցներն օբյեկտիվորեն չեն պահպանվել:

Հարցված դատախազները ևս այստեղ խնդիր չեն տեսնում.

*«Կարծում եմ, որ անհամաչափ չէ բաշխումը և խնդիր չկա, որովհետև այստեղ գործում է in rem բռնագանձումը: Այսինքն, այն ուղղված է գույքի դեմ, ոչ թե անձի: Հետևաբար, անմեղության կանխավարկածը գույքի նկատմամբ տարածելն այդքան էլ նպատակահարմար չէ: Եվ դա միջազգային փորձից է բխում<sup>69</sup>»:*

## **Հայցային վաղեմության հետ կապված խնդիրներ**

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնասիրության ժամկետը կարող է տևել առավելագույնը երեք տարի: Այս ժամկետի խախտմամբ ներկայացված հայցը համարվում է ներկայացված հայցային վաղեմության ժամկետի բացթողումով:

Այստեղ հարկ է նկատել, որ օրենքի ընդունման պահին այս ժամկետը երկու տարի էր, 10.07.2022 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով երկարացվել է և դարձել երեք տարի:

Հատկանշական է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենք և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի հիմնավորման մեջ որպես անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիք սահմանվել էր ուսումնասիրությունների իրականացման սահմանափակ ժամկետներ:

Փաստաբան փորձագետների պնդմամբ, ուսումնասիրության ժամանակահատվածը փաստացի ավելի երկար է, քանի որ դատախազությունը երեք տարի ժամկետը պահպանելով դիմում է դատարան, այնուհետև դատարան դիմելուց հետո շարունակում է ուսումնասիրությունը՝ փոփոխելով նաև հայցի հիմքն ու առարկան:

Մասնավորապես, փորձագետներից մեկը նշում է.

*«Իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրության ժամանակահատված, իր ուսումնասիրությունն իրականացնում է, ավարտում է, հայց է ներկայացնում, դրանից հետո ստանում է նոր ապացույցներ ու դրանց հիման վրա ներկայացնում է նոր պահանջներ: Այսինքն՝ ուսումնասիրության արտադատական փուլը ավարտելուց հետո եզրակացության մեջ չնշված գույքերի վերաբերյալ ներկայացնում է հայցապահանջ՝ ներկայացնելով հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն:*

*Դատարանը թույլատրում է այդ միջնորդությունը, թույլատրելուց հետո ներկայացնում ենք հայցային վաղեմություն այն հիմնավորմամբ, որ երեք տարի ժամկետի խախտմամբ է ներկայացվել համապատասխան միջնորդությունը և պետք է կիրառվի հայցային վաղեմություն, բայց սա մերժվում է, և այստեղ ակնհայտորեն իմաստազրկվում է հայցային վաղեմության ժամանակահատվածը:*

*Կամ ուսումնասիրության փուլում իրավասու մարմինը ակնհայտորեն չի հասցնում սահմանված երեք տարվա ընթացքում իրականացնել ուսումնասիրությունը և ինչ-որ միջազգային հարցում է իրականացնում ու դրա հիմքով օրենքը թույլատրում է, և իրենք երկարաձգում են ուսումնասիրության ժամկետը, և երբ հարց ենք տալիս, թե ինչ նպատակ ունի այս միջազգային*

<sup>69</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

հարցումը, որտեղից ձեզ համապատասխան հիմքեր, որ ենթադրել եք, որ անձը ինչ-որ մի երկրում ունենա գույք ... իհարկե պատասխան չկա<sup>70</sup>»:

Դատախազությունն այստեղ որևէ խնդիր չի տեսնում.

«Ոչ թե սահմանափակ կիրառում ունի, այլ հստակ օրենսդրական կարգավորում կա: Օրենքը նախատեսում է, որ կա կարգավորում, հայցային վաղեմության հաշվարկը սկսվում է ուսումնասիրությունը սկսելու պահից: Այսինքն՝ ուսումնասիրությունը սկսելուց 3 տարին է: Հայցային վաղեմությունն ավարտվում է, երբ անցնում է այդ ժամկետը<sup>71</sup>»:

## Խնդիր 6. Պարզեցված վարույթները և ապացուցման բաշխումը

Դատական ակտերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի մի մեծ հատված դատարաններում քննվում է պարզեցված վարույթի ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջներն առաջին ատյանի դատարանը քննում է պարզեցված վարույթի կարգով:

Առաջին ատյանի դատարանը կարող է պարզեցված վարույթի կարգով քննել նաև այլ գործեր, եթե.

- ✔ Առկա է գործին մասնակցող բոլոր անձանց միջև կնքված՝ գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ գրավոր համաձայնություն, և հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում գործին մասնակցող որևէ անձ չի առարկել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեմ:
- ✔ Մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշում կայացնելը գործին մասնակցող որևէ անձ չի առարկել հայցի դեմ կամ չի ներկայացվել հակընդդեմ հայց:
- ✔ Հայցի առարկայի փոփոխության արդյունքում հայցապահանջը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը:
- ✔ Պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան:

Գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ այն դեպքերի, երբ.

- ✔ Դատարանը նկնլ է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ:
- ✔ Ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն:
- ✔ Հայցվորը հրաժարվել է պահանջից:
- ✔ Կողմերը կնքել են հաշտության համաձայնություն:

Օրենսգիրքը սահմանում է, որ պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում կայացվող վճռի պատճառաբանական մասը պարունակում է նշում հայցվորի փաստարկները դատարանի պատճառաբանությունն համարելու վերաբերյալ, ինչպես նաև գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանություն:

<sup>70</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>71</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանի առաջին ատյանի դատարանի որոշումները հետագայում բեկանվել են Վերաքննիչ դատարանում, (օրինակ, ՅԿԴ/0053/02/22, ՅԿԴ/0042/02/23 գործերով), քանի որ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել գործը պարզեցված վարույթով քննելու մասին, ինչի մասին պատշաճ չի ծանուցել դատավարության կողմին: Արդյունքում անձն անգամ տեղյակ չի եղել, որ իր մասնակցությամբ Հակակոռուպցիոն դատարանում գործ է քննվում:

Թեև ՀՀ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատական ակտը բեկանելիս իր հիմնավորումներում անդրադարձել է պատասխանողի՝ պատշաճ ձևով ծանուցված չլինելուն, կարծում ենք, որ այստեղ հիմնական խնդիրը գալիս է գործը պարզեցված վարույթով քննելու որոշումից:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբեմն պարզեցված վարույթի կարգով են քննվում նաև շատ մեծ հայցագնով գործեր: Օրինակ ՅԿԴ/0233/02/23 գործով հայցագրի չափը կազմել է 21,802,400 ՀՀ դրամ: Առավել հետաքրքիր է այն փաստը, որ գործը կասեցված է եղել ՀՀ տնտեսական դատարանում դեռ 2007 թ.-ից: Դատարանը գործը պարզեցված վարույթով քննելու հիմնավորման մեջ հաշվի է առել այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ մինչև սույն գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին Դատարանի որոշում կայացնելը, գործին մասնակցող որևէ անձ չի առարկել հայցի դեմ, ինչպես նաև չի ներկայացվել հակընդեմ հայց: Լսելով հայցվորի ներկայացուցչի դիրքորոշումը՝ դատարանը գտել է, որ առկա է սույն հակակոռուպցիոն քաղաքացիական գործով պարզեցված վարույթ կիրառելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ գործերը պարզեցված վարույթի կարգով քննելու պարագայում նիստ չի նշանակվում, Դատարանը այս պարագայում չի կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում: Արդյունքում չեն պարզվում գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները:

## **Խնդիր 7. Գործի լուծման համար ոչ էական նշանակություն ունեցող նախադեպերի կիրառությունը**

ՀՀ դատական համակարգում նախադեպերի կիրառումը կարևոր դեր ունի արդարադատության իրականացման գործընթացում: Սակայն երբ դատարանները վկայակոչում են ոչ էական կամ համանման նախադեպեր՝ առանց դրանց կիրառելիությունը բավարար չափով հիմնավորելու, դա բացասաբար է ազդում դատական ակտի որակի և առհասարակ՝ արդարադատության վրա: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ իսկապես կիրառելի նախադեպերը դուրս են մնում ուշադրությունից:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Դատարանների կողմից ՄԻԵԴ նախադեպեր վկայակոչելիս կարևոր է հիմնավորել, թե ինչու է վկայակոչված նախադեպը տիպային օրինակ՝ տվյալ գործով որոշում կայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը քրեական թիվ ՎԲ-17/08 գործով նշել է, որ ՄԻԵԴ դատական ակտը ոչ կիրառելի կամ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա



և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: ՄԻԵԴ դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման:

Քրեական գործերով վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից 18-ում նկատվում է Վճռաբեկ դատարանի որոշումների մեխանիկական կրկնություն: Թեև դրանք գործի լուծման համար վերաբերելի են, սակայն հաճախակի են կիրառվում և դատարանի կողմից պատշաճ մենաբանման չեն ենթարկվում: Արդյունքում, դատական ակտը պարունակում է միայն նախկինում մեկնաբանված նախադեպային որոշումը՝ առանց տվյալ ակտի առանձնահատկություններն ընդգծելու:

Մասնավորապես, ուսումնասիրված դատական ակտերում հաճախ է մեջբերվում Վճռաբեկ դատարանի՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով ԵԿԴ/0252/01/13 որոշումը, որը վերաբերում է ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներին: «Հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշի ելակետը հենց այս որոշումն է: Մասնավորապես, գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

Դատական ակտերում ապացույցների բավարարությունը որոշելու համար կիրառվում են հենց այս նախադեպով հաստատված չափանիշները: Դրանք են.

- 1** Անմեղության կանխավարկածը,
- 2** Վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3** Դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

Նույն դիրքորոշումն արտահայտվում է նաև Վճռաբեկ դատարանի՝ Ս. Սաքսանյանի գործով ԵԵԴ/0058/01/10 որոշմամբ, որը նույնպես ուսումնասիրված դատական ակտերի հիմնական մասում օգտագործվում է:

Ուսումնասիրված դատական ակտերի մեծ մասում մեջբերվում է նաև Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թ. մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 Վճռաբեկ դատարանի որոշումը, հատկապես այն հանգամանքի առնչությամբ, թե անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելը դատավարության որ կողմի պարտականությունն է:

Ապացույցների գնահատումը դատավորի ներքին համոզմունքի հիման վրա պարտադիր լինելու հանգամանքն էլ ամրագրված է Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թ. փետրվարի 12-ի թիվ ԵԶԴ/0632/01/08 որոշմամբ, ինչը ևս ելակետային է դատական ակտերի վերջնական հանգուցալուծման համար:

Ուսումնասիրված դատական ակտերի մեծ մասում գերակշռում է Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայի հենց այս որոշումների օգտագործումը՝ որպես իրավունքի ելակետ, ինչը չենք կարող ասել այն դատական ակտերի համար, որոնց դեպքում կիրառվել է համաձայնեցման վարույթ: Այս դեպքում գործերը լուծվում են միջնորդության և դրա շուրջ համաձայնության գալու պրակտիկայով:

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ նախադեպերին, ապա դրանք քրեական գործերով գրեթե չեն օգտագործվում, իսկ քաղաքացիական գործերով կրկնվում են մի քանի նախադեպեր, որոնք առանձնապես Նշանակություն չունեն գործի լուծման համար: Օրինակ, շատ հաճախ կիրառվում է Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով ՄԻԵԴ 2003 թ. փետրվարի 11-ի վճիռը, որպեսզի դատարանը հիմնավորի քաղաքացիական դատավարության գործով հայց հարուցելու իրավաչափության հարցն այն պարագայում, երբ միևնույն գործով առկա է քրեական գործ ևս: Նշված նախադեպը կիրառվել է 34 քաղաքացիական գործով:

*«ՄԻԵԴ որոշումները ցիտվում են ուղղակի շղարշ տալու համար, որ իբր վճիռ են գրում ու անհմաստ ծավալ են տալիս վճռին<sup>72</sup>»:*

*«Տեսել եմ ՄԻԵԴ-ի ցիտում միջանկյալ հարցերով: Օրինակ, ներկայացվում է հակընդդեմ հայց, հակընդդեմ հայցը վարույթ ընդունվելը մերժվում է, վկայակոչվում է ՄԻԵԴ այն որոշումը, որ վեճը իր բնույթով պիտի լինի լուրջ»:*

*Կարծում եմ, որ մեխանիկական copy-paste է տեղի ունենում. երբ ես հակընդդեմ հայց եմ ներկայացնում ու ասում եմ՝ այս ուսումնասիրությունը սկսելով կամ ուսումնասիրության ժամկետը երկարացնելով մինչև 91 թվական՝ իմ վստահորդի իրավունքը խախտվել է, դատարանը հերթապահ ձևակերպումներով ՄԻԵԴ է վկայակոչում, որը եղել է լրիվ այլ փաստական հանգամանքներում:*

*Այդ մեր դատավորների ընդհանուր թերությունն է, մենակ հակակոռուպցիոնը չի: Դատավոր կար, որ ցանկացած հայցով վճիռը սկսում էր ՄԻԵԴ արդար դատաքննության կոնցեպտով: Դա երևի գալիս է նրանից, որ ժամանակին վճռի պատճառաբանվածության նորմալ կանոններ չեն եղել ու չեն կիրառվել: Մինչև 2005-2007 թթ. մենք ունեցել ենք էջուկեսանոց վճիռներ, դրանից հետո անցել ենք հակառակ ծայրահեղությանը<sup>73</sup>»:*

Միևնույն ժամանակ, փաստաբանները գտնում են, որ այն նախադեպերը, որոնք իսկապես կիրառելի են հակակոռուպցիոն գործերով, հաճախ անտեսվում են դատավորների կողմից: Սա

<sup>72</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

<sup>73</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

հանգեցնում է իրավիճակների, երբ գործի իրական լուծմանը նպաստող կարևոր նախադեպերը չեն կիրառվում և չեն մեկնաբանվում:

Այստեղ կարևոր է հաշվի առնել այն, որ ինդիորը ոչ թե նախադեպերի քանակի մեջ է, այլ դրանց կիրառելիության: Հարցն այն է, թե որքանով են այդ նախադեպերը բուն գործի փաստական հանգամանքներին համահունչ և որքանով են դրանք ազդեցություն ունենում գործի իրական լուծման վրա:

## **Խնդիր 8. Հակակոռուպցիոն դատարանների ֆիզիկական հասանելիությունն ու մատչելիությունը**

Արդարադատության մատչելիության սկզբունքը արդար դատաքննության կարևոր բաղկացուցիչ սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքն իր մեջ ներառում է ոչ միայն դատարան դիմելու ընթացակարգերի մատչելիությունը, այլ նաև՝ դատարանների գտնվելու վայրի մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը համապատասխանաբար Երևան քաղաքի, մարզի կամ մարզերի տարածքն է: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն ունի կենտրոնական և այլ նստավայրեր: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ մասնագիտացված դատարանների դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է: Մասնագիտացված դատարանների կենտրոնական նստավայրերը գտնվում են Երևան քաղաքում: Մասնագիտացված դատարանները կարող են նստավայրեր ունենալ մարզերում:

Հակակոռուպցիոն դատարանները տեղակայված են Երևան քաղաքում: Հայաստանի մարզերի բնակիչների համար այս կենտրոնացվածությունը մի շարք տրանսպորտային, ֆինանսական և ժամանակային խոչընդոտներ է ստեղծում: Հաճախ դրա պատճառով կողմերը չեն ներկայանում դատարան:

Ավելին, դեպքեր են լինում, երբ մարդիկ հասնում են դատարան՝ միայն պարզելու համար, որ նիստը հետաձգվել է: Արդյունքում, նրանք կրում են անիմաստ ժամանակային ու նյութական վնասներ, ինչը ոչ միայն խաթարում է դատարանների արդյունավետությունը, այլև նվազեցնում է հանրության վստահությունը արդարադատության համակարգի նկատմամբ:

Դատարանների (ոչ միայն հակակոռուպցիոն) ֆիզիկական մատչելիության խնդիրը գյուղական բնակավայրերի քաղաքացիների համար մատնանշվել է նաև Համաշխարհային բանկի 2023թ. «Հայացք ապագային» զեկույցում<sup>74</sup>:

Միևնույն ժամանակ, հետազոտության շրջանակներում իրականացված հարցազրույցներում ներգրավված փաստաբանները նաև նշում են, որ դատարանի տեղակայումն ինքնին շատ անհարմար վայրում է, քանի որ շրջակայքում ամբողջությամբ շինարարություն ու փոշի է:

*«Շենքը շատ վատ տեղում է գտնվում ու եթե ճիշտն ասես, հարիր էլ չի: Այդ շենքում քննվում են հանրապետության ամենակարևոր գործերի մեծ տոկոս: Այդ լուպսիան հարիր չի հակակոռուպցիոն դատարանին, ու այդ ճանապարհը, որ իջնում է հակակոռուպցիոն դատարան, պետք է սարքվի ինչ-որ մի ձևով<sup>75</sup>»:*

<sup>74</sup> Համաշխարհային բանկ, «Հայաստան, Աջակցություն արդարադատության ոլորտի բարեփոխումներին, Հայացք ապագային», 2023 թ., <https://cutt.ly/XeXXAN7I>

<sup>75</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

«Յենց առաջինը դատարանի տեղադիրքը շատ անհարմար է, դատարան տանող ճանապարհը գրունտային, փոսերով լեցուն ճանապարհ, շրջակայքում որևէ սնվելու հնարավորություն չկա, հաշվի առնելով այն, որ դատավորները մեկ ամբողջ օրով նիստեր են դնում և տալիս են ընդամենը մեկ ժամ ընդմիջում: Այդ մեկ ժամ ընդմիջումը որևէ ձևով համադրելի չէ դատարանի շրջակայքում հանգստանալու, սնվելու հետ»<sup>76</sup>:

## **Խնդիր 9. Դատարանի կողմից դատական ծախսերի հարցի սխալ լուծումը**

Ուսումնասիրված դատական գործերից մեկում սխալ է լուծվել դատական ծախսերի հարցը:

ՀԿԴ/0007/02/23 գործով, ըստ վճռում շարադրված տվյալների, ՀՀ դատախազությունն առաջին ատյանի դատարան դիմելիս վճարել է պետական տուրք և Հակակոռուպցիոն դատարանը վճռով չի անդրադարձել արդեն իսկ վճարված պետական տուրքին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասը, ի թիվս այլնի, պետք է պարունակի գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի եզրահանգումները:

Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով:

Դատարանը «Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի մասով» վերտառությամբ բաժնում նշել է, որ «սույն գործով դատական ծախսը կազմված է միայն պետական տուրքից, որի վճարումից հայցվորը ազատված է օրենքի ուժով, իսկ հայցը ենթակա է մերժման, հետևաբար, դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված»:

Մինչդեռ վճռում շարադրված է, որ ՀՀ առաջին ատյանի դատարան դիմելիս ՀՀ Գխավոր դատախազությունը վճարել է 32.637 ՀՀ դրամ պետական տուրք: Հակակոռուպցիոն դատարանի կողմից պետական տուրքի՝ արդեն իսկ վճարված լինելու փաստին անդրադարձ չկա: Միևնույն ժամանակ, վճռում որևէ նշում չկա առ այն, որ վճարված պետական տուրքի գումարը վերադարձվել էր:


<sup>76</sup> Մեջբերում փորձագիտական հարցազրույցից:

### 3.2 Դատական ակտերի քանակական հետազոտության արդյունքներ

Ստորև ներկայացված տվյալներն արտացոլում են ՀՀ Հակակոռուպցիոն դատարանում թե՛ քաղաքացիական, թե՛ քրական գործերի քննության արդյունքներն ու իրավիճակը՝ 2024 թ. օգոստոս ամսվա դրությամբ:

Դատական գործերի՝ շարունակաբար թարմացվող տվյալները հասանելի են JusticeBarometer.am կայքում, ուստի, հնարավոր է, որ դրանք չհամընկնեն այս զեկույցում ներկայացված տվյալներին:

Ստորև ներկայացված չեն նաև պետությանը պատճառված և բնեղենով վերականգնված վնասի վերաբերյալ տվյալները: Դատական վճիռների և հաշտության համաձայնությունների հիման վրա քաղաքացիական գործերով վերականգնված վնասն առավել ինտերակտիվ և հանրամատչելի ձևաչափով (ՀՀ քարտեզ) ցուցադրված է նշված կայքում:



### Քաղաքացիական գործեր

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են 87 քաղաքացիական գործերի՝ առաջին ատյանի դատարանում 2023-2024 թթ. կայացված վերջնական դատական ակտեր: Դիտարկված ակտերի մեծ մասը՝ 71%-ը (62) կայացվել են 2023 թ., 29%-ը (25)՝ 2024 թ.:

Կայացված դատական ակտերի բաշխումն ըստ դատավորների՝ ներկայացված է ստորև բերված գծապատկերում:


## Գծապատկեր 1.



Հարկ է ընդգծել, որ բերված գծապատկերում արտացոլված է Հակակոռուպցիոն դատարանի գործունեության մեկնարկից (2022 թ.) մինչև 2024 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում քննված բոլոր քաղաքացիական գործերի բաշխումը: Կան գործոններ, որոնք ազդեցություն ունեն նման բաշխման վրա, օրինակ, այն հանգամանքը, թե տվյալ դատավորի աշխատանքային գործունեությունը երբ է մեկնարկել, որքան հաճախ է տվյալ դատավորը արձակուրդ գնացել կամ զբաղված եղել՝ մասնագիտական դասընթացներին մասնակցությամբ, և այլն:

Դիտարկված բոլոր գործերում ներգրավված պատասխանողների բաշխումը ներկայացված է հաջորդ գծապատկերում, ինչից պարզ է դառնում, որ պատասխանողների բացարձակ մեծամասնությունը (94%) ֆիզիկական անձինք են:

## Գծապատկեր 2.



Հայցային վաղեմության ժամկետն անցնելու հիմքով դատարանը մերժել է ներկայացված բոլոր հայցադիմումների 13%-ը:<sup>77</sup> Մերժված հայցերի ծավալի՝ մեծաքանակ կամ փոքրաքանակ լինելու մասին գնահատականն առանձին քննարկման հարց է՝ կախված կիրառելի չափանիշներից:

Սակայն, անկախ այն հանգամանքից, թե որքան անհանգստացնող է մերժված հայցերի ծավալը, դրանց վերաբերյալ հանրային մտահոգությունները փարատելու կարիք կա: Մասնավորապես, հայցային վաղեմության ժամկետներն անցնելու տարածված պատճառների վերհանումն ու հրապարակումը թույլ կտա.

- Մի կողմից՝ դատախազությանը՝ բարձրացնելու հայցերի պատրաստման արդյունավետությունը:
- Մյուս կողմից՝ հանրությանը՝ ունենալու երևույթի պատճառների վերաբերյալ ամբողջական պատկեր և իրավապահ համակարգի նկատմամբ վստահության առավել բարելավված մակարդակ:


Պետությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջ էր առկա քննված գործերի 76%-ում:

Բոլոր գործերում հայցապահանջի ընդհանուր գումարը կազմել է 8,814,588,370 ՀՀ դրամ:

Հաջորդ գծապատկերում երևում է, թե որքան գործ կար հայցապահանջի գումարի յուրաքանչյուր միջակայքում: Մասնավորապես, 25 գործերից յուրաքանչյուրում հայցապահանջի չափը չի գերազանցել մեկ միլիոն դրամը, և առավել մեծ չափի՝ 50 միլիոն դրամը գերազանցող հայցապահանջ է եղել 6 գործով:

### **Գծապատկեր 3.**


<sup>77</sup> Ներկայումս քննարկվում է հայցային վաղեմության ժամկետների մասով օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը:



Պատարանը գործի քննության արդյունքում վճռել է հոգուտ Հայաստանի Հանրապետության պատասխանողներից բռնագանձել պետությանը պատճառված 7,466,886,885 ՀՀ դրամի վնաս: Նմանատիպ գործերի (որտեղ վերականգնվել է պետությանը պատճառված վնասը՝ ամբողջությամբ կամ մասնակի) քանակը 34 է կամ՝ բոլոր գործերի 39%-ը:

Հաջորդ գծապատկերում երևում է գործերի քանակն՝ ըստ վերականգնված վնասի չափի:

#### Գծապատկեր 4.



Բերված գծապատկերից հատկապես հետաքրքրական է այն գործերի վերաբերյալ տվյալը, որտեղ վնասի չափը համեմատաբար մեծ է՝ 50 միլիոն դրամից ավելի: 3-րդ և 4-րդ գծապատկերների



համեմատությունից պարզ է դառնում, որ նմանատիպ 6 գործերից 5-ով պատճառված վնասի վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռ է առկա, ինչն արդյունավետության տեսանկյունից կարելի է բարձր գնահատել:

Վերականգնվող վնասի չափը կազմել է պատճառված վնասի 84.7%-ը (հայցապահանջը՝ 8,814,588,370 դրամ, որից վերականգնվողը՝ 7,466,886,885 դրամ):

Հետաքրքիր է, որ թեև հաշտության համաձայնությամբ են ավարտվել քննված գործերից ընդամենը 5-ը<sup>78</sup>, սակայն դրանցում վերականգնված վնասի չափը բավական մեծ է՝ 2,707,634,065 դրամ<sup>79</sup>:

Այսպիսով, ընդամենը 5 գործ հաշտության համաձայնությամբ ավարտելու արդյունքում վերականգնված վնասը մյուս բոլոր գործերի (82 գործ) քննության արդյունքում վերականգնվող վնասի շուրջ 36.3%-ն է: Բացի այդ, հաշտության համաձայնությամբ գործն ավարտելու պրակտիկան թույլ է տալիս եականորեն ինայել ինչպես մարդկային ռեսուրսն ու ժամանակը, այնպես էլ՝ բոլոր կողմերի ֆինանսական ծախսերը: Նշված հանգամանքները վկայում են հաշտության համաձայնության ինստիտուտի արդյունավետության օգտին:

Կայուն պրակտիկա է նաև այն, որ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունները, որպես կանոն, հաստատվում են դատարանի կողմից: Մինչ այս պահը դատարանի կողմից չհաստատված հաշտության համաձայնություններ չեն եղել: Սա հիմնավորվում է ինչպես սույն հետազոտության՝ ուսումնասիրված դատական ակտերի արդյունքում, այնպես էլ՝ ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան ստացված տվյալների միջոցով:

Չնայած վերոնշյալին, հաշտության համաձայնության ինստիտուտը դեռ լայնածավալ կիրառություն չունի: ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչները դա մեկնաբանում են հիմնականում ապօրինի գույքի ծավալի շուրջ կողմի և դատախազության մոտեցումների տարբերությամբ (անհամաձայնությամբ):

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման միջոցով ստացված մի շարք տվյալներ, որոնցից պարզ է դառնում, որ պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու միջոցով 2018-2022 թթ. վերադարձված դրամական միջոցների ծավալը հիմնականում չի գերազանցել պետությանը պատճառված վնասի անգամ մեկ տոկոսը: Յուրաքանչյուր տարվա համար միջինում այն կազմել է 0,25%, ինչը պատճառված վնասի չնչին չափն է:

2023 թ. նկատվում է այս իրավական մեխանիզմի արդյունավետության էական աճ. վերականգնված վնասը կազմում է պատճառված վնասի ավելի քան 5%-ը:

Կարևորելով քրեական ոլորտից դուրս դատախազության բացառիկ լիազորության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու սահմանադրական լիազորության առանցքային դերն ու նշանակությունը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2022 թ. սեպտեմբերից հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար անհրաժեշտ հանգամանքների վերհանման ուղղությամբ: Նշված հանգամանքով էր պայմանավորված նաև «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՅ-104-Ն օրենքի հստակեցումն առ այն, որ «համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ՝ ՀՀ դատախազությանը հնարավորություն ընձեռելով

<sup>78</sup> Ի դեպ, նշված բոլոր դեպքերում դատարանը բավարարել է կողմերի՝ հաշտության համաձայնություն կնքելու մասին դիմումը:

<sup>79</sup> Կարևոր է կրկին հիշատակել, որ այստեղ արտացոլված է միայն վերականգնվող գումարի չափը՝ ՀՀ դրամով: Պետությանը վերադարձվող գույքի ծավալն արտացոլված է JusticeBarometer.am կայքում առկա ՀՀ քարտեզում:

իրավասու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքային շահերի խախտման փաստերով հայց չներկայացնելու դեպքում հարուցել համայնքային շահերի պաշտպանության հայց:

**Աղյուսակ 1.** Պետությանը պատճառված վնասը և պետական շահերի պաշտպանության միջոցով վերադարձված դրամական միջոցները 2018-2023 թթ.

Տարեթիվ	Պետությանը պատճառված վնասը (ՀՀ դրամ)	Պետությանը վերադարձված դրամական միջոցների ծավալը	Վերադարձված դրամական միջոցների համամասնությունը (տոկոսը)՝ պատճառված վնասի նկատմամբ
2018 թ.	11,353,601,000	9,252,000	0.081%
2019 թ.	1,067,000,000	8,511,000	0.798%
2020 թ.	12,225,284,000	10,939,000	0.089%
2021 թ.	8,063,184,900	22,061,000	0.274%
2022 թ.	61,084,059,000	11,106,000	0.018%
2023 թ.	98,983,559,000	5,063,193,000	5.11%


Դատաքննության արդյունքում կայացված որոշումների բաշխումը ներկայացված է մյուս գծապատկերում, ինչից պարզ է դառնում, որ հայցի բավարարման (ամբողջությամբ կամ մասնակի) և հայցի մերժման համամասնությունը գրեթե հավասար է՝ 48% և 49% համապատասխանաբար<sup>80</sup>:

Իհարկե, քննված յուրաքանչյուր գործ եզակի է՝ իր փաստական հանգամանքներով, սակայն այս թվերը կարող են անուղղակի վկայություն լինել այն բանի, որ դատարանն առնվազն չի առաջնորդվում «մեղադրական մոտեցմամբ» և չի բավարարում դատախազության ներկայացրած անխտիր բոլոր հայցերը: Վերոնշյալը հայաստանյան դատական համակարգին ներկայացվող հաճախակի քննադատական տեսակետներից է, և դրական է այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն դատարանում քաղաքացիական գործերի քննության ելքերը հավասարակշռված պատկեր են ներկայացնում:

## Գծապատկեր 5.

<sup>80</sup> Պետք է հաշվի առնել, որ այստեղ տարբերակված չէ ապօրինի գույքի բռնագանձման՝ բավարարված կամ մերժված հայցերի վիճակագրությունը՝ հաշվի առնելով նմանատիպ հայցերով ավարտված գործերի սահմանափակ քանակը: Ներկայացված վիճակագրությունը վերաբերում է բոլոր տեսակի հայցերին:

## Դատաքննության արդյունքում կայացված որոշումը




Բերված գծապատկերում հատկանշական են այն գործերը (1%), որոնց առնչությամբ դատարանը որոշել է հայցը թողնել առանց քննության: Որպես հիմնավորում՝ դատարանը մատնանշել է այն հանգամանքը, որ հայցվորը՝ դատախազության ներկայացուցիչը, ծանուցված լինելով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, դրանց չի ներկայացել, նրա կողմից չի ներկայացվել միջնորդություն՝ գործի քննությունը հետաձգելու կամ դատական նիստը կամ գործի քննությունն իր բացակայությամբ իրականացնելու մասին, իսկ պատասխանողի կողմից չի ներկայացվել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ միջնորդություն: Ուստի գործերը թողնվել են առանց քննության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով:

Քննված բոլոր 87 գործերով կայացել է 391 դատական նիստ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր գործով միջինում կայացել է 4.49 դատական նիստ:

Հաջորդ գծապատկերում երևում է դատական գործերի բաշխումն ըստ այն հանգամանքի, թե քանի նիստ է կայացել տվյալ գործով: Ինչպես տեսնում ենք, գործերի 30%-ում տեղի է ունեցել ընդամենը մեկ, երկու կամ երեք նիստ: Եվ գրեթե նույնքան է այն գործերի ծավալը (31%), որտեղ նիստերի քանակը եղել է 6 կամ ավելին:


### Գծապատկեր 6.



Չաջորդ՝ 7-րդ գծապատկերից պարզ է դառնում, որ գործերի 6%-ի դատաքննությունն<sup>81</sup> է տևել մեկ տարուց ավելի, իսկ 17%-ի դատաքննությունն ավարտվել է կես տարուց մինչև մեկ տարի ժամանակահատվածում (180-ից մինչև 365 օր):

Գործերի բացարձակ մեծամասնության՝ մոտ 78%-ի դատաքննությունն ավարտվել է մինչև կես տարվա ընթացքում: Ընդ որում, այստեղ էլ շատ են գործերը, որոնց դատաքննությունն ավարտվել է ընդամենը երկու, երեք կամ չորս ամսում:

### Գծապատկեր 7.




<sup>81</sup> Դատաքննությունն նշանակելու պահից՝ մինչև վերջնական դատական ակտի կայացումը:

Համադրելով թե՛ դատաքննության տևողության, թե՛ կայացած դատական նիստերի քանակների տվյալները՝ փորձագիտական հարցազրույցների արդյունքների և ՀՀ այլ դատարաններում գործերի քննության ժամկետների հետ՝ կարելի է պնդել, որ Հակակոռուպցիոն դատարանում գործերի քննության ժամկետներն ավելի սեղմ են և ողջամիտ ժամկետներն էլ պահպանված են:

Դատարանում գործը վարույթ ընդունելու (գործը Հակակոռուպցիոն դատարանի քննությանը հանձնելուց՝ մինչև գործը վարույթ ընդունելու<sup>82</sup> և/կամ նախնական դատական նիստ անցկացնելու մասին որոշումը) տևողությունն արտացոլված է 8-րդ գծապատկերում:

Գործերի զգալի մասում (38%) գործը վարույթ ընդունելը տևում է 4 ամսից մինչև 6 ամիս: Նշանակալի է նաև այն գործերի ծավալը (26%), որոնց վարույթ ընդունելու տևողությունն ավելի երկար է՝ կես տարուց մինչև մեկ տարի: Վերջապես, քիչ չէ այն գործերի ծավալը (7%), որոնց վարույթ ընդունելը մեկ տարուց ավելի է տևում:

### Գծապատկեր 8.



Այսպիսով, թեև վերը տեսանք, որ հակակոռուպցիոն դատարանում հիմնականում պահպանված են գործերի քննության ողջամիտ ժամկետները, սակայն այդ ժամկետներին պետք է «գումարել» նաև դատարանում գործը վարույթ ընդունելու ժամկետները, որոնք գործերի բացարձակ մեծամասնության դեպքում բնավ սեղմ չեն: Գործերի 71%-ի պարագայում դրանց՝ վարույթ ընդունելու տևողությունը գերազանցում է չորս ամիսը:

Իհարկե, սա էլ ունի որոշ օբյեկտիվ պատճառներ. գործերի մի մասի քննությունն արդեն մեկնարկել էր ՀՀ առաջին ատյանի դատարաններում և դրանց փոխանցումը՝ նորաստեղծ Հակակոռուպցիոն դատարան, օբյեկտիվորեն, լրացուցիչ ժամանակ էր պահանջում: Անցումային այս շրջանի ավարտից հետո գործը վարույթ ընդունելու ժամկետներն ավելի սեղմ են դարձել:

Պարզեցված վարույթի կարգով է քննվել յուրաքանչյուր 5-րդ գործը (21%):

<sup>82</sup> Դատական ակտը կայացրած դատավորի կողմից:

Վերաքննիչ բողոք է ներկայացվել կայացված դատական ակտերի 57%-ի պարագայում: Ներկայացված բոլոր բողոքների 78%-ն ընդունվել է վարույթ:

Դեպքերի մեծ մասում (70%) վերաքննիչ բողոք ներկայացնողը դատախազությունն է, 22% դեպքերում՝ պատասխանողը: Եվս մի քանի գործով վերաքննիչ բողոք են ներկայացրել և դատախազությունը, և պատասխանողը:

Հետազոտության ավարտի պահին՝ 2024 թ. օգոստոսին, 31 գործով արդեն առկա էր վերաքննիչ դատարանի որոշում:

Վերաքննիչ քննության արդյունքում առկա է հայցերի լուծման հետևյալ բաշխվածությունը.

- 11 գործով ստորադաս դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է դատարան՝ նոր քննության:
- 11 գործով ստորադաս դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:
- 7 գործով փոփոխվել է ստորադաս դատարանի դատական ակտը:

Մեկական գործերով.

- Մի մասով վճիռը բեկանվել է և ուղարկվել է նոր քննության, մի մասով վճիռը թողնվել է անփոփոխ
- Դատարանի վճիռը բեկանվել է և հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը:

Վճռաբեկ բողոք է ներկայացվել կայացված վերաքննիչ դատական ակտերից յուրաքանչյուր 3-րդի դեպքում՝ 10 գործով: Դրանց բացարձակ մեծամասնությունը (9 գործ) դատախազության կողմից է, և միայն մեկը՝ պատասխանողի կողմից:

## **Քրեական գործեր**


Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են 97 քրեական գործերի՝ առաջին աստիճանի դատարանում 2022-2024 թթ. կայացված վերջնական դատական ակտեր: Դրանցում ներգրավված է եղել 169 մեղադրյալ:

Քննված բոլոր գործերում պատճառված վնասի չափը կազմել է 71,801,199 ՀՀ դրամ: Այս թիվն անհամեմատ փոքր է քաղաքացիական գործերում պատճառված վնասի հայցապահանջից (չի գերազանցում դրա անգամ մեկ տոկոսը):

Հատկանշական է, որ քրեական գործերի գերակշիռ մասում մոտ (80%) պատճառված վնասը վերականգնվել է ամբողջությամբ, մնացած եզակի դեպքերում մասնակիորեն:

9-րդ գծապատկերը ներկայացնում է յուրաքանչյուր գործում մեղադրյալների միջին թիվը, ինչից պարզ է դառնում, որ գործերի գերակշիռ մեծամասնության պարագայում (72%) գործով մեկ մեղադրյալ է ներգրավված: Գործերի 22.6%-ում երկու կամ երեք մեղադրյալ է ներգրավված: Վերջապես, 5 և ավելի մեղադրյալ կա գործերի 4.3%-ում:

## **Գծապատկեր 9.**



Ի տարբերություն քաղաքացիական գործերի, որտեղ վերլուծության առանցքային միավորները հիմնականում դատական գործերն են, քրեական գործերի դեպքում տվյալները վերլուծվել են թե՛ ըստ դատական գործերի, թե՛ ըստ մեղադրյալների: Բացի դատական գործերը, նաև մեղադրյալներին առնչվող քանակական տվյալների վերլուծությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պատժի քաղաքականությունն անհատականացված է և դատարանի դիրքորոշումն արտահայտվում է յուրաքանչյուր մեղադրյալի և վերջինիս արարքի նկատմամբ:

Ուսումնասիրված դատական ակտերի գերակշիռ մասը՝ 72%-ը կայացվել են 2023 թ., 23%-ը՝ 2024 թ. և միայն 5%-ը՝ 2022 թ.:

Կայացված դատական ակտերի բաշխումն ըստ դատավորների՝ ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

**Գծապատկեր 10.**

## Դատական ակտերն ըստ դատավորների



Ինչպես քաղաքացիական գործերի պարագայում, այստեղ նույնպես կարիք կա ընդգծելու, որ գծապատկերում արտացոլված Է Հակակոռուպցիոն դատարանի գործունեության մեկնարկից (2022 թ.) մինչև 2024 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում քննված բոլոր քրեական գործերի բաշխումը: Բաշխման վրա ազդող տարբեր գործոններ (օրինակ, թե տվյալ դատավորի աշխատանքային գործունեությունը երբ է մեկնարկել, որքան հաճախ է վերջինս արձակուրդ գնացել, և այլն) այս գծապատկերում հաշվի առնված չեն:


Մեղադրյալների 84.8%-ը տղամարդիկ են, 15.2%-ը՝ կանայք:

Դատավճռի կայացման պահին մեղադրյալների տարիքային կազմերը ներկայացված են ստորև բերված գծապատկերում: Ինչպես տեսնում ենք, ամենամեծ տարիքային խմբերը 34-41 և 42-49 տարեկաններն են՝ գրեթե հավասար ներկայացվածությամբ:

### Գծապատկեր 11.



## Մեղադրյալների բաշխումն ըստ տարիքային խմբերի




Քննված յուրաքանչյուր գործի ընթացքում միջինում կայացել է 5.2 դատական նիստ: Ինչպես վերը տեսանք, քաղաքացիական գործերում նիստերի միջին քանակն ավելի ցածր է՝ 4.49 նիստ:

Հաջորդ գծապատկերում երևում է դատական գործերի բաշխումն ըստ այն հանգամանքի, թե քանի նիստ է կայացել տվյալ գործով: Ինչպես տեսնում ենք, գործերի մոտ 37%-ում տեղի է ունեցել ընդամենը մեկ, երկու կամ երեք նիստ:

Չգալի է այն գործերի ծավալը (23.8%), որտեղ նիստերի քանակը եղել է 6 կամ ավելին: Համեմատության համար՝ քաղաքացիական գործերի 31%-ում էր նիստերի քանակը գերազանցում 6-ը:

## Գծապատկեր 12.




Դատարանում գործը վարույթ ընդունելու (գործը Հակակոռուպցիոն դատարանի քննությանը հանձնելուց՝ մինչև գործը վարույթ ընդունելու և/կամ նախնական դատական նիստ անցկացնելու մասին որոշումը) տևողությունը միջինում կազմում է մոտ 32 օր:

Իսկ յուրաքանչյուր գործի քննության տևողությունը (դատաքննությունն նշանակելու պահից՝ մինչև վերջնական դատական ակտի կայացումը) կազմում է մոտ 175 օր կամ շուրջ կես տարի:

Մեղադրյալների հանրային և մասնավոր պաշտպանների հարաբերակցությունը ներկայացված է հաջորդ գծապատկերում, ինչից պարզ է դառնում, որ միայն յուրաքանչյուր 6-րդ մեղադրյալն է ունեցել հանրային պաշտպան:

### Գծապատկեր 13.



Հաջորդ գծապատկերում ներկայացված է քննված բոլոր գործերում քրեական օրենսգրքի հոդվածների տարածվածությունը:

### Գծապատկեր 14.

## Քր. օրենսգրքի հաճախ հանդիպող 10 հոդվածները



Առավել հաճախ հանդիպող հոդվածներն են.


- Հոդված 436. Կաշառք տալը (արարքի որակման հոդվածն է՝ 2021 թ. ընդունված և ներկայումս գործող քրեական օրենսգրքում),
- Հոդված 312. Կաշառք տալը (արարքի որակման հոդվածն է՝ նախկին քրեական օրենսգրքում)<sup>83</sup>,
- Հոդված 326. Պաշտոնական փաստաթղթեր ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը (նախկին քրեական օրենսգրք),
- Հոդված 311. Կաշառք ստանալը (նախկին քրեական օրենսգրք),
- Հոդված 179. Յուրացնելը կամ վատնելը (նախկին քրեական օրենսգրք),
- Հոդված 314. Պաշտոնական կեղծիքը (նախկին քրեական օրենսգրք):

15-րդ գծապատկերը ներկայացնում է քննված բոլոր գործերում կիրառված վարույթների բաշխվածությունը: Գործերի 22.6%-ում որևէ կոնկրետ վարույթի տեսակ չի կիրառվել, մեծ մասը՝ 59.8%-ը քննվել են համաձայնեցման վարույթով և 17.7%-ը՝ արագացված վարույթով:

### Գծապատկեր 15.

<sup>83</sup> Գործերի մի մասում կիրառված են նախորդ՝ 2003 թ. ընդունված և ներկայումս ուժը կորցրած քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների համարները, գործերի մյուս մասում՝ 2021 թ. ընդունված և ներկայումս գործող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների անվանումները: Այս տարբերությունը հավանաբար պայմանավորված է այն հանգամանքով, թե տվյալ գործի նախնական քննության ընթացքում որ օրենսգրքն էր գործողության մեջ գտնվում:

### Կիրառված վարույթների տեսակները




Մեղադրյալների 94%-ի նկատմամբ կայացվել է մեղադրական, 6%-ի նկատմամբ՝ արդարացման դատավճիռ<sup>84</sup>:

Մեղադրյալների 47.4%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

### Գծապատկեր 16.

#### Մեղադրյալների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը



ՀՀ քրեական օրենսգրքի 56-րդ և 57-րդ հոդվածների համաձայն, որպես հիմնական պատիժ կարող են նշանակվել պատժի հետևյալ տեսակները.

<sup>84</sup> Այստեղ դիտարկվել են միայն այն գործերը, որտեղ կամ արդարացման, կամ մեղադրական դատավճիռ է կայացվել: Ներկայացված հաշվարկում ներառված չեն այն գործերը, որոնք կարճվել են: Այդ վիճակագրությունը (ներառյալ կարճված գործերը) հասանելի է վերը հիշատակված կայքում՝ JusticeBarometer.am:

- Հանրային աշխատանքներ,
- Ազատության սահմանափակում,
- Կարճաժամկետ ազատազրկում,
- Կարգապահական գումարտակում պահել,
- Ազատազրկում,
- Ցմահ ազատազրկում,
- Տուգանք,
- Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել,
- Չինվորական ծառայության մեջ սահմանափակում:

Ուսումնասիրված դատական ակտերում կիրառված են եղել նշված ցանկի պատիժներից միայն 5-ը՝ ամբաստանյալների հետևյալ թվաքանակների նկատմամբ.

1. Ազատազրկում – 77,
2. Տուգանք – 60,
3. Կարճաժամկետ ազատազրկում -11,
4. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել – 5,
5. Չինվորական ծառայության մեջ սահմանափակում -1:

Վերաքննիչ բողոք է ներկայացվել 24.7% դեպքերում կամ՝ յուրաքանչյուր 4-րդ մեղադրյալի առնչությամբ: Համեմատության համար՝ քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոք էր ներկայացվել կայացված դատական ակտերի 57%-ի պարագայում:

Դեպքերի մեծ մասում (մոտ 68%) վերաքննիչ բողոք ներկայացնողը դատախազությունն է, 25% դեպքերում՝ մեղադրյալը: Երեք գործով վերաքննիչ բողոք են ներկայացրել և մեղադրյալը, և դատախազությունը:

Դատախազության ներկայացրած վերաքննիչ բողոքներում հատկապես մեծ կշիռ ունեն այն գործերը, որ քննվել են արագացված վարույթի կարգով:

Հետազոտության իրականացման պահին ներկայացված վերաքննիչ բողոքների բացարձակ մեծամասնությունն ընդունվել էր վարույթ, իսկ մի քանի վերաքննիչ բողոքի՝ վարույթ ընդունվելու վերաբերյալ Դատալեքս համակարգում դեռ տեղեկատվություն առկա չէր:

Հետազոտության ավարտի պահին՝ 2024 թ. օգոստոսին, 23 մեղադրյալի առնչությամբ առկա էր վերաքննիչ դատարանի որոշում:

Վերաքննիչ քննության արդյունքում առկա է հայցերի լուծման հետևյալ բաշխվածությունը.

- 19 գործով ստորադաս դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:
- 4 գործով փոփոխվել է ստորադաս դատարանի դատական ակտը:

Վճռաբեկ բողոք է ներկայացվել կայացված վերաքննիչ դատական ակտերից 15-ի առնչությամբ: Դրանց բացարձակ մեծամասնության պարագայում (14 գործ) բողոք ներկայացնողը դատախազությունն էր և միայն մեկ դեպքում՝ մեղադրյալը:

Վարույթ է ընդունվել 7 վճռաբեկ բողոք, 6 բողոք վարույթ ընդունելը մերժվել է: Մյուս վճռաբեկ բողոքների վերաբերյալ տվյալներ առկա չէին:

## Եզրահանգումներ

1. 2022 թ. ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքով Եականորեն ընդլայնվել է կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտների շրջանակը՝ ներառելով ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ոլորտի աշխատակիցներին, ինչը նպաստում է կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակությանը:

2. Նոր քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմի վերացումը կարող է նվազեցնել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումը: Թեև խրախուսական մեխանիզմի՝ նախկինում կիրառվող եռօրյա ժամկետը չափազանց սեղմ էր, սակայն օրենսդրական այդ թերությունը պետք է շտկվեր նշված ժամկետի երկարացմամբ, այլ ոչ թե՛ խրախուսական նորմի ամբողջական վերացմամբ:

3. Քաղաքացիական գործերով հակակոռուպցիոն դատարանի առարկայական ընդդատությունը որոշելիս կարևորություն է տրվում ոչ թե վեճի բնույթին, այլ՝ սուբյեկտային կազմին, այն է՝ պետությանը պատճառված վնասի գործերով դատախազության հայցվոր լինելու հանգամանքին, որպիսի չափանիշի կիրառությունը չունի հետևողական բնույթ և չի հանգեցրել քաղաքականության միասնականության ապահովմանը: Արդյունքում, պետական շահերի պաշտպանության նպատակով դատախազության կողմից վարչական դատարանին ներկայացված գործերը չեն հանձնվել հակակոռուպցիոն դատարանի առարկայական ընդդատությանը: Մյուս կողմից, հակակոռուպցիոն դատարանի ընդդատության հարցերը որոշելիս որևէ կերպ գնահատված չէ դատական վեճերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասնակցության գործոնը:

4. Բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացությունն ստացած դատավորների նշանակումն՝ առանց բարեվարքության արդյունքները հրապարակային դարձնելու, կարող է խոչընդոտել թե՛ հակակոռուպցիոն դատարանների, թե՛ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության ձևավորմանը:

5. Հակակոռուպցիոն վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում որպես դատավորներ ներգրավված են մեծ թվով նախկին դատավորներ, մինչդեռ առաջին ատյանի դատարանում հիմնականում ներգրավված են նախկին դատախազներ և քննիչներ: Դատական համակարգում նախընթաց փորձ ունեցող անձանց (օրինակ, դատավորների օգնականների) թվաքանակը՝ առաջին ատյանի դատավորների կազմում, ևս նկատելի է:

6. Դատական ակտերի հրապարակայնության խնդիրը, հատկապես հակակոռուպցիոն դատարանի դեպքում, լուրջ մարտահրավեր է դատական գործընթացների թափանցիկության ապահովման գործում: Թեև ակտերի հրապարակումը նախատեսված է օրենսդրությամբ, դրանց հասանելիությունը հաճախակի խաթարվում է տեխնիկական խնդիրների պատճառով:

7. Հրապարակված դատական ակտերում պատշաճ ուշադրություն չի դարձվում կողմերի անձնական տվյալների պաշտպանությանը և հաճախ երևում են անգամ անձանց անձնագրային տվյալները:

8. Հակակոռուպցիոն դատարանում, որպես կանոն, գործերի քննության անհարկի ձգձգումներ չեն լինում: Նիստերը հաճախակի են նշանակվում, իսկ դրանց հետաձգումները լինում են հիմնականում օբյեկտիվ պատճառներով:

9. Որոշ դատական գործեր ձգձգվում են ընդհուպ մինչև մեկ տարի, քանի որ դատարանների միջև ծագում են վարույթի առարկայական ընդդատության վեճեր:

10. Քաղաքացիական դատավարության և Քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված վարույթի առարկայական ընդդատության հարցը լուծելու մեխանիզմները կարող են գնահատվել որպես հակասահմանադրական, քանի որ դրանք նախատեսված չեն և չեն բիում «ՀՀ

Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքից: Ընդ որում, վարույթի առարկայական ընդդատության հարցի լուծման արդյունքում կայացված որոշումներն անբողքարկելի են և դրանց քննարկմանը մասնակից չեն դառնում դատավարության կողմերը:

11. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի ծագման օրինականության ուսումնասիրության տասը տարվա ժամանակահատվածի երկարաձգումը՝ մինչև 1991 թվականը, գործնականում խնդիրներ է ստեղծում ապացույցների բացակայության պատճառով: Ուսումնասիրության ժամանակահատվածի ընդլայնումն՝ առանց հստակ հիմնավորման, առաջացնում է իրավական անկանխատեսելիություն և խոչընդոտում է արդար դատաքննությանը:

12. Դատարանների կողմից դատական ակտերում միևնույն (կրկնվող) նախադեպերի կիրառությունը հաճախ ձևական բնույթ ունի: Այն դեպքերում, երբ նախադեպի կիրառության համար հաշվի չեն առնվում գործի փաստական հանգամանքները, կիրառված նախադեպերը պարզապես ծանրաբեռնում են դատական ակտերի տեքստը՝ չձևավորելով հավելյալ արժեք:

13. Հակակոռուպցիոն գործերը հաճախ պահանջում են տնտեսական, ֆինանսական կամ տեխնիկական գիտելիքներ, սակայն ֆինանսատնտեսական փորձաքննություններ նշանակելու միջնորդությունները հակակոռուպցիոն դատարանների կողմից, որպես կանոն, մերժվում են, իսկ հակակոռուպցիոն դատարանները համալրված չեն համապատասխան մասնագետներով:

14. Հաճախ դատարանը որոշում է կայացնում գործը պարզեցված վարույթի կարգով քննելու վերաբերյալ, ինչի մասին պատասխանողը պատշաճ կերպով չի ծանուցվում: Արդյունքում գործը քննվում է առանց պատասխանողի ներկայության և վերջինս այս մասին իմանում է միայն իր դեմ դատական ակտի կայացումից հետո: Վերաքննիչ դատարանը բողոքարկման արդյունքում հաճախ բեկանում է առաջին ատյանի դատարանի վճիռը՝ պատասխանողի՝ պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքով պայմանավորված:

15. Հակակոռուպցիոն դատարանների կենտրոնացվածությունը միայն Երևան քաղաքում խնդիրներ է ստեղծում դատարանների ֆիզիկական հասանելիության և մատչելիության տեսանկյունից:

16. Զրեական գործերի մեծ մասը՝ մոտ 60%-ը քննվել են համաձայնեցման վարույթով և շուրջ 18%-ը՝ արագացված վարույթով: Մեղադրյալների 94%-ի նկատմամբ կայացվել է մեղադրական, 6%-ի նկատմամբ՝ արդարացման դատավճիռ: Մեղադրյալների 47.4%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

17. Դատարանը քաղաքացիական գործերի քննության արդյունքում վճռել է հոգուտ Հայաստանի Հանրապետության պատասխանողներից բռնագանձել պետությանը պատճառված 7,466,886,885 ՀՀ դրամի վնաս: Այսպիսով, վերականգնվող վնասի չափը կազմել է պատճառված վնասի 84.7%-ը (բոլոր գործերով հայցապահանջի ընդհանուր չափը 8,814,588,370 դրամ էր):

18. Զաղաքացիական գործերով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունները, որպես կանոն, հաստատվում են դատարանի կողմից: Մինչ այս պահը դատարանի կողմից չհաստատված հաշտության համաձայնություններ չեն եղել:

19. Հաշտության համաձայնությամբ ավարտված գործերում վերականգնված վնասի չափը բավական մեծ է՝ 2,707,634,065 դրամ, ինչը կազմում է դիտարկված մյուս բոլոր գործերի քննության արդյունքում վերականգնված վնասի շուրջ 36%-ը: Հաշտության համաձայնությամբ գործն ավարտելու պրակտիկան թույլ է տալիս Էականորեն խնայել ինչպես մարդկային ռեսուրսն ու ժամանակը, այնպես էլ՝ բոլոր կողմերի ֆինանսական ծախսերը: Թեև այս հանգամանքները վկայում են հաշտության համաձայնության ինստիտուտի արդյունավետության օգտին, վերջինս դեռևս լայնածավալ կիրառություն չունի: ՀՀ Գլխավոր դատախազության ներկայացուցիչները դա

մեկնաբանում են հիմնականում ապօրինի գույքի ծավալի շուրջ կողմի և դատախազության մոտեցումների տարբերությամբ (անհամաձայնությամբ):

20. Քաղաքացիական գործերում հայցի բավարարման (ամբողջությամբ կամ մասնակի) և հայցի մերժման համամասնությունը գրեթե հավասար է՝ 48% և 49% համապատասխանաբար<sup>85</sup>: Բերված թվերն անուղղակի վկայությունն են այն բանի, որ դատարանը չի առաջնորդվում «մեղադրական մոտեցմամբ» (ինչը հայաստանյան դատական համակարգին ներկայացվող հաճախակի քննադատական տեսակետներից է) և չի բավարարում դատախազության ներկայացրած անխտիր բոլոր հայցերը: Այսպիսով, հակակոռուպցիոն դատարանում քաղաքացիական գործերի քննության ելքերը հավասարակշռված պատկեր են ներկայացնում:

21. Թեև հակակոռուպցիոն դատարանում գործերի քննության ժամկետները համեմատաբար սեղմ են և ողջամիտ ժամկետները հիմնականում պահպանված են, սակայն տևական է դատարանում գործը վարույթ ընդունելու ժամանակահատվածը: Քաղաքացիական գործերի զգալի մասում (38%) գործը վարույթ ընդունելը (վերջնական դատական ակտը կայացրած դատավորի կողմից) տևում է 4 ամսից մինչև 6 ամիս: Նշանակալի է նաև այն գործերի ծավալը (26%), որոնց վարույթ ընդունելու տևողությունն ավելի երկար է՝ կես տարուց մինչև մեկ տարի: Վերջապես, քիչ չէ այն գործերի ծավալը (7%), որոնց վարույթ ընդունելը մեկ տարուց ավելի է տևում:

22. Գործը վարույթ ընդունելու որոշումից՝ մինչև առաջին դատական նիստի նշանակումը, ևս տևական գործընթաց է՝ պայմանավորված կատարողական գործողությունների ձգձգմամբ (կախված է ԴԱՅԿ-ում գույքի նկատմամբ սահմանափակումների կիրառման և կատարողական վարույթների ավարտման ժամկետներից):

---

<sup>85</sup> Պետք է հաշվի առնել, որ այստեղ տարբերակված չէ ապօրինի գույքի բռնագանձման՝ բավարարված կամ մերժված հայցերի վիճակագրությունը՝ հաշվի առնելով նմանատիպ հայցերով ավարտված գործերի սահմանափակ քանակը: Ներկայացված վիճակագրությունը վերաբերում է բոլոր տեսակի հայցերին:



## Առաջարկություններ

1. Վերականգնել կոռուպցիոն գործերով խրախուսական նորմերը՝ ավելի երկարացված ժամկետներով (նախկին եռօրյա ժամկետի փոխարեն նախատեսել ավելի երկար ժամանակահատված): ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել նոր կարգավորում, որի համաձայն, կաշառք տվող անձինք կարող են ազատվել պատասխանատվությունից, եթե իրենց կամավոր ցուցմունքներով նպաստում են կոռուպցիոն սխեմաների և հանցավոր գործողությունների բացահայտմանը:

2. Զննարկման առարկա դարձնել հակակոռուպցիոն դատարանի առարկայական ընդդատությանը հանձնված գործերի շրջանակը և վերանայել գործող չափանիշները՝ ապահովելով դրանց օբյեկտիվ բնույթն ու քաղաքականության միասնականությունը: Զննարկման առարկա դարձնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասնակցությամբ որոշ գործերի՝ հակակոռուպցիոն դատարանում քննության հնարավորությունը:

3. Հստակեցնել դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործընթացի շրջանակում համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին հայց հարուցելու առաջարկի ներկայացման ընթացակարգը: Նպատակահարմար է դատախազության կողմից հայցի հարուցման առաջարկ ստանալուց հետո «ողջամիտ» ժամկետում հայց հարուցելու փոխարեն սահմանել կոնկրետ ժամկետ:

4. Ապահովել բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության ստացած, սակայն դատավորի պաշտոնում նշանակված անձանց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունների հրապարակումը:

5. Դատական գործերի հրապարակայնությունն ու դատական գործընթացների թափանցիկությունն ապահովելու համար արդիականացնել Դատալեքս համակարգը՝ ներդնելով տեխնիկական ռիսկերի կառավարման մեխանիզմներ: Ապահովել դատական ակտերի հրապարակումը և հանրային հասանելիությունը՝ օրենքով նախատեսված ժամկետներում:

6. Ապահովել դատավարության մասնակիցներին առնչվող անձնական տվյալների պաշտպանությունը հրապարակված դատական ակտերում:

7. Քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի՝ վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ վեճերի լուծմանն առնչվող դրույթները փոխարինել նորերով, որոնք կհամապատասխանեն Սահմանադրության պահանջներին և արտացոլված կլինեն «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում: Վարույթի առարկայական ընդդատության հարցի լուծման գործընթացում ապահովել դատավարության կողմերի մասնակցությունը:

8. Իրավական երաշխիքներ և վերահսկողության մեխանիզմներ սահմանել՝ վարույթի առարկայական ընդդատության լուծման խնդիրների պատճառով գործերի քննության անհարկի ձգձգումները բացառելու համար:

9. Ուսումնասիրության առարկա դարձնել հակակոռուպցիոն դատարանի կողմից փորձաքննություններ նշանակելու մասին միջնորդությունների մերժման հիմքերը և հիմնավորումները: Գնահատել միջնորդությունների մերժման ազդեցությունը կողմերի մրցակցայնության վրա:

10. Վերանայել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը՝ այն լիովին համապատասխանեցնելով մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին:

11. Վերանայել ուսումնասիրության տասը տարվա ժամանակահատվածին վերաբերող օրենսդրական կարգավորումը և սահմանել հստակ ու հիմնավոր պայմաններ, որոնց դեպքում ուսումնասիրությունը կարող է սկսվել 1991 թ.-ից:

12. Հստակեցնել հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա քաղաքացիական գործերով հայցային վաղեմության կիրառման ընթացակարգը, մասնավորապես՝ ժամկետների մեկնարկի և ավարտի հաշվարկը, նաև՝ հայց ներկայացնելուց հետո ուսումնասիրության իրականացման իրավական հնարավորությունը (երեք տարվա ժամկետի ավարտից հետո դատարանում ընթացող գործի շրջանակներում ուսումնասիրությունը շարունակելու հնարավորությունը):